1530· Լուտերականները Աւկսպուրկի մէջ կը գծեն իրենց «Հանգանակ հաւատոյ»ն որուն խմբագրութիւնը կը կատարէ Մելանքթոն։ Լուտերականները «Բողոքական» անունը կ'առնեն։

1535· Կալուին կ'սկսի իր անունով կոչուած բողոքական յարանուանութիւն մը քարոզել։

1549· Գերման Կոպերնիկոս աստղաբաշխը կը ճշդէ արեգակնային դրութիւնը։

1561· Բորթուկալի Ֆրանսիսկան դեսպան Նիկոթ Ֆրանսա կը ներմուծէ ծխախոտը որ գտնուած էր Ամերիկայի Թագաքո կղզին։

1567· Արգաբ դպիր Թոքատցին առաջին անգամ Վենետիկի մէջ կը տպագրէ Աղմանը։

1582· Տոմարը կը նորոգուի և Գրիգորեան տոմարը կ'սկսի (Հոկ. 15)։

1609· Կալիլէոս կը գտնէ «ծանրութեան օրէնքը»։

1618· Տրեբել կը հնարէ ջերմաչափը զոր կը կատարելագործէ Ռէօմիւր։

1636· Ռիշլիէոյ կը հիմնէ Ֆրանսական Ակադեմիան։

1643· Թորիչելլի կը փորձէ օդին ծանրութիւնը և կը հնարէ օդաչափը։

1648· Վ.եսդֆալիոյ խաղաղութիւն։
1663· Շոգեշարժ մեքենան կը հնարուի։
1690· Ռուսիոյ ձար Մեծն Պետրոս կը շինէ Ս. Բեդերսպուրկ քաղաքը։
1761· Անգլիա կը տիրէ Հնդկաստանի։
1769· Նաբոլէոն Պոնապարդ կը ծնի Ա.յաչիոյի մէջ (Օգոստ. 15)։
1776· Ֆրանքլին, Ատամ ու Ճերոն Ամերիկեան օրէնդրութիւնը կը խմբագրեն։
1781· Հերշէլ աստղագէտը կը գտնէ Ուրանոս մոլորակը։
1799· Ռուսք Վ.ըռասան կը յարձակին։
1802· Պոնապարդ ցկեանս հիւպատոս կ'ընտրուի (Օգոստ. 2)։
1804· Նաբոլէոն Ա. կայսր կը հռչակուի (Դեկտ. 2)։ — Քաղաքական օրինագրքի հրատարակութիւն։ — Աղագրութիւնը կ'սկսի Ֆրանսայի մէջ։ — Շոգենաւը կը հնարուի։
1815· Վ.ադերլոյի ճակատամարտ (Յունիս 18)։
1820· Նաբոլէոն Պոնապարդ կը մեռնի Ս. Հեղինէ կղզին (Մայիս 5)։
1832· Ֆրանսայի մէջ Լ.ոնէն մինչև Սէնդ-Եդիէն երկաթուղայ փորձ կը կատարուի։ Պուիերայի Ոթոն իշխանը Յունաստանի թագաւոր կ'ընտրուի։
1849· Հեռագիրը կը հնարուի։
1852· Նաբոլէոն Գ. Ֆրանսայի կայսր կ'ընտրուի (Դեկտ. 2)։
1854· Ֆրանսա և Անգլիա կը մասնակցին Օսմանցւոց Ռուսիոյ դէմ մղած պատերազմին։ — Սեւաստարոլի պաշարումը (Հոկտ. 9)։ — Ինքերմանի գրաւումը (Նոյ. 5)։
1855· Բարիզի Ա. ցուցահանդէսը (Մայիս 15.—Նոյ. 15)։ — Սեւաստարոլի առումը (Սեպտ. 8)։
1856· Անգլիացիք կը վերջացնեն Հնդկաստանի տիրապետութեան գործը։
1859· Սոլֆերինոյի ճակատամարտ (Յունիս 24)։ — Վ.իլաֆրանկայի խաղաղութիւնը կը կնքուի (Յուլիս 12)։ Նաբոլէոն Լոմբարտան կը յանձնէ Բիեմոնտի թագաւորին։ Ֆրանսացիք ու Անգլիացիք Զինաստան կ'արշաւեն։
1860· Անգլէֆրանսական բանակը կը յաղթէ Զինաստանի (Օգոստ. 23)։—Բէքին կը մտնեն (Սեպտ.ին)։— Զինաստանի ու Եւրոպայի միջև դաշնագիր կը կնքուի (Հոկտ. 25)։
1861· Իտալիոյ թագաւորութիւնը կ'սկսի։
1864· Բրուսիոյ, Աւստրիոյ ու Տանիմարքայի միջև խաղաղութեան դաշնագիր կը կնքուի (Հոկտ. 30)։

1866· Սատովայի ճակատամարտին մէջ Բրուսիացիք կը յաղթեն Աւստրիոյ (Յուլիս 3)։ — Աւստրիոյ կայսրը Ֆրանսայի կը թողու Վ.ենետիկը (Յուլիս 5)։ Հանովը կը կցուի Բրուսիոյ (Օգոստ. 17)։ Գերմանական դաշնակցութիւնը կը ջնջուի և կը հիմնուի Հիւսիսային դաշնակցութիւնը (Օգոստ. 23)։ Վ.ենետիկ կը կցուի Իտալիոյ (Հոկտ. 14)։ Ֆրանսական բանակը կը հեռանայ Հռոմէն (Դեկտ. 11)։
1867· Կարիպալտի կ'արշաւէ Պապի երկիրները։
1869· Սուէզի ջրանցքը կը բացուի։ — Աւստրիա և Հունգարիա կը միանան։
1870· Ֆրանքֆորտ պատերազմը կ'սկսի (Յուլիս 30)։
1871· Ֆրանքֆորդի դաշնագիր Ֆրանսայի ու Գերմանիոյ միջև (Մայիս 18)։
1872· Ֆրանսա կը վճարէ 5 միլիար ֆրանք պատերազմական տուգանք։
1873· Պուլկարը կը մերժեն ճանչնալ Որդոտոքս Պատրիարքին իրաւասութիւնը։ — Նաբոլէոն Գ. կը մեռնի Անգլիոյ մէջ (Յունուար 9)։ — Թիէր նախագահ կ'ընտրուի Ֆրանսայի (Մայիս 24)։
1879· Եղէքտրական լապտերներու գիւտը։
1880· Հեռախօսի գիւտը։
1881· Զայնագրի գիւտը։
1889· Բարիզի համաշխարհային արուեստահանդէս։
1893· Զիքագոյի համաշխարհային արուեստահանդէս։
1898· Անթել հեռագրի գիւտը։
1898· Թուրքա-հելլենական պատերազմ։
1898· Սպանա-Ամերիկեան պատերազմ։
1899· Անգլա-պոյէր պատերազմ (Հոկտ. 11)։
1900· Եւրոպացիք Զինաստան կ'արշաւեն։
1902· Անգլիանց Մարգինիք կղզոյն Բրլէ հրալեռը կը բորբոքի և կը կործանէ Սէն-Բիէր բազմամարդ քաղաքը (Մայիս 8 ը.ե.)։ — Վերջ անգլա-պոյէր պատերազմին (Մայիս 31)։ Թրանսվալ ու Որանժ Անգլ. գաղթականութիւն կ'ըլլան։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ, ԴՊՐՈՅԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

ՎԵՐՋԻՆ ԴԱՐԵՐՈՒ ՀԱՅ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ՔԱՂՈՒԱԾ

ՅՈՒՆՈՒԱՐ 1. — 1839. Իզմիրի մէջ կը սկսի հրատարակուիլ Շտեմարան հանդէսը։ Դադրած է 1854ին։ — 1851. Բանասէր հանդէսը կը սկսի հրատարակուիլ Յովհաննէս Հիսարեանի ձեռքով։ Դադրած է 1852ին։ — 1851. Սամուէլ Ս. Սահակեան վարժարանի տարեները կը սկսին հրատարակել Բուրաստան հանդէսը։ Դադրած է 1852ին։ — 1857. Տէրոյենց կը սկսի հրատարակել Երեւակ հանդէսը Կ. Պոլսոյ մէջ։ Դադրած է 1866ին։ — 1858. Ստեփաննոս Նազարեանց կը սկսի հրատարակել Հիւսիսափայլ հանդէսը՝ Մոսկուայի մէջ։ Դադրած է 1864ին։ — 1860. Մարկոս Աղաբէգեան կը սկսի Կռունկ հանդէսը հրատարակել Թիֆլիսի մէջ։ Դադրած է 1863ին վերջը։ — 1866. Ծիլն հանդէսը կը սկսի հրատարակուիլ Կ. Պոլիս՝ խմբագրութեամբ Մարկոս Աղաբէգեանի։ Դադրած է 1867ին։ — 1866. Սիսն ամսագիրը կը սկսի հրատարակուիլ Երուսաղէմի միաբանութեան ձեռքով։ Դադրած է 1878ին։ — 1871. Արեւելեան Մամուլ հանդէսը կը սկսի հրատարակուիլ Իզմիրի մէջ։ — 1883. Երկրագուտ նորէն կը հրատարակուի իբր ամսօրեայ հանդէս գրասէր խումբի մը կողմէ, ամսօրէնութեամբ Յակոբ Պարոնեանի որուն յաջորդած է իբր ամսօրէն-խմբագրապետ Եղիա Տէմիրճիպաշեան 1884ին։ Դադրած է 1888ին վերջը։ — 1883. Եղիա Տէմիրճիպաշեան կը սկսի հրատարակել Գրական և Իմաստասիրական հանդէսը, ամփոփելով իր խմբագրութեամբ։ Դադրած է 1888ին։

ՅՈՒՆՈՒԱՐ 2. — 1777. Երեւանցի Սիմէոն Կաթողիկոս կը հրամայէ գործադրութեան դնել իր պատրաստած Նոր Տօնացոյցը։ — 1863. Ստեփան Փափազեան կը սկսի հրատարակել Կ. Պոլսոյ մէջ

ժամանակ հանդէսը։ Դադրած է 1869ին։ — 1868. Մահ Արիստակէս Ալթունեան Տիւրքիի, նախկին պաշտօնատար Եգիպտոսի՝ լեզուագէտ, խմբագիր Եգիպտոսի պաշտօնաթերթին, յետոյ Պոլսոյ մէջ Գերագոյն ժողովի և Պատրիարքարանի ուրիշ ժողովներու գործօն անդամ։ Ծնած է 1804 մարտ 18ին։ — 1884. Արեւելք օրաթերթը կը սկսի հրատարակուիլ Կ. Պոլսոյ մէջ։ — 1899. Նուպար բաշա կը մեռնի Բարիզի մէջ։ Ծնած էր 1825ին։ — 1901. Մատթէոս Մամուրեան, Իզմիրցի գրագէտ ու հրապարակագիր, կը մեռնի 70 տարեկան։

ՅՈՒՆՈՒԱՐ 3. — 1834. Եէտի Գուլէի Հիւանդանոցի հիմնադիր Յարութիւն ամիրա Պէզճեան կը մեռնի Կ. Պոլսոյ մէջ և կը թաղուի Գուլ Դարուի Մայր Եկեղեցին։ Ծնած էր 1771 ապրիլ 10ին։ — 1855. Աւետարեր կը սկսի հրատարակուիլ Կ. Պոլսոյ մէջ։ — 1870. Շահնազարեան վարժարանի աշակերտները Թասգիւղի մէջ կը սկսին հրատարակել Երկրագուտ հանդէսը։ Դադրած է 1871ին։ — 1894. Թասգիւղի աւագերէց Տ. Գէորգ քահանայ Արծրունի, անդամ 1847ի Հոգեւոր Ժողովին, կը վախճանի Կ. Պոլիս, 107 տարեկան։ — 1901. Վիլպասանուհի Տիկին Սրբուհի Տիւսաբ կը մեռնի։ Ծնած էր 1842ին։

ՅՈՒՆՈՒԱՐ 6. — 1758. Գէորգ վարդապետ Մխլոյիմ, Հմուտ հայ, յոյն, լատին լեզուներու, և հեղինակ կրօնական գրուածքներու, կը վախճանի Կ. Պոլիս 77 տարեկան։ — 1830. Հայ հումէականք յատուկ հատարակութիւն մը կը կազմեն «Բաթոլիկ Միլլէթի» անունով։

ՅՈՒՆՈՒԱՐ 9. — 1858. Մահ Մանուէլ բժիշկ Նաշէանի, որ 1775 դեկտ. 26ին ծնած և ԺԹ. դարուն սկիզբները Բատուայի բժշկական համալսարանէն վկայուած է։ Նախապատճառ եղած է 1836ին Բանկալթիի Ս. Յակոբայ անկեղանոցին հիմնարկութեան։

ՅՈՒՆՈՒԱՐ 13. — 1629. Մովսէս Տաթեւացի որ վերանորոգած է Էջմիածինը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս կ'օծուի Էջմիածնի մէջ։ — 1832. Կ. Պոլսոյ առաջին հայ թերթը՝ Լրոյ Դիր Մեծի Տէրութեանն Օսմանեան (Թագվիմ Վաղայի) կը սկսի հրատարակուիլ։ Դադրած է 1833ին — 1888. Գրիգոր Մարկոսեան, 1852ին հրատարակուող Նոյեան Աղաւնի հանդէսին խմբագիրներէն, և 1860ի առաջին Բաղաժողովին ատենապետ, լեզուագէտ և ուսուցչական, կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ։ — 1893. Մահ Սարգիս Կիւլպէնկեանի որ իր եղբօրը՝ Սերովբէ Կիւլպէնկեանի հետ սատարած է Ազգ. Հիւանդանոցի վերաշինութեան, և հիմնած Զոմախլի եկեղեցին, ինչպէս նաև Կեսարիոյ Թալաս գիւղի աղջկանց վարժարանը։ Ծնած էր 1836 յունուար 28ին։

ՅՈՒՆՈՒԱՐ 14. — 1897. Մահ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան անդամ՝ բանասէր Հ. Ղեւոնդ Վ. Յովհաննէսեանի. իր ամէնէն

կարեւոր երկը եղած է ուսումնասիրութիւն մը «Նախնեաց ռամկօրէն»ի վրայ։ Ծնած էր Կ. Պոլիս 1817 հոկտ. 28ին։ — 1902 (Ն. տ. 27)։ Օկիւզ Գարբէր, Ֆրանսացի հայագէտ, ուսուցիչ Բարիզի Արեւելեան լեզուներու վարժարանին, կը մեռնի Բարիզ։ Ծնած էր 1837ին։

ՅՈՒՆՈՒԱՐ 17։—1824։ Մահ Ստեփանոս Ադոնց արքեպիսկոպոսի, մատենագիր, արբահայր Վենետիկի Մխիթարեանց։ Ծնած էր 1740 Նոյեմբեր 20ին։ — 1869։ Կ. Պոլսոյ Պատրիարք Թագիադեան Պօղոս արքեպիսկոպոսի հրաժարականը կ'ընդունուի և Ադրիանուպոլսոյ առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոս Ռափայէլեան Կ. Պոլսոյ Պատրիարքական տեղապահ կը կարգուի։

ՅՈՒՆՈՒԱՐ 20։ — 1838։ Մահ Տ. Անտոն Նուրիճան արքեպիսկոպոսի որ 1830էն ի վեր կը վարէր Հռոմէական Հայոց նախագահի պաշտօնը։

ՅՈՒՆՈՒԱՐ 21։ — 1872։ Պետրոս Դուրեան, բանաստեղծ ու թատերագիր, կը մեռնի 21 տարեկան և կը թաղուի Սկիւտար։ Ծնած էր 1851 մայիս 20ին։

ՅՈՒՆՈՒԱՐ 22։ — 1885։ Մերենցի աղջիկը, Տիկին Թագուհի Մելիք-Աղաբեանց (Օրիորդ Մենիկ), նորահաս գրագիտուհի, կը վախճանի 25 տարեկան։

ՅՈՒՆՈՒԱՐ 24։ — 1826։ Մահ Յովակիմ Լազարեանցի որ իր եղբօրը՝ Յովհաննէս Լազարեանցի կտակը գործադրելով կառուցած է Մոսկուայի Լազարեան Ճեմարանը 1815ին։ Ծնած էր Նոր Ջուղա, 1743 սեպտ. 5ին։

ՅՈՒՆՈՒԱՐ 25։ — 1855։ Կ. Պոլսոյ Պատրիարքարանը պաշտօնական յայտարարութեամբ կ'արգիլէ Ռուսինեանի Ուղղախօսութեան և Տարեցոյցին գործածութիւնը վարժարաններու մէջ, դատապարտելով անոնց նոր լուսկ ոճը և պատուիրելով հայ գրողներուն՝ աշխարհաբարը մշակելու «նախնեաց բուն լեզուին»։ — 1885։ Էրզրումի նախկին առաջնորդ Տ. Յարութիւն արքեպիսկոպոս Վեհապետեան (հիմա Պատրիարք Երուսաղէմի) Կ. Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուի։

ՅՈՒՆՈՒԱՐ 27։ — 1780։ Ռափայէլ տիրացու, նկարիչ, կը մեռնի Կ. Պոլիս։

ՅՈՒՆՈՒԱՐ 28։ — 1837։ Կ. Պոլսոյ Խասքէօյի եկեղեցւոյն մէջ կը մկրտուի Պօղոս Վարժապետեան որ յետոյ եղաւ Ներսէս Պատրիարք Կ. Պոլսոյ։

ՅՈՒՆՈՒԱՐ 29։ — 1846։ Սուքիաս արքեպիսկոպոս Սոմալ, արբահայր Վենետիկի Մխիթարեան միաբանութեան, կը վախճանի։ Ծնած էր 1780 յունուար 24ին։

ՅՈՒՆՈՒԱՐ 31։ — 1858։ Միսաք ամիրա Միսաքեան, սեղանաւոր, որ միջոց մը միւրեվէլլի եղած է Հիւանդանոցի և ազդեցիկ դեր ունեցած է Պատրիարքարանի գործերուն մէջ, կը մեռնի և կը թաղուի Պոյաճը գիւղի իր կառուցած եկեղեցւոյն շրջափակին մէջ։ Ծնած էր 1790ին։ — 1901։ Մխիթարեան Միաբանութեան անդամ, Հ. Գարեգին Զարբհանէլեան, բանասէր, կը վախճանի Վենետիկ։ Ծնած էր Կ. Պոլիս, 1827 Նոյ. 22ին։

ՓԵՏՐՈՒԱՐ 1։ — 1882։ Բացուի Ա. Խիթապի Վարդանեան վարժարանին։

ՓԵՏՐՈՒԱՐ 2։ — 1852։ Կարապետ Իւթիւճեան կը սկսի հրատարակել Կ. Պոլսոյ մէջ Մասիս լրագիրը իր շաբաթեան, աջակցութեամբ Նիկողայոս Զորայեանի։

ՓԵՏՐՈՒԱՐ 3։ — 1840։ Մահ Տ. Յովհան Միրզա Վանանդեցի քահանային, հմուտ հայկաբան և բանաստեղծ, որ գրած է գրաբար ընդարձակ քերթուածներ։ Ծնած էր Վան 1772ին։

ՓԵՏՐՈՒԱՐ 4։ — 1900։ Մահ Յովհաննէս Նուրեանի որ Պատրիարքարանի ժողովներուն մէջ գործօն դեր ունեցած է և վարած Բաղաքական ժողովի ատենապետութեան պաշտօնը։ Ծնած էր 1839ին։

ՓԵՏՐՈՒԱՐ 5։ — 1754։ Մահ Ակնցի Սեղբոս ամիրային որ իր ժամանակին ազդեցիկ դեր ունեցած է Պատրիարքարանի գործերուն մէջ և նշանաւոր դարձած իր բարեգործութիւններով։

ՓԵՏՐՈՒԱՐ 6։ — 1858։ Կոմս Յովհաննէս Լազարեանց, որդի Յովակիմ Լազարեանցի, կը վախճանի։ Պետական խորհրդական և ասիճանաւոր Ռուսիոյ, իր հօր և հօրեղբօր հիմնած Լազարեան Ճեմարանին հոգաբարձու կարգուած է 1815 մայիս 3ին, և այդ պաշտօնը վարած մինչև իր մահը։ Ծնած էր 1786 փետրուար 1ին։

ՓԵՏՐՈՒԱՐ 7։ — 1771։ Դալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին որ հիմնուած էր 1391ին և 1733ին վերստին շինուած հիմէն, կ'այրի։

ՓԵՏՐՈՒԱՐ 8։ — 1886։ Օծուի Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյն որ վաղեմի յունական եկեղեցի մն է, քանիցս այրած և վերաշինուած։

ՓԵՏՐՈՒԱՐ 9։ — 1841։ Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյն նախկին Պատրիարքարանը կ'այրի։ Այստեղ կը նստէին Կ. Պոլսոյ Պատրիարքները Դուռ Գարու փոխադրուելէ առաջ, այսինքն մինչև 1641։ — 1855։ Բացուի Բարիզի Արեւելեան վարժարանին որ յետոյ կոչուեցաւ Հայկազեան վարժարան։

ՓԵՏՐՈՒԱՐ 10։ — 1823։ Հիմնարկութիւն Կ. Պոլսոյ Մայր Եկե-

ղեցւոյն որ այրած էր 1826ին և որ նորէն կառուցուեցաւ Պէզճեան Յարութիւն ամիրայի ջանքով և նպաստով։ — 1886· Մահ Սերովբէ Կիւլպէնկեանի, հոգաբարձու Հիւանդանոցին, տեղեկապետ Սովէլոց Յանձնաժողովին։ Իր եղբօրը Սարգիս Կիւլպէնկեանի հետ ստեղծած է Հիւանդանոցի վերաշինութեան և հիմնած Զոմախլրի եկեղեցին, ինչպէս նաև կեսարիոյ Թալաս գիւղի աղջկանց վարժարանը։ Ծնած էր 1833ին։— 1900· Մահ Երուսաղէմի միաբան Աստուածատուր եպիսկոպոս Յովհաննէսեանի, պատմագիր Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան։

ՓԵՏՐՈՒԱՐ 11· — 1841· Կ. Պոլսոյ Պատրիարք Ամեն. Տ. Մաղաքիա Օրմանեան կը ծնի Կ. Պոլիս, Բերա։ — 1874· Կ. Պոլսոյ Պատրիարքական տեղապահ Նիկողոս եպիսկոպոս կը վախճանի 48 տարեկան և կը թաղուի Գուրուչէշմէի եկեղեցւոյն բակը։

ՓԵՏՐՈՒԱՐ 12· — 1721· Գրիգոր Նղիծեանցիներ որ 1715ին Պատրիարք կարգուած էր Երուսաղէմի, վանքին մեծաքանակ պարտքը վճարելու համար՝ վիզէն շղթայ անցուցած տարիներով նպաստ հաւաքելէ ետքը կը հասնի Երուսաղէմ, և կը բաղմի Պատրիարքական աթոռը։ Միաբանութեան պարտքը վճարած, նոր շինութիւններ բրած և բարեկարգութիւններ մուցուցած է Ս. Յակոբայ վանքին մէջ։ Վախճանած է 1749ին։

ՓԵՏՐՈՒԱՐ 13· — 1741· Կ. Պոլսոյ Պատրիարք Յովհաննէս Կոլոտ կը վախճանի և կը թաղուի Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին։ Պատրիարք ընտրուած էր 1715ին։—1857· Մահ Նեբսէս Ե. Աշտարակեցի Կաթողիկոսին որ ծնած էր Երևանայ մօտ, Աշտարակ գիւղին մէջ, 1771 օգոստոս 13ին։ — 1873· Գիշերօթիկ վարժարան հաստատուելով Արմաշու վանքին մէջ, բացման հանդէսը տեղի կ'ունենայ։

ՓԵՏՐՈՒԱՐ 14· — 1706· Աւետիք Պատրիարք Եւդոկիացի կը հրաժարեցուցուի Պոլսոյ Պատրիարքական աթոռէն։

ՓԵՏՐՈՒԱՐ 15· — 1741· Յակոբ վարդապետ Նալեան Կ. Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուի։ — 1830· Հռոմէական Հայերը ժողով կը գումարեն Կ. Պոլիս, Ֆենէր թաղը և նախագահ կ'ընտրեն Նուբիճեան Անտոն վարդապետը։

ՓԵՏՐՈՒԱՐ 16· — 1884· Մահ Տ. Անտոն կարդինալ Հասունեանի, նախկին Պատրիարք Հռոմէական Հայոց։ Ծնած էր Կ. Պոլիս 1809 յունիս 1ին։

ՓԵՏՐՈՒԱՐ 17· — 1888· Մահ Ծերենցի (Տոքթ. Յովսէփ Շիշմանեան) Թիֆլիսի մէջ, վիպասան և հրապարակագիր, ուշագրաւ տեղ մը գրաւած է Հայ գրականութեան մէջ։ Ծնած էր Կ. Պոլիս 1822 սեպտ. 16ին։

ՓԵՏՐՈՒԱՐ 18· — 1887· Մահ Հերման Կուսաբշմիդի (Նոր Տոմար 2 մարտ), գերմանի գիտնական, որ զբաղած է Հայ հնախօսութեամբ։ Ծնած էր 1831ին։

ՓԵՏՐՈՒԱՐ 19· — 1854· Մահ Մխիթարեան հմուտ միաբան Հ. Մկրտիչ Աւգերեանի որ Հայկազեան Բառարանին երեք հեղինակներէն մէկն է և թողած է ուրիշ կարեւոր աշխատասիրութիւններ ալ։ Ծնած էր 1762ին։ — 1889· Ստեփաննոս Պալասանեան, ռուսահայ նշանաւոր ուսուցիչ, բանաստեղծ և պատմագէտ և քննադատ, կը մեռնի Էջմիածնի մէջ։

ՓԵՏՐՈՒԱՐ 21· — 1851· Կ. Պոլսոյ Պատրիարքարանին մէջ եկեղեցականներ, ամիրաներ և ուսումնականներ ժողով կը գումարեն քննելու համար թէ Շահնազարեան Կարապետ վարդապետ որ 1850ին Պոլիս եկած էր, իրապէս Հայ. Եկեղեցւոյ դաւանութեան հակառակ կարծիքներ յայտնած է, ինչպէս կը պնդէին գլխաւորաբար Տէրոյենց պատուելին և Յովհաննէս եպիսկոպոս Սեթեան։ Ժողովը Շահնազարեան վարդապետին նպաստաւոր որոշում կուտայ։ — 1902· Աղեքսանդր Երէցեան, ռուսահայ բանաստեղծ, կը մեռնի Թիֆլիս։ Ծնած էր 1841 հոկտ. 4ին։

ՓԵՏՐՈՒԱՐ 22· — 1837· Հանդիսաւոր բացում Էջմիածնի Սինոդին, Պոլժենիայի հաստատութենէն ետքը։

ՓԵՏՐՈՒԱՐ 23· — 1631· Հայերը օրինական կալուածագրով կը տիրանան Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն որ յունական վանքի մատուռ մըն էր։ — 1860· Եղիշէ եպիսկոպոս Դուրեան, կը ծնի Ակիտար։ — 1861· Տ. Մարգար քահանայ Միրզա Վանանդեցի, հայագէտ ուսուցիչ, որդի Վանանդեցի Տ. Յովհան Միրզա քահանայի, կը վախճանի Իզմիրի մէջ։ — 1872· Տատեան Յովհաննէս պէյ որդի Ներսէս պէյ որ ունի քանի մը գրուածներ, կը մեռնի։ — 1901· Սահակեան Ոսկան, գրագէտ, հրապարակագիր, կը մեռնի Իզմիրի մէջ։ Ծնած էր Իզմիր 1825ին։

ՓԵՏՐՈՒԱՐ 24· — 1853· Կարապետ ամիրա Աղնաւուրեան, սեղանաւոր, կը վախճանի 108 տարեկան։ ԺԹ. դարու առաջին կէսին ազդեցիկ դեր ունեցած է Պատրիարքարանի գործերուն մէջ, Հայ հասարակութեան կարեւոր ծառայութիւններ մատուցանելով։

ՓԵՏՐՈՒԱՐ 25· — 1584 Ազարիա եպիսկոպոս Ջուղայեցի Կիլիկիոյ կաթողիկոս կ'ընտրուի. 1591ին Պատրիարք եղած է Կ. Պոլսոյ։ — 1886· Գրիգոր վարդապետ Էնֆիէճեան, Հակահաստատական կուսակցութեան վարիչներէն, հրապարակագիր և քարոզիչ, կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ։

ՓԵՏՐՈՒԱՐ 26. — 1799. Մահ Ֆրանսացի Հայագէտ Սիմոն Լուբոտէի (Ն. Տ. 9 մարտ) որ 1785-86ին մէկուկէս տարի Վենետիկ Ս. Ղազարու վանքը բնակած և ուսումնասիրած է Հայ լեզուն։ Ծնած էր 1729ին։ — 1899. Յարութիւն ՄերեէմԳիւլի, Պատրիարքարանի ժողովներուն գործօն և խօսուն անդամ, քանիցս ատենապետ, կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ։ — 1900. Յորելեան ռուսահայ Սեդրաք Մանդինեանի քսանըհինգամեայ մանկավարժական գործունէութեան։

ՓԵՏՐՈՒԱՐ 27. — 1726. Ուշնեցի Կարապետ եպիսկոպոս Էջմիածնի Կաթողիկոս կ'օծուի Կ. Պոլսոյ մէջ, և հետեւեալ օրը եպիսկոպոս կը ձեռնադրէ Յովհաննէս Կոլոտ վարդապետը որ տասնըմէկ տարիէ ի վեր Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքն էր արդէն։ — 1858. Մահ Նիկողոս Պայեանի, արքունի ճարտարապետ. տաղանդաւոր արուեստագէտ, հմուտ էր հայ և օտար դպրութեանց։ Ծնած էր 1826 Նոյեմբեր 19ին։

ՓԵՏՐՈՒԱՐ 28. — 1852. Սահակ Ապրօ և Գրիգոր Մարկոսեան կը սկսին հրատարակել Կ. Պոլսոյ մէջ Նոյեան Աղաւնի հանդէսը։ Դադրած է 1853ին։— 1847. Աբիսողոմ Իւթիւճեան, առաջին երէց Բաղրամեան Հայոց, կը մեռնի. ձեռնադրուած էր 1846 յունիսին։

ՄԱՐՏ 4. — 1832. Աբքունի վարդապետ Սիմոն ամիրա Տատեան, հայր Տատեան Պօղոս պէյի և եղբայր Տատեան Յովհաննէս պէյի, կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ։ Շինած է Ա.յ-Սթեփանոյի Ս. Սարգիս եկեղեցին։

ՄԱՐՏ 5. — 1870. Մահ Ֆրիտրիխ Նայման գերման հայագէտին (Ն. Տ. 17 մարտ) որ ծնած էր 1790ին։ Անգլիերէնի և գերմաներէնի վերածած է հին հայ մատենագիրներու քանի մը երկերը։

ՄԱՐՏ 6. — 1857. Մահ Ռուբէն Անդրէաս Բարազանի, հայկաբան և լեզուագէտ։ ԺԹ. դարուն սկիզբները Խարիսխ կրթուած, Իզմիրի Ս. Մեսրոպեան վարժարանին արդիւնաւոր ուսուցիչը եղած է 26 տարի։ Ծնած էր 1806 ապրիլ 11ին։

ՄԱՐՏ 8. — 1892. Սրապիոն Հէքիմեան, բանաստեղծ և լեզուագէտ, կը մեռնի Կ. Պոլսոյ մէջ։ Գրած է տաղեր և թատերգութիւններ։ Ծնած էր 1832ին։ — 1899. Սուրհանդակ օրաթերթը կը սկսի հրատարակուիլ։ — 1900. Գէորգ պէյ Երամեան, նախկին սեղանաւոր Եգիպտոսի Խեդիվին, անդամ Գերագոյն ժողովին և ապա Բաղրամեան ժողովին, կը վախճանի Բարիզի մէջ։ Ծնած էր 1816ին։

ՄԱՐՏ 9. — 1889. Մահ ռուսահայ ուսուցիչ և կրօնական գիրքերու հեղինակ Պետրոս Շանշեանցի։ Ծնած էր 1819 օգոստոս 13ին։

ՄԱՐՏ 10. — 1801. Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանց որ կաթողիկոս ընտրուած էր, Էջմիածին գացած պահուն Թիֆլիզի մէջ կը վախճանի՝ գեռ չօծուած։ — 1898. Տիգրան Զուխաճեան, հայ երաժշտագէտ որ հեղինակած է չորս օրերգ և զանազան երաժշտական հատուածներ, կը մեռնի Իզմիրի մէջ։

ՄԱՐՏ 11. — 1709. Ագաթանգեղոս կը սկսի տպագրուիլ առաջին անգամ, Կ. Պոլիս, Գրիգոր դպրի տպարանին մէջ, Աստուածատուր վարդապետի ջանքով։—1799. Մահ Կ. Պոլսոյ Պատրիարք Կաղզուանցի Զաքարիա Փոգուլեան արքեպիսկոպոսին։ Ծնած էր 1719ին։— 1836. Ռուս կառավարութիւնը կը հաստատէ Պոլժենիան որ օրէնքն է Ռուսիոյ մէջ Հայ. Եկեղեցւոյ վարչական գործերուն։

ՄԱՐՏ 13. — 1839. Սահակ Աղաւնի Պատրիարք Կ. Պոլսոյ որուն օրով շինուած են Եէնի Դուլէի Հիւանդանոցը և Կ. Պոլսոյ եկեղեցիներէն մանք, կը քաշուի իր առաջին Պատրիարքութենէն և իրեն կը յաջորդէ Ամասիոյ առաջնորդ Յակոբոս Սերոբեան Պատրիարք։ — 1891. Պետրոս Մաղաքեան, ճարտար դերասանապետ, կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ։

ՄԱՐՏ 15. — 1891. Խաչատուր Միսաքեան, նշանաւոր գրագէտ, կը վախճանի Սկիւտար, 80 տարեկան։

ՄԱՐՏ 16. — 1831. Յովհաննէս Կարբեցի Կաթողիկոս կ'ընտրուի Էջմիածնի մէջ։ Իր օրով հաստատուած է Պոլժենիան։ — 1888. Սահակ Բարազեան, ծանօթ ուսուցիչ և հեղինակ, խմբագիր ժամանակի, կը վախճանի Կ. Պոլիս։ Գործօն դեր մը ունեցած է Պատրիարքարանի ժողովներուն մէջ։

ՄԱՐՏ 17.— 1799 Դանիէլ եպիսկոպոս Սուրմաւեցի Պատրիարք կ'ընտրուի Կ. Պոլսոյ։

ՄԱՐՏ 18. — 1849. Մահ Միքայէլ ամիրա Բիշմիշեանի, սեղանաւոր, առաջին միւրեվելլի Հիւանդանոցին։ Նորոգած է Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցին։ Ծնած էր Ակնայ Ապուչէխ գիւղը, 1788ին։

ՄԱՐՏ 20. — 1700. Երուսաղէմի Պատրիարք Մինաս արքեպիսկոպոս Նարեկը տպագրել կու տայ Կ. Պոլիս, Աստուածատուրի տպարանին մէջ։ Նարեկի ամբողջական առաջին տպագրութիւնն է այս։ — 1784. Մահ Նիկոմիդիոյ առաջնորդ Ղափանցի Պետրոս եպիսկոպոսի, բանաստեղծ և ռամկաբան երգիչ։

ՄԱՐՏ 21. — 1615. Ազարիայի փոքր թուականը կ'սկսի։ — 1714. Յովհ. վրդ. Գանձակեցի Կ. Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուի։ — 1763.

Մահ Շամախեցի Յակոբ Ե. Կաթողիկոսին որ 1759ին բազմած էր Էջմիածնի աթոռը։

ՄԱՐՏ 22. — 1793. Ղազար Փարպեցի առաջին անգամ կը սկսի տպագրուիլ Վենետիկի մէջ։ — 1878. Թորոս Նաղաշեան, հայագէտ, բազմարդիւն ուսուցիչ, կը վախճանի Կ. Պոլիս 47 տարեկան։

ՄԱՐՏ 24. — 1777. Մահ Կիլեմ Վիլիքրուա Ֆրանսացի հայագէտին (Ն. Տ. 4 ապրիլ) որ կարեւոր ուսումնասիրութիւններ հրատարակած է հին հայ ձեռագիրներու վրայ։ Ծնած էր 1690ին։

ՄԱՐՏ 25. — 1655. Փիլիպպոս Կաթողիկոս Աղբակեցի կը վախճանի Էջմիածին. ընտրուած էր 1633 յունուար 13ին։ — 1809. Մահ Արմաշու և Նիկոմիդիոյ առաջնորդ Բարթուղիմէոս արքեպիսկոպոս Կապուտիկեանի որ Նորէն շինած է Արմաշու վանքը կանոնաւոր միաբանութիւն և ուսումնարան հաստատելով հոն։ Ծնած էր 1749ին և առաջնորդ եղած 1786ին։

ՄԱՐՏ 26. — 1750. Սահակ Մելքոնեան կ'ընտրուի Արբահայր Վենետիկի Մխիթարեանց, յաջորդելով Մխիթար Աբբայի, և այդ պաշտօնը կը վարէ մինչև 1800։ Իր օրով 1773ին, մաս մը միաբաններ զատուեցան Վենետիկի Մխիթարեաններէն և Թրիէսթի հաստատեցին անջատ միաբանութիւն մը որ 1811ին Վիեննա փոխադրուեցաւ։ — 1842. Յովհաննէս Ը. Կարբեցի Կաթողիկոս կը վախճանի Էջմիածնի մէջ։ Ծնած էր 1761 մարտ 23ին։

ՄԱՐՏ 27. — 1902. Գրիգորափոր Կարա Մուրզա, ռուսահայ երաժիշտ, կը մեռնի Թիֆլիս։

ՄԱՐՏ 28. — 1879. Նշանաւոր հրապարագիր Վարդան բաշա (Յովսէփ Վարդանեան) կը վախճանի։ Ծնած էր Կ. Պոլիս 1816 սեպտ. 26ին։

ՄԱՐՏ 30. — 1751. Ղազար Ջահկեցի Կաթողիկոսը կը վախճանի. ընտրուած էր 1737ին։

ՄԱՐՏ 31. — 1782. Զաքարիա Կաղզուանցի երկրորդ անգամ կ'ընտրուի Պատրիարք Կ. Պոլսոյ։ — 1863. Առաջին պատարագը կը մատուցուի Մանչէսթրի նորահաստատ հայ մատուռին մէջ, Կարապետ վարդապետ Շահնազարեանի կողմէ։ — 1902. Իզմիրի Հիւանդանոցի հիմնադրութեան հարիւրամեայ յոբելեանը կը տօնուի։

ԱՊՐԻԼ 1. — 1861. Մկրտիչ ամիրա Ճէզայիրլեան, սեղանաւոր, հիմնադիր Խարբէրդի Ներսէսեան վարժարանին, կը վախճանի և կը թաղուի Խարբէրդ։ Ծնած էր 1805ին։

ԱՊՐԻԼ 2. — 1860. Սարգիս Միրզա Վանանդեցի կը սկսի հրատարակել Իզմիրի մէջ կիսամեայ հանդէս մը։ Դադրած է քիչ ժամանակէն։ — 1889. Բրոֆէսէօր Գերովէ, ռուսահայ հմուտ բանասէր և հնագէտ որ 1858էն ի վեր հայ լեզուի ուսուցիչ էր Բեթերսպուրգի համալսարանին մէջ, կը վախճանի։ Գրած է հնախօսական ուշագրաւ երկեր։ Ծնած էր 1833 մայիս 4ին, Նոր Նախիջեւանի մէջ։

ԱՊՐԻԼ 3. — 1845. Տ. Անտոն արքեպիսկոպոս Հասունեան Հռոմէական Հայոց նախագահ կ'ընտրուի։

ԱՊՐԻԼ 4. — 1820. Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Մկրտիչ Ա., Կաթողիկոս ամենայն Հայոց, կը ծնի Վանայ մէջ։

ԱՊՐԻԼ 5. — 1628. Գառնեցի Մելքիսեդեկ Կաթողիկոս կը վախճանի Կամենիցց։ — 1880. Մկրտիչ Միանասարեանց որ ունի ռուսերէն և հայերէն զանազան գրուածներ, կը վախճանի 51 տարեկան։

ԱՊՐԻԼ 6. — 1853. Սահակ Սեբաստիոս արքեպիսկոպոս Աղաւնի առաջնորդ Արմաշու որ երկերգս Կ. Պոլսոյ Պատրիարքը եղած և վերջին անգամ 1841ին հրաժարած էր, 80 տարեկան կը վախճանի Նիկոմիդիոյ մէջ, թաղուած է Նիկոմիդիոյ Մայր-եկեղեցւոյն գաւիթը։ — 1888. Սկզբնաւորութիւն Ս. Էջմիածնի Մայր Տաճարին նորոգութեան, և հիմնարկութիւն նոր տպարանին։

ԱՊՐԻԼ 7. — 1845. Հրամայուեցաւ Թուրքիոյ հայ եպիսկոպոսներուն և վարդապետներուն կրել սեւ ու մանիշակագոյն թաւիշէ փակեղ և հայ քահանաներուն՝ սեւ չուխայէ։ — 1864. Մահ Կարապետ Գալուստեանի, Վանեցի վաճառական, որ կառուցած է Գահիրէի թաղ. վարժարանը 1848ին, և ընդարձակ հողեր կտակած է անոր իբր կալուած։

ԱՊՐԻԼ 8. — 1655. Յակոբ Դ. Ջուղայեցի ամենայն Հայոց Կաթողիկոս կ'օծուի Ս. Էջմիածին։ — 1880. Գարբիէլ արքեպիսկոպոս Այվազովսքի, հմուտ պատմագրաց և լեզուագէտ, կը վախճանի Թիֆլիսի մէջ։ Բազմաթիւ կարեւոր երկեր։ Ծնած էր 1812 մայիս 10ին Թէոդոսիոյ մէջ։

ԱՊՐԻԼ 9. — 1812. Տիւզեան Յովհաննէս Զէյթի, տեսուչ արքունի փողերանոցին, կը վախճանի։ Նիւթապէս սատարած է հայ դպրութեանց։ Ծնած էր 1749 ապրիլ 24ին։ — 1845. Տատեան Յովհաննէս պէյ մատուցած խնդրանքամբ Երջանկայիշատակ Սուլթան Ապդուլ-Մէճիտ Կայսրը Իզմիրի չուխայի նորահաստատ գործարանը գտնուած միջոցին, կը բարեհաճի հրամայել որ օրական 37½ օխա հացի պետական պարէն յատկանայ Հիւանդանոցին։ — 1892. Յոբելեան Սմբատ Շահազիզեանի մանկավարժական և գրական երես-

նամեայ գործունէութեան։ — 1893· Տիկին Եպրու Երամեան Գարա-քէհեա որ գլխաւոր գործիչն էր Հիւանդանոցի Տիկնանց 1860ին կազմուած առաջին Խնամակալութեան, կը մեռնի Բարիզ։

ԱՊՐԻԼ. **10**· — 1764· Եղիշէ առաջին անգամ կը սկսի տպագրուիլ Կ. Պոլիս, Աստուածատուրի տպարանին մէջ, Էջմիածնի միաբան և Իզմիրի նախկին առաջնորդ Աբրահամ վարդապետի ծախքով։ — 1812· Սողոմոն Մալան, անգլիացի հայագէտ, կը ծնի (Ն. Տ. 22 ապրիլ)։ Կարևոր ուսումնասիրութիւններ հրատարակած է Հայ. Եկեղեցւոյ պատմութեան, դաւանութեան և ծէսերու մասին։

ԱՊՐԻԼ. **11**· — 1876· Մահ Գէորգ արքեպիսկոպոս Հիւրմիւզեանի, Աբրահայը Վենետիկի Մխիթարեանց։ Թարգմանած է կարևոր երկեր։ Ծնած էր Կ. Պոլիս 1797 Նոյ. 11ին։

ԱՊՐԻԼ. **12**· — 1900· Օսեայի մէջ կը վախճանի Շամախեցի Ենովք Բուդաղեան, ռուսահայ վաճառական, որ 655,000 բուպլի կտակած և 90,000 բուպլի ի կենդանութեան նուիրած է (ընդամէնը գրեթէ 82,000 օսմ. ոսկի) զանազան բարենպատակ հաստատութեանց։

ԱՊՐԻԼ. **13**· — 1878· Մահ տիրացու Արիստակէս Յովհաննէսեանի, նշանաւոր երաժիշտ, որ 40 տարիի չափ դասախօսած է Կ. Պոլիս, բազմաթիւ երաժիշտ աշակերտներ հասցնելով։ — 1884· Յովսէփ Իզմիրեանց կը կտակէ 20,000 բուպլի որուն կէսը յատկացած է իրը դրամագլուխ Իզմիրեանց գրական մրցանակին, և միւս կէսին տոկոսը սահմանուած է Էրզրումի կամ Մշոյ աղջկանց վարժարանին։

ԱՊՐԻԼ. **14**· — 1891· Վահան Էֆէնտի (Յովհաննէս Վահանեան), օրէնագէտ, երկար տարիներ դատական նախարարութեան խորհրդական, կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ։

ԱՊՐԻԼ. **16**· — 1749· Մահ Մխիթար Աբրոյ Սեբաստացւոյ, հիմնադիր Մխիթարեան Միաբանութեան, որ թողած է ատատուածաբանական և ուսումնական գրուածներ։ Ծնած էր 1676 փետր. 7ին։ — 1891· Մահ Մակար Կաթողիկոսի, Էջմիածնի մէջ։ Ծնած էր 1813 ապրիլ 6ին Պուլանրխի Թեղուտ գիւղը։

ԱՊՐԻԼ. **17**· — 1843· Ներսէս Ե. Աշտարակեցի Կ՚ընտրուի Կաթողիկոս Այնտեղի Հայոց։

ԱՊՐԻԼ. **18**· — 1737· Մահ Կրետացի Աբրահամ Բ. Կաթողիկոսին որ օծուած էր 1734 Նոյեմբեր 24ին։ — 1869· Տատեան Յովհաննէս պէյ, արքունի վաստակաւոր բարերար Հիւանդանոցին, կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ։ Ծնած էր 1798 փետրուար 14ին։ — 1899· Ռուսահայ ծանօթ վիպագիր Պերճ Պռոշեանցի բառանամեայ գրական գործունէութեան յոբելեանը կը տօնուի Թիֆլիսի մէջ։

ԱՊՐԻԼ. **19**· — 1843· Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւնը կը սկսի հրատարակել Բազմավէպ հանդէսը (Ն. Տ. մայիս 1) — 1880· Տ. Երեմիա աւագ քահանայ, հանրածանօթ տոմարագէտ, կը վախճանի Խարբերդի մէջ։ — 1899· Մահ Տ. Ստեփան Ազարեան Պատրիարքին Հռովմէական Հայոց։ Ծնած էր 1826 դեկտեմբեր 19ին և ընտրուած 1881 յունիս 24ին։

ԱՊՐԻԼ. **20**· — 1816· Մահ Հնդկահայ Սամուէլ Մուրատի որուն կտակած դուսմբով Մխիթարեանք հիմնած են Մուրատեան վարժարանը, հիմնոյ միացած Ռափայէլեան վարժարանին՝ Մուրատ-Ռափայէլեան անունով։ Ծնած էր Թոքատ, 1760 օգոստոս 6ին։ — 1900· Խրիմի մէջ կը մեռնի հանրածանօթ ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսքի։ Ծնած էր 1817 յուլիս 17ին։

ԱՊՐԻԼ. **21**· — 1860· Կ. Պոլսոյ Պատրիարք Գէորգ արքեպիսկոպոս հրաժարի։ — 1878· Զաքէն Խոճասարեան, ծանօթ հրապարակագիր Օրագիրի, կը վախճանի Սամսմիրոյ մէջ, 45 տարեկան։ — 1878· Մահ Ֆրանսացի հայագէտ Էօժէն Պորէի որ ծնած էր 1809ին, Ֆրանսերէնի թարգմանած է հին հայ մատենագրութենէն հատուածներ։

ԱՊՐԻԼ. **22**· — 1704· Ներսէս եպիսկոպոս Պալանցի կ՚ընտրուի Պատրիարք Կ. Պոլսոյ։ — 1868· Գրիգոր Աղամեան, տաղանդաւոր մտաւորական, լեզուագէտ, պաշտօնեայ Օսմ. Պետութեան, կը վախճանի Բարիզի մէջ, Թուրքիոյ հանրային շինութեանց նախարար ընտրուելէ քիչ եաթը։ Ունի ֆրանսերէն դիտական գրուածներ։ Մասնակցած է Պատրիարքարանի ժողովներուն։ Ծնած էր 1823 յուլիս 4ին։ — 1874· Յարութիւն Սվաճեան, երգիծարան, խմբագիր Մեղու ծաղրաթերթին, կը վախճանի 43 տարեկան։

ԱՊՐԻԼ. **23**· — 1858· Ղարարաղի Շուշի քաղաքին մէջ գտնուող Ամարասու վանքին նոյնութեան պահուն, Ս. Գրիգոր Լուսաւորչի թոռ Ս. Գրիգորիս Աղուանից կաթողիկոսի գերեզմանը և նշխարները կը գտնուին։ — 1890· Վիթիթորիոյ Էմմանուէլէ, թագաժառանգ, այժմ թագաւոր Իտալիոյ, Ս. Էջմիածին կ՚այցելէ։

ԱՊՐԻԼ. **24**· — 1871· Մահ Յարութիւն Խալիպեանի, հիմնադիր Թէոդոսիոյ Խալիպեան ուսումնարանին։

ԱՊՐԻԼ. **25**· — 1861· Զաքրասոճեան Գէորգ պատուելի, հայկաբան, ծանօթ ուսուցիչ, կը վախճանի Հիւանդանոցին մէջ։ — 1888· Բեռերսբուրգի և Մոսկուայի հայ եկեղեցիներու հոգաբարձու Սիմէոն Աբամելիք Լազարեանց կը վախճանի։

ԱՊՐԻԼ. **26**· — 1798· Յովհան քահանայ Միրզա Վանանդեցի ուսուցիչ կը կարգուի Իզմիրի հայ վարժարանին։ — 1871· Մահ Իզմիրցի

հրապարակագիր Սարգիս Միրզա Վանանդեցւոյ։ — 1874. Ներսէս եպիսկ. Վարժապետեան Կ. Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուի։

ԱՊՐԻԼ 27. — 1879. Բրոֆէսէօր Ստեփաննոս Նազարեանց, ռուսահայ մատենագիր, խմբագիր Հիւսիսափայլ հանդէսին և արարերէնի ու պարսկերէնի ուսուցիչ Լազարեան Ճեմարանին մէջ, կը վախճանի Մոսկուա։ Ծնած էր 1810ին։

ԱՊՐԻԼ 28. — 1801. Դաւիթ եպիսկ. Ղորղանեան բռնութեամբ ինքզինքը կաթողիկոս օծել կուտայ Էջմիածնի մէջ։ — 1869. Ռուսիոյ կայսեր եղբայր Կոստանդին մեծ դուքսը, կ'այցելէ Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքը։

ԱՊՐԻԼ 29. — 1878. Պարսից Նասրէտտին Շահը կ'այցելէ Ս. Էջմիածին։ — 1888. Մահ Յովհաննէս Ստեփանոս Յովնանեանցի, հիմնադիր Թիֆլիսի Յովնանեան աղջկանց վարժարանին։

ՄԱՅԻՍ 1. — 1705. Բերա, Պերոսի տպարանին մէջ, երկրորդ անգամ կը սկսի տպագրուիլ Սուրբ Գիրքը (Հին և Նոր Կտակարան), որուն առաջին տպագրութիւնը կատարած էր Ոսկան վարդապետ 1668, Ամստերդամ։ — 1788. Ներսէս Շնորհալոյ Ընդհանրականը առաջին անգամ կը սկսի հրատարակուիլ Բեղերպուրկ, Գրիգոր Թոջամարեանի տպարանին մէջ։ — 1850. Աբրահամ Մուրատեան, տասնը-եօթնամեայ պատանի, Իզմիրի մէջ կը սկսի հրատարակել շաբաթաթերթ մը զոր ինք կը խմբագրէր, կը շարէր և կը տպէր առանց մամուլի։ — 1868. Էջմիածնի Արարատ կրօնաթերթը կը սկսի հրատարակուիլ։ — 1872. Ռուսահայ բանաստեղծ Պետրոս Մատաթեանց (Սեյեան) կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ։ Ծնած էր 1810ին։

ՄԱՅԻՍ 2. — 1767. Կ. Պոլսոյ Պատրիարք Գրիգոր վարդապետ արտօնութիւն խնդրած բլլալով Երեւանցի Սիմէոն կաթողիկոսէն՝ Կ. Պոլիս գտնուող եպիսկոպոսներու ձեռամբ եպիսկոպոս ձեռնադրուելու, կաթողիկոսը կը գրէ անոր որ Հայ. Եկեղեցւոյ օրէնքները չեն ներեր տալ խնդրուած արտօնութիւնը։ — 1860. Աղբիանուպոլսեցի Սարգիս եպիսկոպոս կ'ընտրուի Պատրիարք Կ. Պոլսոյ։ — 1869. Մահ նշանաւոր հայագէտ Վիքթոր Լանկլուայի (Ն. Տ. Մայիս 14) որ Տիբրի մէջ ծնած էր 1829 մայիս 8ին։ Հրատարակած է հին հայ մատենագիրներու թարգմանութիւններ և կարեւոր ծառայութիւններ մատուցած հայ բանասիրութեան։

ՄԱՅԻՍ 3. — 1887. Բերայի Արուեստանոցին բացման հանդէսը տեղի կ'ունենայ։

ՄԱՅԻՍ 4. — 1853. Ադրիանուպոլսեցի Պօղոս արքեպիսկոպոս որ 1815էն 1823 Պատրիարք եղած էր Կ. Պոլսոյ և 1828ին Երուսաղէմի պատրիարքութեան «Ծայրագոյն կառավարիչ» կարգուած, կը վախճանի 90 տարեկան։ Ունի կրօնական երկասիրութիւններ։ Մեծ ծառայութիւններ մատուցած է Երուսաղէմի վանքին որուն պարքերը վճարել յաջողած է։

ՄԱՅԻՍ 5. — 1815. Մոսկուայի Լազարեան Ճեմարանին բացումը տեղի կ'ունենայ։ — 1892. Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Մկրտիչ Ա. կ'ընտրուի Կաթողիկոս ամենայն Հայոց։

ՄԱՅԻՍ 7. — 1715. Աստուածատուր Համատանցի Կաթողիկոս կ'ընտրուի Էջմիածնի մէջ։

ՄԱՅԻՍ 8. — 1829. Վերապոյի մէջ կը մեռնի Յովհաննէս վարդապետ Զոհրապեան՝ Վենետիկի Մխիթարեան որուն գլխաւոր աշխատութիւնն է Աստուածաշնչին նախնեաց թարգմանութեան ճշդութեամբ հրատարակութիւններ 1805։ Ծնած էր 1765ին։ — 1858. Աւետիս Բիրոյեան, բարերար Թիֆլիսի Ներսէսեան վարժարանի, կը մեռնի։

ՄԱՅԻՍ 9. — 1847. Կայսերական հրովարտակով կը հաստատուին, Մատթէոս Պատրիարքի օրով, Կ. Պոլսոյ Հոգեւոր և Դերագոյն ժողովները։ — 1884. Կ. Պոլսոյ Պատրիարք Ներսէս Վարժապետեան Էջմիածնի Կաթողիկոս կ'ընտրուի և կը հրաժարի։

ՄԱՅԻՍ 11. — 1878. Հնագէտ Հ. Կղեմէս Սիպիլեան, միաբան Վիեննայի Մխիթարեանց, կը մեռնի Սեւերեկ, Տիրարկիրի մօտ։

ՄԱՅԻՍ 12. — 1753. Ակնցի Մինաս Կաթողիկոս կը վախճանի Էջմիածին։ Ընտրուած էր 1751ին։

ՄԱՅԻՍ 13. — 1764. Գրիգոր վարդապետ Պասմաճեան Կ. Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուի։ — 1869. Մահ Տոքթ. Յովսէփ Թորոսեանի, հիմնադիր Լեմպերկի Թորոսեան Հաստատութեան ուր կը կրթուին Հայազգի մանուկներ։ — 1898. Մահ գերման հայագէտ Ֆրիտրիհ Միւլլէրի (Ն. Տ. 25 մայիս), որ ծնած էր 1834 փետրուար 21ին Պոհեմիոյ մէջ։ Գրած է լեզուաբանական ուշագրաւ ուսումնասիրութիւններ հայերէնի վրայ։ — 1899 Զարմայր Մսերեանց, ռուսահայ խմբագիր, որդի Մսեր Մսերեանցի, կը վախճանի Մոսկուայի մէջ։

ՄԱՅԻՍ 12. — 1448. Թովմաս Մեծոփեցի պատմագիրը կը վախճանի Մեծոփայ վանքը։ — 1632. Մովսէս Կաթողիկոս Տաթեւացի կը վախճանի Երեւան։ — 1844. Յովսէփ Թաղիադեան, եւրոպական լեզուներու հմուտ ուսուցիչ, որ Պոլսոյ աշխարհաբարը մշակող անդրանիկ գրողներէն մէկը եղած է, կը մեռնի Կ. Պոլսոյ մէջ։ Ծնած էր 1808ին։

ՄԱՅԻՍ 15. — 1813. Զամուշբրճեան Բաբերդցի Յովհաննէս Պատրիարք որ 13 տարիէ ի վեր կը պաշտօնավարէր, ծերացած՝ կը հրաժարի Կ. Պոլսոյ Պատրիարքական ամբոխէն, և ի՛նք իրեն յաջորդ կը կարգէ Աբրահամ Պատրիարքը որ կ'ընդունուի։

ՄԱՅԻՍ 18. — 1800. Բաբերդցի Յովհաննէս եպիսկոպոս կ'ընտրուի Պատրիարք Կ. Պոլսոյ։ — 1856. Մխիթարեան Մխբանութենէն Հ. Սարգիս վարդապետ Թէոդորեան, Հ. Գաբրիէլ վարդապետ Այվազովսքի և Հ. Ամբրոսիոս վարդապետ Դալֆաեան կ'ընդունին Հայ. Եկեղեցւոյ դաւանութիւնը։ — 1858. Մատթէոս արքեպիսկոպոս, նախկին Պատրիարք Կ. Պոլսոյ, Էջմիածնի Կաթողիկոս կ'ընտրուի։

ՄԱՅԻՍ 19. — 1890. Մկրտիչ աղա Սանասարեանց, հիմնադիր Սանասարեան վարժարանին, կը վախճանի Բարիզի մէջ։ Ծնած էր 1818 ապրիլ 10ին։

ՄԱՅԻՍ 20. — 1562. Արգար դպիր Թոգատցի Հռոմ կը զրկուի Միքայէլ Կաթողիկոսի կողմէ Հայ տպագրութիւնը ծաղկեցնելու համար։—1737. Յաճախապատումի առաջին տպագրութիւնը կ'աւարտի՝ Կ. Պոլիս, Ատուածատուրի տպարանին մէջ։—1799. Ծնունդ Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանի որ գրած է Էջմիածնի և շրջակայ դաւառներուն տեղագրութիւնը։ — 1867. Կ. Պոլսեցի Դէոորգ արքեպիսկոպոս Բէրբէսէճեան նախկին պատրիարք՝ Էջմիածնի Կաթողիկոս կ'օծուի։

ՄԱՅԻՍ 22. — 1891. Գրիգոր Բագրատպանեան, հունգարահայ երեւելի բժիշկ, կը վախճանի։ Ծնած էր 1830ին, Եղիսաբեթուպոլսոյ մէջ։

ՄԱՅԻՍ 24. — 1834. Յարութիւն վարդապետ Ալամդարեան, ուսումնական բանաստեղծ, ուսուցիչ, տեսուչ Ներսէսեան վարժարանի, կը վախճանի Նոր Նախիջեւան։ Ծնած էր 1796ին։—1870. Մեծ հրդեհ Բերայի մէջ՝ ուր կ'այրի Հայոց Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ կալուածներուն մեծ մասը։

ՄԱՅԻՍ 25. — 1659. Բեֆէցի Մարտիրոս վարդապետ Կ. Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուի։ — 1763. Մահ Ղազար ամիրայի, սեղանաւորներու պէտ, որ իր ժամանակին ազդեցիկ դեր ունեցած է Պատրիարքարանի գործերուն մէջ։ — 1802. Դանիէլ Կաթողիկոս կ'օծուի Ալաշկերտի Իւշ Քիլիսէ վանքին մէջ, Աղթամարայ Կարապետ Կաթողիկոսէն. 15 եպիսկոպոս, 28 վարդապետ և 28 քահանայ կը մասնակցին օծման արարողութեան։

ՄԱՅԻՍ 26. — 1859. Մարզուանի Ս. Սահակեան վարժարանին հիմնարկութիւնը տեղի կ'ունենայ։ — 1886. Առաքել Ալիտուն Տիւրքի

որ Խասքէոյի Հայ թատրոնը հիմնած է 1859ին քանի մը ընկերներով ու յետոյ Բերայի Արեւելեան թատրոնը, կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ։ Ծնած էր 1840ին Եգիպտոս։

ՄԱՅԻՍ 27. — 1891. Յակոբ Պարոնեան, տաղանդաւոր երգիծաբան-գրագէտ, կը վախճանի Կ. Պոլիս՝ Օրթաքէոյ։ Ծնած էր 1842ին։

ՄԱՅԻՍ 28. — 1878. Իզմիրի Արշալոյսին խմբագիր Ղուկաս Պալդազարեան կը վախճանի. 38 տարի իր թերթը յարատեւ կերպով հրատարակած է։

ՄԱՅԻՍ 29. — 1859. Մաքսուտ ամիրա Սարիմեան, սեղանաւոր, կը վախճանի Կ. Պոլիս՝ Գատըքէոյի մէջ։

ՄԱՅԻՍ 30. — 1827. Աբրահամ ամիրա Թէրզեանց, Հօրեղբայր Քարաքէշեա Դէոորգ և Կարապետ պէյերու, որ տպարան հաստատած է Կ. Պոլիս 1824ին և մեծապէս նպաստած է Խասքէոյի Ս. Ստեփանոս եկեղեցւոյն շինութեան, կը վախճանի։

ՅՈՒՆԻՍ 1. — 1816. Պէլժ հայագէտ Ֆէլիքս Նեւ կը ծնի Պէլժիգայի մէջ (Ն. Տ. 13 յունիս)։ Մեռած է 1893 մայիսին։ Ուսումնասիրած է հայ եկեղեցական գրականութիւնը և շարականները։ — 1855. Արծիւ ամսաթերթը կը սկսի հրատարակուիլ և յետոյ կը փոխադրուի Վարագ։ Դադրած է 1863ին։ — 1874. Լոյս կը հրատարակուի խմբագրութեամբ Հմայեակ վարդապետ, այժմ եպիսկոպոս Դիմաքսեանի։ — 1885. Ճերիտեի Շարգիյէ կը սկսի հրատարակուիլ Կ. Պոլսոյ մէջ։

ՅՈՒՆԻՍ 2. — 1601. Աղարիա Ջուղայեցի կաթողիկոս Կիլիկիոյ կը վախճանի Սիս։ — 1781. Յովհաննէս Համատանցի Կ. Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուի։ — 1891. Մահ Նշանաւոր դերասան և բանաստեղծ Պետրոս Ադամեանի որ 1849ին ծնած էր Էնկիւրիի մէջ։

ՅՈՒՆԻՍ 3. — 1837. Պերճ Պռոշեանց, ուսումնական ծանօթ վիպագիր, կը ծնի Երեւանայ մօտ, Աշտարակ գիւղը։ — 1845. Քիթապճի Մարգար, Կ. Պոլսոյ Հայ գրավաճառներուն հնագոյնը կը վախճանի։ Ծնած էր 1789ին։ — 1854. Երկրագործական դասախօսութիւն կը հաստատուի Հիւսնդանոցի ճեմարանին մէջ, ուսուցչութեամբ Կրինեանի հողագործական վարժարանէն վկայուած Յակոբ Ամատեանի։ — 1877. Սարգիս Վրդ. Թէոդորեան որ գրած է Մուրատեան վարժարանի պատմութիւնը՝ կը վախճանի Բարիզ և կը թաղուի Բէր Լաշէզի գերեզմանատունը։ Ծնած էր 1783ին, Բաղէշի մէջ։

ՅՈՒՆԻՍ 4. — 1889. Երեւանի թեմական հոգեւոր դպրոցին յիսնամեայ յոբելեանը կը տօնուի։ — 1894. Խարէն արքեպիսկոպոս Աշրգեան կը հրաժարի Կ. Պոլսոյ պատրիարքութենէն։

ՅՈՒՆԻՍ 5. — 1889. Պատրիարքական կոնդակով Արմաշու Դրպրեվանքին խնամակալութիւնը կը հաստատուի և Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեան վերատեսուչ կը նշանակուի։

ՅՈՒՆԻՍ 6. — 1820. Արմաշու վանքին վերաշինութիւնը կ'աւարտի Արմաշու և Նիկոմիդիոյ առաջնորդ Գարագաշեան Պօղոս արքեպիսկոպոսի ջանքով։

ՅՈՒՆԻՍ 7. —1886. Նիկողոս Թիւլպէնտճեան, աշխատակից Օրագիրի և յետոյ խմբագիր Լրագիրի, կը մեռնի Կ. Պոլսոյ մէջ 45 տարեկան։

ՅՈՒՆԻՍ 8. — 1752. Զարպհանէ Սարբաքի Ծերոն ամիրա կը վախճանի Կ. Պոլիս։

ՅՈՒՆԻՍ 9. — 1706. Միքայէլ երէց Խարբերդցի Կ. Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուի։ — 1847. Ներսէս Ե. Աշտարակեցի Կաթողիկոս կ'օծուի։ — 1855. Կ. Պոլսոյ մէջ կը մեռնի Ֆիզիքա Պօղոս պատուելի, ընագէտ և բնաբանագէտ, իր ժամանակին փիլիսոփայի համբաւ ունեցած է։ Ծնած էր 1788ին, Երզրգաղաձի մէջ։

ՅՈՒՆԻՍ 10. — 1858. Մեսրոպ Թաղիադեան, հեղինակ և խմբագիր, կը մեռնի Պարսկաստանի Շիրազ քաղաքը։ Ծնած էր 1803ին։

ՅՈՒՆԻՍ 11. — 1733. Մահ Հաննա վարդապետի (Յովհաննէս եպիսկոպոս Երուսաղէմացի), ժամանակագիր և նկարիչ։ Գրած է իր ժամանակին անցքերը և նկարած կրօնական պատկերներ։ — 1846. Մուրատեան վարժարանը Բատուայէն կը փոխադրուի Բարիզ։ — 1856. Մահտեսի Ճանիկ Ամիրա Փափազեան, սեղանաւորներու արհեստապետ, 80 տարեկան կը վախճանի և կը թաղուի Կ. Պոլիս Օրթաքէոյի մէջ։

ՅՈՒՆԻՍ 13. — 1705. Մահ Նահապետ Եղեսացի Կաթողիկոսին որ ընտրուած էր 1691 օգոստոս 10ին։

ՅՈՒՆԻՍ 14. — 1791. Ռափայէլեան վարժարանի հիմնադիր Եղուարդ Ռափայէլ Ղարամեան, կը վախճանի առագաստանաւի մը մէջ, Հնդկաստանէն Լոնտոն եկած ատեն։ Ծնած էր Նոր Ջուղա 1734ին։ — 1848. Մատրասի մէջ կը սկսի հրատարակուիլ վիմատիպ Բանասէր հանդէսը, խմբագրութեամբ Ս. Պ. Յովհաննէսի։ Դադրած է 1849 յունիսին։

ՅՈՒՆԻՍ 15. — 1751. Գէորգ վարդապետ Ղափանցի կ'ընտրուի Պատրիարք Կ. Պոլսոյ։

ՅՈՒՆԻՍ 17. — 1847. Եւրոպա հանդէսը կը սկսի հրատարակուիլ Վիեննայի Մխիթարեանց ձեռքով։ Դադրած է 1863ին։ — 1869. Բացուած Թիֆլիսի Ս. Գայիանեանց աղջկանց վարժարանին։

ՅՈՒՆԻՍ 18. — 1881. Մալէզեան Յովսէփ պատուելի, Հայկաբան, ծանօթ ուսուցիչ, կը վախճանի 80 տարեկան։

ՅՈՒՆԻՍ 19. — 1847. Հայնրիհ Գելցէր, գերման Հայագէտ, կը ծնի Պերլինի մէջ (Ն. Տ. յուլիս 6)։ Գրուածքներ ունի Հայ դիցաբանութեան և Հայ. Եկեղեցւոյ վրայ։ — 1848. Հ. Հիւպշման, գերման Հայագէտ, կը ծնի Բրուսիոյ մէջ (Ն. Տ. յուլիս 6)։ Լեզուաբանութենէն քննած է Հայ լեզուն։ — 1855. Ստեփան Ոսկան Բարիզի մէջ կը սկսի հրատարակել Արեւելք հանդէսը (Ն. Տ. յուլիս 6)։ — 1858. Հովսեան Նիկողոս աղա, բանասէր, երկար տարիներ Խաբէջոյի Ներսէսեան վարժարանին հոգաբարձու, կը մեռնի 62 տարեկան և կը թաղուի Խաբէջոյ։

ՅՈՒՆԻՍ 20. — 1833. Մահ Հ. Ղուկաս Ինճիճեան վարդապետի, աշխարհագրիր, հնախօս և քերթող, միաբան Վենետիկի Մխիթարեանց։ Ունի բազմաթիւ երկասիրութիւններ։ Ծնած էր Կ. Պոլիս 1757ին։ — 1840. Գեղանաշարժ Մասիս լերան շրջակաները որու միջոցին Մասիսի կողերէն ժայթքած «բլրահատակ կարմրագոյն վէմ» մը դահավիժելով, կը կորզէ իր հիմունքէն Ս. Յակոբայ վանքը որ կը թաւալի Ակռուի գիւղին վրայ և հիմայատակ կը կործանէ զայն։

ՅՈՒՆԻՍ 21. — 1817. Միրզաեան Մանուկ պէյ կը վախճանի։

ՅՈՒՆԻՍ 22. — 1888. Յովհաննէս Տէրոյենց պատուելին, կրօնագէտ, լեզուագէտ, բազմաթիւ երկասիրութեանց հեղինակ, խմբագիր, կը վախճանի Սկիւտար ուր և կը թաղուի։ Ծնած էր 1800ին։

ՅՈՒՆԻՍ 23. — 1627. Մովսէս վարդապետ Տաթեւացի, ապա կաթողիկոս, կը սկսի նորոգել Էջմիածնի տաճարը։ — 1876. Պուքրէշի Հայ հասարակութենէն բարերար Կարապետ Անոյշեան կը վախճանի։

ՅՈՒՆԻՍ 24. — 1858. Սերվէրեան Յովհաննէս ամիրա, արքունի ճարտարապետ, ուսումնասէր և բարեգործ, կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ 72 տարեկան։ Պալեան Կարապետ ամիրայի հետ պատճառ եղած է Սկիւտարի ճեմարանին հիմնարկութեան, 1839ին, և միջոց մը հոգացած անոր մատակարարութեան ծախքերը։ Շինած է Գուզկունճուքի եկեղեցին ու դպրոցը։

ՅՈՒՆԻՍ 25. — 1848. Մուրատ վարժապետ Պոյաճեանց, բազմարդիւն ուսուցիչ Արմաշու, որ քաջ հմուտ էր Հայերէնի, արաբերէնի և լատիներէնի, կը վախճանի։ Ծնած էր 1801ին։ — 1884 Մեսմուայի Ախալար թերթը կը սկսի հրատարակուիլ Կ. Պոլսոյ մէջ։ —

1901· Արշակ Տէր Մելքոյէլեան, կրօնագէտ, մատենագիր, կը վախճանի Շուշի։ Ծնած էր 1864, Փետր. 1ին։

ՑՈՒԼԻՍ 26· — 1844 Աստուածատուր Պատրիարք հրաժարած ըլլալով Մատթէոս եպիսկոպոս Զուխաճեան կ'ընտրուի պատրիարք Կ. Պոլսոյ։

ՑՈՒՆԻՍ 27· — 1865· Բարիզի նորահաստատ առաջամասեայ մատուռին մէջ առաջին պատարագը կը մատուցուի Տ. Յովհաննէս աւագ քահանայ Հիւնքէարպէյենեանի կողմէ։

ՑՈՒՆԻՍ 29· — 1845· Պաղտասար արքեպիսկոպոս Հասան Ջալալեան (Աղուանից մետրապոլիտ) կը վախճանի։

ՑՈՒՆԻՍ 30· — 1873· Յովհաննէս եպիսկոպոս Սեթեան որ ճեմարանի վէճերուն առնն էսնապիներուն ջերմ կուսակիցը եղած է, քանիցս անդամ Հոգեւոր և Կրօնական ժողովներուն, կը վախճանի և կը թաղուի Դուդկունճուգի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ։

ՑՈՒԼԻՍ 1· — 1849· Ուսումնասէր լրագիրը, վիմատիպ, կը սկսի հրատարակուիլ Սինկարուրի մէջ, խմբագրութեամբ Գ. Դ. Գալըստանեանի։ Դադրած է 1853ին։ — 1855· Զոնալ հանդէսը կը սկսի հրատարակուիլ Կ. Պոլիս՝ խմբագրութեամբ Տերոյենցի։ — 1861· Գրիգոր Զիլինկիրեան կը սկսի հրատարակել Ծաղիկը Իզմիրի մէջ։ Դադրած է 1867ին։ — 1882· Բիւրակն հանդէսը կը սկսի հրատարակուիլ Կ. Պոլսոյ մէջ։

ՑՈՒԼԻՍ 3· — 1839· Կ. Պոլսեցի Գրիգոր վարդապետ, գրչագիր Աւետարանի մը յիշատակարանը կարդալով, Թարբերդի Ղուլէ վանքին մէջ կը գտնէ Ս Գէորգի և ուրիշ սուրբերու մասունքներ և Ս-Միւռոն պարունակող շիշ մը, Ներսէս Շնորհալի Կաթողիկոսէն կընքուած։

ՑՈՒԼԻՍ 4· — 1762· Կը սկսի առաջին անդամ տպագրուիլ, Եղնիկ Կողբացւոյ Եղծ Աղանդոցը՝ Իզմիր, Մարկոսի տպարանին մէջ, Յակոբ Նալեան Պատրիարքի սրբագրութեամբ, և Իզմիրի առաջնորդ Աբրահամ վարդապետի խնամքով։ — 1832· Մահ Սէն Մարթէն ֆրանսացի հայագէտին (Ն. Տ. յուլիս 17), որ ծնած էր 1791ին։ Ֆրանսերէնի թարգմանած է քանի մը հին հայ մատենագրական երկեր։ — 1847 Յակոբ Զէյլպի Տիւզեան, արքունի ոսկերչապետ, ապա փողերանոցի տեսուչ, կը վախճանի։ Իր յորդորանքով և ձեռնտուութեամբ հրատարակուած է Եւրոպա հանդէսը։ Ծնած էր 1793 յունուար 3ին։

ՑՈՒԼԻՍ 5· — 1781· Ծնունդ Միւհէնթոս Գէորգի, չափագէտ ու տոմարագէտ, որ Ադրիանուպոլսեցի Պօղոս Պատրիարքի օրով, ԺԹ. դարուն սկիզբները, Յունաց Պատրիարքարանին տոմարագէտներուն հետ համաձայնած և վերջ տուած է Ծուռազատիկի անպատեհութեանց։ Մեռած է 1830ին։ — 1846· Յովհաննէս Տերոյենցի և Մկրտիչ Աղաթոնի խմբագրած շաբաթաթերթը կը սկսի հրատարակուիլ Կ. Պոլսոյ մէջ։ — 1889· Սբրուհի Մայրապետ Գալֆեան որ 1865ին հիմնած է Խասքէոյի Որբանոցը՝ կը վախճանի։ Ծնած էր 1822ին Կ. Պոլիս, Գաբրթալ գիւղը։

ՑՈՒԼԻՍ 6· — 1900· Գարակէօմիւկի Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցին, ուխտատեղի, որ ծանօթ է «Փոքրիկ Արմաշ» անունով, կ'այրի։

ՑՈՒԼԻՍ 8· — 1756· Մահ գերման հայագէտ Եոհան Շրէօտրի (Ն. Տ. յուլիս 21)։ Ծնած էր 1680ին։ Հրատարակած է հայ լեզուի վրայ ուսումնասիրութիւն մը՝ քերականութեամբ։ Թողած է նաև բառարան մը հայ լեզուի որ կը մնայ ձեռագիր Դասէլի (Գերմանիա) մատենադարանին մէջ։ — 1902· Մահ Հ. Արսէն վրդ. Այտընեանի, արբահայր Վենետիկի Մխիթարեանց, հմուտ քերական, բանասէր և արուեստագէտ։ Ծնած էր Կ. Պոլիս 1824 յունուար 8ին։

ՑՈՒԼԻՍ 9· — 1752· Մահ Եաղուբ ամիրայի, Ակնցի սեղանաւոր, որ իր ժամանակին ամէնէն ազդեցիկ Հայը եղած է Պոլսոյ Պատրիարքարանի գործերուն մէջ։

ՑՈՒԼԻՍ 10· 1711· Տաղերգու Աւետիք Պատրիարք Եւդոկացի կը վախճանի Բարիզի մէջ և կը թաղուի Սէն-Սիւլբիս եկեղեցւոյ դամբարանը։ Ծնած էր Թոգատ, 1657 ապրիլ 7ին։

ՑՈՒԼԻՍ 11· — 1706· Ցայսմաւուրքը առաջին անդամ կը սկսի տպուիլ Գրիգոր Մարզուանցւոյ տպարանին մէջ, Կ. Պոլիս։

ՑՈՒԼԻՍ 14· — 1660· Մեծ հրդեհ Կ. Պոլսոյ մէջ ուր կ'այրին Զինիլի Համամի Ս. Սարգիս և Հիսար տիպի Ս. Նիկողայոս հայ եկեղեցիները։

ՑՈՒԼԻՍ 15· — 1860· Մ. Գ. Տէրիմէնճեան կը սկսի Պոլսոյ մէջ հրատարակել Արեւելեան Դար երկշաբաթաթերթը։ Դադրած է 1862ին։

ՑՈՒԼԻՍ 16· — 1835· Եփրեմ Կաթողիկոս Զորագեղցի, հրաժարեալ, կը վախճանի Էջմիածնայ մէջ։ — 1887· Մահ Եւրոպացի արեւելագէտ Յովհաննէս Հանուշի որ հրատարակած է ուսումնասիրութիւն մը Լեհահայոց լեզուին վրայ։ Երիտասարդ հասակին մէջ մեռած է կաթուածէ, Բարիզ։

ՑՈՒԼԻՍ 17· — 1841· Մեծ հրդեհ Իզմիրի մէջ ուր կ'այրին Ս.

Ստեփանոս եկեղեցին և վարժարանը։ — 1884· Մահ տիկին Նազլը Վ.ահանի, գործոն խնամակալուհի Օրթաքէյի Հռիփսիմեանց վարժարանին։ — 1900· Դրիգոր Զանչեանց, ռուսահայ գրագէտ, որ ունի ռուսերէն գրուած կարեւոր հեղինակութիւններ և ծանօթ է Թուրքիոյ Հայոց իր աղքատասիրական արդիւնաւոր գործունէութեամբ, կը վախճանի Մոսկուայի մէջ։

ՑՈՒԼԻՍ 18· — 1838։ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին կ'օծուի։ — 1863· Երկրագունտ կը սկսի հրատարակուիլ Մանչէսթրի մէջ, Կարապետ վարդապետ Շահնազարեանէ խմբագրուած։ Դադրած է 1864ին։

ՑՈՒԼԻՍ 19· — 1764· Յակոբ արքեպիսկոպոս Նալեան որ 20 տարի Պատրիարքութիւն ըրած է Կ. Պոլսոյ մէջ, կը վախճանի և կը թաղուի Բանկալթիի գերեզմանատունը։ Ունի կրօնական երկասիրութիւններ։

ՑՈՒԼԻՍ 20· — 1856· Խաչատուր Պարտիզպանեան, ծանօթ ուսուցիչ, լեզուագէտ, չափագէտ, կը վախճանի Կ. Պոլիս։ Ծնած էր 1809 Նոյեմբեր 24ին։ — 1900· Աւետիք Ղուկասեան, ռուսահայ գրասէր, տարեկան 500 ռուբլի կը կտակէ Դրական մրցանակի մը համար։

ՑՈՒԼԻՍ 21· — 1891· Բրիստոսատուր Ղազարոսեան, հիմնադիր և երկար տարիներ անձնուէր ուսուցիչ Ղալաթիոյ կիրակնօրեայ վարժարանին, պահ մը հոգաբարձու Հիւանդանոցին, շարունակ անդամ Պատրիարքարանի ժողովներուն, կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ։ Ծնած էր 1816 յունիս 27ին։

ՑՈՒԼԻՍ 23· — 1699· Մխիթար վարդապետ Բիւրտիսանցի կ'ընտրուի Պատրիարք Կ. Պոլսոյ։

ՑՈՒԼԻՍ 24· — 1842· Տատեան Յովհաննէս պէյի խնդիրքով, Երջանկայիշատակ Սուլթան Ապտուլ-Մէճիտ Կայսրը կը բարեհաճի հրամայել որ օրական 15 օխա միսի պետական պարէն յատկանայ Հիւանդանոցին։ — 1858· Պետրոս եպիսկոպոս Պիւլպիւլ Աղթամարայ Կաթողիկոս կ'օծուի։

ՑՈՒԼԻՍ 25· — 1792· Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանց որ 1800ին Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուած է՝ կը հիմնէ Դրիգորուպոլիս քաղաքը։

ՑՈՒԼԻՍ 26· — 1780· Երեւանցի Սիմէոն Կաթողիկոս, նորոգիչ Տօնացոյցին և մատենագիր, կը վախճանի։ Ընտրուած էր 1763ին։ — 1817· Զամաշըճեան Յովհաննէս Պատրիարք կը վախճանի Սկիւտար։ — 1882· Հ. Արսէն Սիւքրեան երիտասարդ վարդապետը, միաբան Վենետիկի Մխիթարեանց, հմուտ հայկաբան, լեզուագէտ, պատմագէտ, կը վախճանի, ծնած էր Կ. Պոլիս 1851 սեպտ. 6։

ՑՈՒԼԻՍ 27· — 1900· Յովհաննէս էֆէնտի Էսատեան որ իր եղբօրը Էսատեան Մկրտիչ էֆէնտիի հետ նպաստած է Կեսարիոյ Ս. Կարապետի ժառանգաւորաց դպրոցին, շինած է Էսատեան վարժարանը և վերաշինած է Բերայի Ս. Յարութիւն եկեղեցին՝ կը մեռնի Ֆրանսա, Պուլոյն-Սիւռ Մէռ։ Ծնած էր Կեսարիա 1841ին։

ՑՈՒԼԻՍ 29· — 1846· Պետրոս ամիրա Եուսուֆ, սեղանաւոր և Եգիպտոսի փոխարքային Թրիէսդէէ դործակալ, բարեբար և մեկենաս, կը մեռնի Կորիձայի մէջ և կը թաղուի Իզմիր ուր ծնած էր 1780ին։

ՑՈՒԼԻՍ 30· — 1844· Ասորւոց Եղիա Կաթողիկոսը կը պատարագէ Բերայի Հայոց եկեղեցւոյն մէջ, և Մատթէոս Պատրիարք այդ եկեղեցւոյն կից մատուռը կը յատկացնէ Ասորւոց որոնք այն ատեն եկեղեցի չունէին դեռ Կ. Պոլիս։

ՑՈՒԼԻՍ 31· — 1801· Ծնունդ գերման հայագէտ Բեդրմանի (Ն. Տ. օգոստոս 13), որ մեռած է 1876ին։ Ունի բանասիրական գրուածներ հայ լեզուի և ժամանակագրութեան վրայ։ — 1850· Մահ Կ. Պոլսոյ հրաժարեալ Պատրիարք՝ Պալաթցի Կարապետ արքեպիսկոպոսի որ թաղուած է Սկիւտար։

ՕԳՈՍՏՈՍ 1· — 1658· Թովմաս Բերիացի Կ. Պոլսոյ Պատրիարքը կը վախճանի։ — 1812· Դիոտակ Բիւզանդիոսն կը սկսի հրատարակուիլ ձեռամբ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան։ Դադրած է 1816ին։ — 1862· Օրիորդ Ե. Կ. Տ. Հայկուհի կը սկսի հրատարակել Կիրառ. հանդէսը որ դադրած է քանի մը ամիսէն։ — 1864· Արմաշու միաբանութիւնը կը սկսի հրատարակել Յոյս հանդէսը որ դադրած է 1870ին։

ՕԳՈՍՏՈՍ 2· — 1680· Յակոբ Դ. Զուղայեցի Կաթողիկոս կը վախճանի Կ. Պոլիս և կը թաղուի Բերայի գերեզմանատունը։ — 1873· Մսեր Մագիստրոս Մսերեանց, հմուտ աստուածաբան, որ 25 տարի կրօնագիտութիւն դասախօսած է Լազարեան Ճեմարանին մէջ, հեղինակած է շատ մը կարեւոր երկեր և խմբագրած Ճուաքաղ հանդէսը, կը մեռնի Մոսկուայի մէջ։ Ծնած էր 1808 մայիս 16ին Իզմիր։ — 1887· Հրդեհ Սկիւտարի մէջ՝ ուր կ'այրին Ս. Կարապետ եկեղեցին և Ճեմարանը։

ՕԳՈՍՏՈՍ 6· — 1825· Արմաշու վանքին վանահայր և նորոգիչ Պօղոս արքեպիսկոպոս Դարագոչեան կը վախճանի։ Ծնած էր 1751ին։

ՕԳՈՍՏՈՍ 7· — 1890· Ղալաթիոյ մատենագարանին հիմնադիր

Յակոբ Արշակ կը վախճանի։ — 1893· Տիգրան Կիւմիւշկէրտան, գործոն հոգաբարձու Հիւանդանոցին, կը վախճանի Բարիզի մէջ։

ՕԳՈՍՏՈՍ 8· — 1691· Եղիազար Այնթապցի Կաթողիկոս կը վախճանի Էջմիածին։

ՕԳՈՍՏՈՍ 10·—1782· Մեծ Հրդեհ Կ. Պոլսոյ մէջ՝ ուր կ'այրի Սամանթիոյ Ս. Գէորգ եկեղեցին։ — 1840· Ղուկաս Պալդազարեան կը սկսի հրատարակել Իզմիրի Արշալոյս լրագիրը։ Վերջնապէս դադրած է 1886ին։

ՕԳՈՍՏՈՍ 11· — 1871· Մատթէոս Այվազեան կը սկսի Կ. Պոլսոյ մէջ հրատարակել Արարատ լրագիրը։

ՕԳՈՍՏՈՍ 12· — 1869· Մահ Կ. Պոլսոյ Նորընթեր պատրիարքը Իգնատիոս արքեպիսկոպոս Գաղմանճեանի որ 12 օր առաջ ընտրուած էր։

ՕԳՈՍՏՈՍ 14· — 1834· Մուրատեան վարժարանը կը հիմնուի Բատուայի մէջ ուրկէ Բարիզ փոխադրուեցաւ 1846ին։ — 1864· Եսայի վարդապետ Կարապետեան կ'ընտրուի Երուսաղէմի Պատրիարք։ Աթոռը չորս տարիէ ի վեր թափուր մնացած էր (Ներսէն դուրսէն)ի վէճերուն հետեւանքով։ — 1878· Սիմոն Մէքայէլեան, քանանագէտ, ուսուցիչ և հեղինակ, կը վախճանի 52 տարեկան։ — 1898· Գալուստ Կոստանդեան, Իզմիրցի հայ գիտունը, կը վախճանի Իզմիրի մէջ։

ՕԳՈՍՏՈՍ 15· — 1684· Եփրեմ վարդապետ Ղափանցի Կ. Պոլսոյ պատրիարք կ'ընտրուի։ — 1773· Յակոբ Շահմիրզեան Մատրասի մէջ կը հաստատէ Հնդկաստանի առաջին հայ տպարանը։ — 1859· Զուխաճեան Տ. Մատթէոս արքեպիսկոպոս ամենայն Հայոց Կաթողիկոս կ'օծուի Էջմիածնի մէջ։ — 1899· Գրիգորիս արքեպիսկոպոս Ալէքսիանեան կը վախճանի Սկիւտարի։ Ծնած էր 1840ին։

ՕԳՈՍՏՈՍ 16· — 1845· Մեսրոպ Թաղիադեանց կը սկսի հրատարակել քաղաքական և անտեսական շաբաթաթերթ մը որ դադրած է 1852ին։

ՕԳՈՍՏՈՍ 18· — 1826· Մեծ Հրդեհ Կ. Պոլսոյ մէջ՝ ուր այրեցան Գուլ Դալաբի Մայր Եկեղեցին և Պատրիարքարանը, իր հին արձանագրութիւնները և ուրիշ հին թանկագին ձեռագիրներ։ — 1888· Եէսի Գուլէի Հիւանդանոցի նոր շէնքին հիմնարկէքը տեղի կ'ունենայ հանդիսաւոր կերպով։

ՕԳՈՍՏՈՍ 19· — 1851· Միքայէլ արքեպիսկոպոս Սալլանթեան, երբեմն անդամ Անտոնեան Միաբանութեան, տեսուչ Մոսկուայի Լազարեան Ճեմարանին, աստուածաբանութեան ուսուցիչ և տաղանդաւոր հեղինակ, կը վախճանի։

ՕԳՈՍՏՈՍ 20· — 1898· Գրեանց, հայոց առաջին կատակերգակ դերասանը, կը վախճանի Կովկասի մէջ։ Ծնած էր Կ. Պոլիս 1840ին։

ՕԳՈՍՏՈՍ 21· — 1898· Ն. Կ. Վեհափառութիւն ՍՈՒԼԹԱՆ ԱԶԻԶ-ԻԲՆ-ՀԱՄԻԴ ԽԱՆ Բ.ի բարձրագոյն Իրատէով, Ամեն. Տ. Մաղաքիա Պատրիարքի խնդրանաց վրայ, Հիւանդանոցի միսի պարէնը օրական 51 օխայէն կը բարձրանայ 150 օխայի և հացի պարէնն ալ 340 օխայէն օրական 600 օխայի։

ՕԳՈՍՏՈՍ 22· — 1865· Մահ Մատթէոս Ա. Կաթողիկոսի, աստուածաբան և մատենագիր, որ ծնած էր 1802ին Կ. Պոլսոյ մէջ։ Բաբեկարգեց Էջմիածնի թմատենադարանը։ — 1880· Մահ Ֆրանսացի նշանաւոր հայագէտ Պրոսէի (Ն. Տ. սեպտ. 3), որ ունի բազմաթիւ ֆրանսերէն գրուածներ հայ լեզուի ու հնախօսութեան վրայ։ Ծնած էր 1802 յունուար 24ին։

ՕԳՈՍՏՈՍ 23· — 1830· Ֆրանսացի նշանաւոր հայագէտ Լը Վայեան տը Ֆլորիվալ հայ լեզուի ուսուցիչ կը կարգուի Բարիզի Արեւելեան լեզուներու վարժարանին։

Վարչական Դիւան. — Բարքոդ Էֆ. Թէլեան՝ *Դիւանապետ*. Նշան Էֆ. Փափազեան՝ *Դիւանադպիր*. Գառնիկ Էֆ. Հայկեան՝ *Դիւանադպիր*. Մինրան Էֆ. Զուխաճեան՝ *Դիւանադպիր*. Հրանտ Էֆ. Մարգարեան՝ *Դիւանադպիր*. Յակոբ Էֆ. Նորհատեան՝ *Դրագիր*.

Յարաբերական Դիւան. — Կարապետ Էֆ. Խաչատուրեան՝ *Դիւանապետ*. Միւռոն Էֆ. Զաքարեան՝ *Դիւանադպիր*. Գէորգ Էֆ. Իւթիւճեան՝ *Դրագիր*.

Արձանագրութեան Դիւան. — Մկրտիչ Էֆ. Մելիքեան՝ *Տեսուչ*. Նշան Էֆ. Կիւրճեան՝ *Դիւանադպիր*. Արմենակ Էֆ. Թէլլալեան՝ *Դրագիր*.

Ազգահամարի Դիւան. — Սեպուհ Էֆ. Բլատեան՝ *Տեսուչ*. Տիգրան Էֆ. Նշատուանեան՝ *Դիւանադպիր*. Շահէն Էֆ. Գասպարեան՝ *Դրագիր*.

Գլխաւոր Դիւան. — Մինրան Էֆ. Զօպանեան՝ *Տեսուչ*. Լեւոն Էֆ. Քիւրքճեան՝ *Դիւանադպիր*. Խաչիկ Էֆ. Մարգարեան՝ *Արիղակալ*. Յարեթ Էֆ. Հայրապետեան՝ *Համարակալ*.

Բարապանք. — Մարտիրոս աղա Խաչատուրեան՝ *Բարապանապետ*. Կարապետ աղա Սրապեան, Մելքոն աղա Օտապաշեան, Թադէոս աղա Էրզրումլեան, Պօղոս աղա Սրապեան.

Սենեկապանք. — Ատոմ աղա Ատոմեան՝ *Դռնապան*. Պօղոս աղա Պուէլեան, Սեդրաք աղա Օտապաշեան, Մելքոն աղա Պլէճեան, Գրիգոր աղա Սուրեան, Սարգիս աղա Օտապաշեան.

ՆՊԱՍՏԻՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Նպաստից Յանձնաժողովը որուն պաշտօնն է օգնել հայ կարօտեալներու, որբանոցներու և դաւառական վարժարաններու՝ կազմուած է 1898ին և նորոգուած 1902ին։ Անդամներն են.

Ամեն. Պատրիարք Սրբազան, *Նախագահ*
Բարդող էֆ. Թէլեան
Գառնիկ » Կիւլպէնկեան
Եդուարդ » Դարակէօզեան
Երուանդ » Էսաեան
Սիմոն » Գայսէրլեան
Տիրան » Կիւմիւշկերեան

ՆՊԱՍՏԱՒՈՐԵԱԼ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ. — *Այն դաւառային վարժարանները որոնց կ'օգնէ Նպաստից Յանձնաժողովը, հետեւեալներն են.* — *Պայպուրդի վիճակին մէջ,* **Բաղաք,** *և* **Բանցրա** *ու* **Լանգիֆ** *գիւղեր։* — *Բասենի վիճակին մէջ* **Իշխու** *և* **Գոմանոր** *գիւղեր։* — *Դերջանի վիճակին մէջ* **Բազարիկ** *և* **Փիրիզ** *գիւղեր։* — *Խնուսայ Գեմին մէջ* **Հարամիկ** *և* **Բարամէօփրիւ** *գիւղեր։* — *Բղիի վիճակին մէջ,* **Բաղաք,** *և* **Առիկնձ, Մելիքան, Քերբոս** *և* **Մեզրէ** *գիւղեր։* — *Ալաշկերտի Գեմին մէջ* **Թորբազգալէ** *աւան, և* **Խասուր** *գիւղ։* — *Էրզինկեանի վիճակին մէջ* **Մէլիքէրիճ** *և* **Խնձորիկ** *գիւղեր։* — *Աղձամարայ վիճակին մէջ* **Արտամեռ, Ուրանց, Խակեւ** *և* **Շատախ** *գիւղեր։* — *Պիթլիսի վիճակին մէջ* **Դուլրիկ, Թեղուս, Դասվան** *և* **Փարխանդ** *գիւղեր։* — *Մշոյ վիճակին մէջ* **Հազգոյ** *գիւղ։* — *Կինճի վիճակին մէջ* **Արէկն** *և* **Զէվրէկ** *գիւղեր։* — *Սղերդի վիճակին մէջ* **Բաղաք,** *և* **Թրնցվան** *և* **Պիմեր** *և* **Դուպին** *գիւղեր։* — *Տիարպէքիրի վիճակին մէջ* **Հազրոյ** *և* **Սասի** *և* **Մուճարդին** *գիւղեր։* — *Բալուայ վիճակին մէջ* **Բաղաք** *և* **Խոշմաթ** *և* **Հաւաւ** *և* **Սղամ** *և* **Զնֆուշ** *գիւղեր։* — *Զարսանճաքի վիճակին մէջ* **Բերրի, Մազկերտ,**

Խոզաթ *և* **Բերդիկ** *գիւղեր։* — *Զմշկածագի վիճակին մէջ* **Ցաղրուկ, Մեզրէ, Բազաբոյն, Միասուն** *և* **Կապան** *գիւղեր։* — *Շապին Գարահիսարի վիճակին մէջ* **Ածպտեր, Ալամոնիկ, Ծիպեռի** *և* **Պուսէյիս** *գիւղեր։* — *Ուրֆայի վիճակին մէջ* **Էհնիէ** *և* **Պիրենիկ** *գիւղեր։* — *Սսոյ վիճակին մէջ* **Ֆէրէ** *և* **Եէրէպազան** *գիւղեր։* — *Ատանայի վիճակին մէջ* **Էֆպէզ** *և* **Ֆասըլ** *գիւղեր։* — *Զէյթունի վիճակին մէջ բաղաքին չորս բաղեր և* **Ալապաշ, Ալպասան, Եարբուզ** *և* **Ֆռնուզ** *գիւղեր։* — *Կոկիսոնի Գեմին մէջ* **Կէօսքսու, Թաշոլուզ, Քիրէնբուլար, Տէրէքէոյ, Տէօնկէլ. Տէյիրմէնտէրէ, Կէօլբուլար, Եէնիճեֆալէ.Զիւրիւֆֆօզ** *և* **Եղիտաշպասը** *գիւղեր։* — *Մալաթիոյ վիճակին մէջ* **Հիւսնիմանսուր, Պեհէսնի** *և* **Իլպիս** *գիւղեր։* — *Տիվրիկի վիճակին մէջ* **Սինճան, Միրվանա, Սուրբակոր** *և* **Արմուրաղ** *գիւղեր։* — *Կիւրինի վիճակին մէջ* **Գարահիսար** *գիւղ։* — *Տարենտէ վիճակին մէջ* **Բաղաք** *և* **Աշոտի** *գիւղ։*

ԱՐՄԱՇՈՒ ԴՊՐԵՎԱՆՔ

1900ի Ընդարձակ Օրացոյցին մէջ մանրամասնօրէն խօսուած է Արմաշու Դպրեվանքին վրայ (տե՛ս էջ 175—186)։

Դպրեվանքին խնամակալութեան անդամներն են.

Ամեն. Պատրիարք Սրբազան, *Նախագահ*
Եղիշէ Եպիսկ. Դուրեան, *Վերատեսուչ*
Տիգրան էֆ. Նուսուճեան, *Ատենապետ*
Գաբրիէլ » Գաբրիէլեան, *Ատենադպիր*
Գէորգ Եպիսկ. Երեցեան
Աբիկ էֆ. Ունճեան
Տիգրան » Բարաղամեան

Դպրեվանքին Նպաստակն է եկեղեցականութեան փափագ ունեցող երիտասարդները նոյն կոչման համար կրթել և պատրաստել։ Ընդունուելու համար գոնէ 18 տարեկան ըլլալու է։ Ուսմանց ընթացքը վեց տարի է։

1902 Նոյեմբերին՝ աշակերտներուն թիւն էր 30, այսինքն Զորրորդ դասարանի 4 սարկաւագներ և 6 դպիրներ, որոնց փոխ-տեսուչն է Թորգոմ վրդ. Պիլիճեան, և առաջին դասարանի 20 նոր առնուած աշակերտներ, որոց փոխ-տեսուչն է Մեսրոպ վրդ. Նարոյեան։

Դպրեվանքին ուսուցիչներն են Վերատեսուչը՝ Եղիշէ Եպիսկ. Դուրեան, վերոյիշեալ երկու վարդապետները, թուրքերէնի ուսուցիչ Ստեփան էֆ. Թապադեան, գիտութեանց ուսուցիչ Բառնաբաս էֆ. Զաքարեան և Ֆրանսերէնի ուսուցիչ Ֆրանսացի Մ. Ֆլակէ։

ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

ԴԱԼԱԹԻՈՅ ԿԵԴՐ. ՎԱՐԺԱՐԱՆ. — Դալաթիոյ Կեդրոնական Վարժարանը բացուած է 1886 փետրուար 1ին. 1896ին կազմուած է արդի Խնամակալութիւնը որուն անդամներն են.

Յակոբ	էֆ.	Էսաեան,	Ստեփանակ
Յովհաննէս	»	Մուրատեան,	Ստեփանդպիր
Մագուս	»	Հարենց,	Դանիանակ
Հրանտ	»	Ասատուր	
Մկրտիչ	»	Ասատեան	
Յակոբ	»	Յակոբեան	
Յովսէփ	»	Եուսուֆեան	

1900ի Ընդարձակ Օրացոյցին մէջ խօսուած է արդէն Կեդրոնական Վարպարանի մէջ աւանդուած ուսմանց և վարժարանին ցարդ հասցուցած շրջանաւարտներուն վրայ (տե՛ս էջ 209—211)։

Կեդրոնական վարժարանը ունի այս տարի (1901-1902ի շրջան) չորս դասարան։ Աշակերտներուն թիւն է 83, հետեւեալ կերպով բաժնուած չորս կարգերու մէջ. Ա. Դասարան 44, Բ. Դասարան 19, Գ. Դասարան 10 և Դ. Դասարան 10։

Վարժարանը ունի այս տարի 20 ուսուցիչ որոնց անունները և աւանդած առարկաներն են — Կրօնագիտութիւն և եկեղեցական պատմութիւն՝ Տէր Սահակ Աւագ Քհ. Տէր Սարգսեան։ — Հայերէն գրաբար և հայ մատենագրութեան պատմութիւն՝ Յակոբ էֆ. Գուրգէն։ — Հայերէն աշխարհաբար, գրագիտութիւն և օտար մատենագրութեանց պատմութիւն Հրանտ էֆ. Ասատուր։ — Օսմաներէն, պարսկերէն, արաբերէն՝ Ստեփան էֆ. Կուրտիկեան։ — Օսմաներէնէ ֆրանսերէն և ֆրանսերէնէ օսմաներէն թարգմանութիւն՝ Պօղոս էֆ. Քերեստեճեան։ — Օսմաներէն գեղագրութիւն, ընթերցանութիւն և ուղղագրութիւն՝ Դանիել էֆ. Բարունակեան։ — Ֆրանսերէն լեզու՝ Պ. Շիրզէ։ — Ֆրանսերէն լեզու և թարգմանութիւն՝ Յովհաննէս էֆ. Հինդլեան։ — Անգլիերէն՝ Միհրան էֆ. Ճենճիզեան։ — Գերմաներէն, նաև քաղաքակրթութեան պատմութիւն՝ Միքայէլ էֆ. Շամտանճեան։ — Իմաստասիրութիւն՝ Աբրահամ էֆ. Տէր Յակոբեան։ — Պատմութիւն և աշխարհագրութիւն՝ Մարկոս էֆ. Նաթանեան։ — Ուսողութիւն և բնական գիտութիւններ՝ Պ. Մաֆ Մակնիւս, Յովհաննէս էֆ. Մուրատեան, Յովսէփ էֆ. Գոյումճեան, Իգնատիոս էֆ. Մուրատեան։ — Տոմարակալութիւն՝ Ստեփան էֆ. Սիրուն։ — Գծագրութիւն՝ Խաչիկ էֆ. Թանիրճեան։

Վարժարանին ընդհանուր հսկողն է Դանիել էֆ. Բարունակեան։

Կեդրոնական վարժարանի առաջին դասարանն ըն-

դունուելու համար աշակերտները պէտք է գրաւոր քննութիւն անցընեն հետեւեալ առարկաներուն վրայ.

Կրօնք. Քրիստոնէական գիտելիք։ — **Հայերէն.** Աւետարանէ Թարգմանութիւն. — Գրաբար քերականական հարցումներ. — Աշխարհաբար պարզ նիւթի մը շարադրութիւն։ — **Օսմաներէն.** Հասարակ ընթերցանութիւն. — Ուղղագրութիւն. — Օսմաներէնէ հայերէն պարզ Թարգմանութիւն։ — **Ֆրանսերէն.** Ֆրանսերէնէ հայերէն Թարգմանութիւն.— Հայերէնէ ֆրանսերէն պարզ Թարգմանութիւն. — Քերականական հարցումներ։ — **Ընդհանուր պատմութիւն.** Ցունաց և Հռոմայեցւոց պատմութիւն։ — **Աշխարհագրութիւն.** Բաղաքական և բնական աշխարհագրութիւն հինգ մասերու։ — **Թուաբանութիւն։ — Երկրաչափութիւն.** — Գիծերու, անկիւններու և շրջանակի վրայ գործնական գիտելիք։ — **Բնագիտութիւն.** Բնական գիտութեանց վրայ նախնական ծանօթութիւններ։ — **Դիծագրութիւն։ — Դեղագրութիւն։**

Մուտքի քննութիւնները կը կատարուին գրաւոր կերպով ամէն տարուոյ օգոստոսին։

Աշակերտի մը տարեկան թոշակն է 12 օսմ. ոսկի, եռամսեան կանխիկ վճարելի։ Այն ծնողքներն, որոնք չատ համեստ դիրք ունենալով կարող չեն վճարել ամբողջ թոշակ, վստահելի վկայութիւններէ յետոյ՝ կիսաթոշակ կրնան տալ իրենց զաւակները, եռամսեան միշտ կանխիկ։

Իսկ այն աշակերտները որոնց բոլորովին աղքատ ու անկարող ըլլալը Պատրիարքարանի կողմէ կը վկայուի, ձրի կ'ընդունուին. սակայն Խնամակալութիւնը իրեն վերապահած է աղքատ ուսանողներու մէջ ընտրութիւն ընել և մուտքի քննութեան մէջ բաղդատաբար յաջողագոյն հանդիսացողները ձրի ընդունիլ վարժարան։

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ. — Սանասարեան վարժարանը հաստատուած է Էրզրում 1881ին ձեռամբ բարեյիշատակ Մկրտիչ Սանասարեանի որ անոր գոյութիւնն ու յարատեւութիւնը ապահոված է իր նուիրած և կտակած դրամագլխով։ Սանասարեանի 1886 յուլիս 10ի կտակագրին համաձայն՝ կտակակատարներն են Վսեմ. Պ. Կարապետ Եզեանց, Պ. Գէորգ Եւանգուլեանց (վախճանեալ 1901 սեպտ. 16ին ի Տփխիս) և Պ. Լեւոն Տիգրանեանց (վերջը հրաժարած)։

Սանասարեան Վարժարանի Կ. Պոլսոյ Խնամակալութիւնը հետեւեալ կերպով կազմուած է.

Ամեն. Պատրիարք		Սրբազան, Նախագահ
Աբիկ	էֆ.	Ունենեան
Գաբրիէլ	»	Նորատունկեան
Գէորգ	»	Ասլանեան
Գրիգոր	»	Կիւմիւշկերտեան
Պատրիկ	»	Կիւլպէնկեան
Վահան	»	Էսաեան
Արշակ	»	Գարակէօզեան Օժանդակ
Հրանտ	»	Ասատուր »

Վարժարանն ունի Էրզրումի մէջ տեղական Հոգաբարձութիւն մը, իսկ վարժարանին տեսչութիւնը կը վարեն Մկրտիչ Սանասարեանի երեք սանները Գէորգ էֆ. Ադուլեան, Յովսէփ էֆ. Մատաթեան, Սարգիս էֆ. Սողիկեան։

1900ի Ընդարձակ Օրացոյցին մէջ մանրամասնօրէն խօսուած է արդէն Սանասարեան վարժարանի վրայ (տե՛ս էջ 211-217)։

Վարժարանը կը բաժնուի երկու մասի, Ուսումնական և Տրհեւական, առաջինը եօթը տարուան ընթացքով, երկրորդն՝ երեք տարուան։

Ուսումնական բաժնի նախապատրաստական դասարանին մէջ ընդունուելիք աշակերտը պէտք է ըլլայ 11-13 տարեկան, ուշիմ ու առողջ, և ունենայ սա

ծանօթութիւնները. Հայերէն վարժ կարդալ, ընթեռնլի կերպով գրել։ Քերականութեան Մատենիք բանին գիտնալ, թելադրութիւն մը գրի առնել՝ առանց ուղղագրական խոշոր սխալներու, և թուաբանական չորս գործողութիւնները վարժ կերպով կատարել։

Արհեստագիտական բաժնին մէջ ընդունուելիք աշակերտը պէտք է ըլլայ 13-15 տարեկան, ուշիմ ու առողջ, և ունենայ այն ծանօթութիւններն՝ որոնք Հայ վարժարաններու յատուկ Կազմական Կանոնագրով սահմանուած են Տարրական Նախակրթարաններու համար։

Վարժարանն ընդունուելիք ամէն աշակերտ պէտք է ներկայացնէ իր ծննդեան ու մկրտութեան, պատուաստի ու առողջութեան վկայականները, ինչպէս և Օսմանիյէ թեզքերէին։

Թէ՛ Ուսումնական և թէ՛ Արհեստագիտական բաժնի իւրաքանչիւր գիշերօթիկ աշակերտի համար, պէտք է իբր տարեթոշակ վճարուի 20 օսմ. ոսկի որ կը պարունակէ աշակերտին մնուցդի, հագուստի, լուացքի ու մաքրութեան, բժիշկի ու դեղի, ուսման ու դասագիրքերու և այլ ուսումնական պիտոյքներու ծախքերը։ Կարելի է նաև տարեկան 12 օսմ. ոսկի միայն վճարել աշակերտի մը համար, պայմանաւ սակայն որ անոր զգեստի, կօշիկի, դասագիրքերու և դպրոցական ուրիշ պիտոյքներու, մահճակալի և անկողնի, ինչպէս նաև դեղերու ծախքը աշակերտին վրայ ըլլալով, վարժարանն անոր տայ մնուցդ, ուսում և հոգայ միայն լուացքի, բժիշկի և այլ ծախքերը։

Թէ՛ Ուսումնական և թէ՛ Արհեստագիտական բաժնի իւրաքանչիւր ցորեկօթիկ աշակերտի համար, պէտք է տարեթոշակ վճարուի 6 օսմ. ոսկի, որ կը պարունակէ միմիայն ուսման և ցորեկուան ճաշի ծախքերը։

Իւրաքանչիւր նորեկ գիշերօթիկ աշակերտի համար

պէտք է վարժարանի արկղին յանձնուի միանուագ 3 օսմ. ոսկւոյ պահեստի գումար մը՝ իբր աշակերտին ճանապարհածախք՝ երբ ընթացաւարտ ըլլայ և կամ եթէ որ և է պատճառաւ հարկ դատուի վարժարանէն արձակել զինքը։ Պահեստի գումարին ամբողջը կամ մնացորդն ետ կը տրուի՝ երբ աշակերտը մեկնի վարժարանէն։ Ըստ Կանոնագրին վարժարանը պէտք է ունենայ առնուազն 30 ձրիավարժ գիշերօթիկ աշակերտ։

Հիմայ վարժարանին Ուսումնական բաժնին ուսուցչական մարմինը կը բաղկանայ հետեւեալներէն. երեք տեսուչներէ որոնք կ՝աւանդեն կրօնագիտութիւն, պատմութիւն, բնական գիտութիւններ, գերմաներէն, գծագրութիւն և երաժշտութիւն։ Ուսուցիչ հայերէնի՝ Ա. Խաչատուրեան, ուսուցիչ ուսողութեան՝ Դ. Ռամիկեան և Ս. Աղապալեան, ուսուցիչ տաճկերէնի՝ Ն. Թոքվայեան, ուսուցիչ ֆրանսերէնի՝ Ժ. Քրէսքէ, ուսուցիչ բնական գիտութեանց՝ Գ. Ճիլերճեան, օգնական ուսուցիչ՝ Տ. Բրուտեան, օգնական ուսուցիչ և հսկող՝ Գ. Ղոյինեան և Ս. Սողոմոնեան։

Արհեստանոցի ուսուցչութիւնը կը վարեն Սանասարեան երկու սաներ՝ Գէորգ էֆ. Ճիլէրճեան և Սիմոն էֆ. Աղապալեան որոնք իրենց մասնագիտական ուսմանց ընթացքը հիմնադիր բարերարին ծախքով կատարած են գերմանական արհեստագիտական բարձրագոյն վարժարաններու մէջ, և առաջինն ընդունած է բնական գիտութեանց մասնագէտ-ուսուցչի վկայագիր և երկրորդը կահագործութեան ու երկաթագործութեան արհեստապետի վկայագիր։ Արհեստանոցին մէջ ուսուցչութիւն կ՝ընեն նաև երկու ուրիշ արհեստապետներ ալ, Ա. էֆ. Վահանեան և Գ. էֆ. Գասնակերեան որոնք արտասահմանի մէջ կատարելագործած են իրենց արհեստագիտական կրթութիւնը և վկայագիր ստացած են։

Վարժարանը 1902 օգոստոսին ունէր 190 աշակերտ հետեւեալ բաշխմամբ.

Սանասարեան դիշերօթիկ սաներ	11
Սանասարեան ցորեկօթիկ սաներ	23
Զանազաններէ պաշտպանեալ սաներ	72
Թոշակաւոր դիշերօթիկ աշակերտներ	32
Թոշակաւոր ցորեկօթիկ աշակերտներ	52
	190

Սանասարեան վարժարանը 1899-1900 շրջանին ունեցած է 12 շրջանաւարտ, 9 ուսումնական բաժնէն և 3ը արհեստագիտական բաժնէն։

Վարժարանի տարեկան ծախքն է, ըստ ելմտացոյցի, գրեթէ 4000 օսմ. ոսկիի գումար մը որ կը հայթայթուի կտակեալ արժէքներու և Պոլսոյ ու Էրզրումի մէջ գտնուած կալուածներու հասոյթներով, և աշակերտներու թոշակներով։

ԳԻՇԵՐՕԹԻԿՆԵՐ ՎԱՐԺԱՐԱՆ. — 1876ի Հոկտեմբեր 1ին բացուած է այս ցերեկեայ և դիշերօթիկ վարժարանը, հիմնադիր-տնօրէնութեամբ Ռ. Յ. Պէրպէրեանի։ Գատրգիւղի մէջ հաստատուած, երկու տարի հոն մնալէ ետքը՝ փոխադրուած է Սկիւտար, նախ Իճատիէ, և ետքը Սէլամսըզ, Էքմէքճի պաշի փողոց, ուր կը մնայ 23 տարիներէ ի վեր։ Արդի վարժարանն որ ընդարձակ տուն մըն է ընդարձակ պարտէզով շրջապատուած՝ սեփականութիւնն է Հիմնադիր-Տնօրէնին։ 1901 Հոկտեմբեր 28ին կատարուած քսանեւհինգամեակին նուէրներով վարժարանին շէնքը աւելի ընդարձակուած և բոլորովին նորոգուած է։

Առաջին օրէն հիմնուած է նախնական և երկրորդական ուսմանց ծրագրով։ Վարժարանին նպատակն է, ըստ ծրագրին, պատրաստել լուսամիտ և աղնուասիրտ Հայ անհատներ։

Ուսմանց շրջանն ութամեայ տեւողութիւն ունի։ Ութը կարգերուն առաջին երեքը՝ այսինքն «Երախայից երեք կարգերը» Նախակրթական կամ նախապատրաստական շրջանը կը կազմեն, ու վերջին հինգ տարիները՝ Ուսումնարանական շրջանը, որուն հինգ դասարանները Կրտսերագունից, Կրտսերաց, Երիցանց, Երիցագունից և Աւագաց դասարան անունը կը կրեն։

Ուսումնական ծրագիրը կը պարունակէ. 1. Լեզուներ (Արդի և հին Հայերէն, Օսմաներէն՝ Արաբերէնի և Պարսկերէնի տարերքով, Ֆրանսերէն՝ Լատիներէնի տարերքով, Անգղիերէն, Գերմաներէն, Յունարէն). 2. Բնական գիտութիւններ (Բնական պատմութիւն, Բնագիտութիւն, Բնալուծութիւն հանքային և գործարանական, Բնախօսութիւն և Առողջաբանութիւն)։ 3. Ուսողական գիտութիւններ (Թուաբանութիւն գործնական և տեսական, Գրահաշիւ, Երկրաչափութիւն, Եռանկիւնաչափութիւն, Գծագրական Երկրաչափութիւն, Տարերք Մեքենագիտութեան և Տիեզերագրութեան)։ 4. Աշխարհագրութիւն եւ Պատմութիւն ընդհանուր։ 5. Առեւտրական ուսմունք (Տոմարակալութիւն և Վաճառականական թղթակցութիւն)։ 6. Գրագիտական ուսմունք (Գրագիտութիւն, Պատմ. հայ և հին ու նոր դասական դպրութեանց)։ 7. Բարոյական եւ ընկերական գիտութիւնք (Կրօնագիտութիւն, Հոգեբանութիւն, Տրամաբանութիւն, Պատմ. Իմաստասիրութեան, Բարոյագիտութիւն, Քաղ. Տնտեսութիւն և Տարերք Օսմ. Օրէնսդիտութեան)։ 8. Գեղարուեստական ուսմունք (Գծագրութիւն, Երաժշտութիւն և ձեռական աշխատութիւն)։ Ուսմանց զանազան ճիւղեր վերին կարգերուն մէջ կ'աւանդուին օսմաներէն և ֆրանսերէն լեզուներով։

Վարժարանը կը մատակարարուի ցորեկեայ և դիշերօթիկ աշակերտներու վճարած թոշակներով, և չունի

բնաւ ուրիշ ո՛ր և է հասոյթի աղբիւր։ Կանոնական թոշակը գիշերօթիկներու համար տարեկան 32 օսմ. ոսկի է, ցորեկեայներէն նախապատրաստական կարգերու աշակերտներուն համար տարեկան 8. իսկ Ուսումնարանական շրջանի ուսանողներուն համար տարեկան 10 Օսմ. ոսկի. այսու հանդերձ վարժարանն ունեցած է միշտ բաւական թուով թերաթոշակ ունաւ ձրիավարժ աշակերտներ։

Վարժարանին ուսուցչական մարմինը բաղկացած է այսօր 17 հայ և օտար ուսուցիչներէ, բաց ի Տնօրէնէն, որ կ՚աւանդէ անձամբ ոչ սակաւ դասեր, մասնաւորապէս լեզուագիտական, գրական և իմաստասիրական ուսումներ և բարոյագիտութիւն։

Վարժարանն իր առաջին շրջանաւարտներն ընծայած է 1878 օգոստոսին և ցարդ ունեցած է 145 շրջանաւարտներ. իսկ աւելի կամ նուազ շրջանաւարտութեան մօտեցած մեկնելով գործի մանողներու թիւը շատ աւելի մեծ է։ Ընթացաւարտները գրկած են այլ և այլ ասպարէզներ, առեւտրական, պետական, գրական, ուսուցչական, բժշկական, ճարտարապետական, գեղարուեստական, փաստաբանական։

Պէրպէրեան վարժարանը 1902-1903 դպրոցական տարեշրջանի հետ թեւակոխած է իր Իվ. տարեշրջանը։

ՄԵԶՊՈՒՐԵԱՆ ԱՂՋԿԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ. — Այս վարժարանն՝ որ 36 տարի առաջ հիմնուած և քանի տարիէ ի վեր փակուած էր, 1900 հոկտեմբերի մէջ բացուեցաւ նորէն՝ Գատըգիւղ։ Յովհան էֆ. Փալագաշեան և իր երկու քոյրերը, աշխատակցութեամբ Հիմնադիր Մեզպուրեան էֆէնտիի, կը վարեն վարժարանն՝ ուր կ՚ընդունուին գիշերօթիկներ ալ որոնք կը վճարեն 30 օսմ. ոսկի, դաշնակի դրամով՝ 36 ոսկի,

վեցամսեան կանխիկ։ Վարժարանը կ՚ուսուցանէ, հայերէնէ և ֆրանսերէնէ զատ, փափագողներու թուրքերէն լեզուն, կար, ձեւ ու ձեռագործ, դաշնակ, գործիական ու ձայնական երաժշտութիւն, և առանձին անտեսութիւն տեսական ու գործնական։

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1900ի Ընդարձակ Օրացոյցին մէջ (էջ 202-204 բացատրուած է թէ ուսուցչական թեկնածուներն ի՞նչ պայմաններու մէջ կրնան ուսուցչական վկայական ստանալ և թէ մինչև 1899 ապրիլ 1 քանի՛ ուսուցիչ և ուսուցչուհի վկայական ստացած են։ Հոս կը դնենք 1900ի 1901ի և 1902ի տարեշրջաններուն՝ Կ. Պոլսոյ մէջ ուսուցչական վկայական ստացողներուն վիճակագրութիւնը. նախորդ տարիներու մէջ ոմանք Թենիչ Ցանձնաժողովին միջոցաւ ներկայուած են Ուսումնական Խորհուրդին և ոմանք ալ ուղղակի Խորհուրդէն վկայուած են։

	1900ին	1901ին	1902ին
Օգնական ուսուցիչ	4	32	3
» վարժուհի	11	10	11
Դաստիարակ ուսուցիչ	1	5	1
» վարժուհի	—	2	—
Օգնական Մասնագէտ ուսուցիչ	6	6	10
» » վարժուհի	1	1	1
Մասնագէտ ուսուցիչ	—	3	—
» վարժուհի	—	—	16
	23	59	42

ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐ

1901ի Ընդարձակ Օրացոյցին մէջ (էջ 205) գրուած է մանրամասնօրէն թէ տարրական ու բարձրագոյն նախակրթարաններու շրջանաւարտներն ի՞նչ կերպով կըրնան ստանալ Ռուսական Խորհուրդէն վաւերացուած վկայական, և թէ մինչև 1898ի վերջը ի՞նչ եղած է շրջանաւարտի քննութեանց արդիւնքը։ Գալով վերջին չորս տարեշրջաններուն, 1899ին ունեցանք 15 շրջանաւարտ, 13ը աղջիկ և 2ը մանչ և 1900ին՝ 37 շրջանաւարտ, 19ը աղջիկ և 18ը մանչ։ 1901ին՝ 65 շրջանաւարտ, 24 աղջիկ և 41 մանչ։ Իսկ 1902ին 117 շրջանաւարտ, 57 մանչ ու 60 աղջիկ։

ԱՐՇԵՍՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1880ի Սովելոց Յանձնաժողովին իբր շարունակութիւն՝ մնացորդ գումարը մատակարարելու և ամեցնելու, և յետոյ Արհեստական վարժարանի մը ծախքին յատկացնելու նպատակով կազմուած է Յանձնաժողով մը որուն անդամներն են.

Ամեն. Պատրիարք Սրբազան,		Նախագահ
Սահակ	Եպ.	Ղազարոսեան, Ատենապետ
Մկրտիչ	»	Մանուկեան, Ատենադպիր
Աբիկ	»	Ունենեան
Աբէլ	»	Կիւլպէնկեան (Վահանանեաց)
Գառնիկ	»	Յովակիմեան
Պատրիկ	»	Կիւլպէնկեան

Այս Յանձնաժողովը գաւառներէն եկած որբերուն արհեստական կրթութեան համար յատկացուցած է Ս. Փ. Հիւանդանոցին ամսական 50 ոսկւոյ գումար մը, մինչև որ նոր Որբանոցի շինութեամբ արհեստական վարժարանը հաստատուի։

ԳԱԼՖԱՅԵԱՆ ԱՂՋԿԱՆՑ ՈՐԲԱՆՈՑ

Հաստատուած է 1866 յունուարին Կ. Պոլսոյ Խասքէօյի մէջ։ Որբանոցին հիմնադիր և Մայր հանգուցեալ Սրբուհի Մայրապետ Գալֆայեանի յաջորդած է՝ 1889 յուլիսին՝ Երանուհի Մայրապետ Յովհաննէսեան, որուն տեղակալն է Փրիտինէ Մայրապետ Փափազեան։ Որբանոցն ունի խնամակալութիւն մը.—Ամեն. Պատրիարք Սրբազան՝ Նախագահ։ Ամենամ՝ Բարթող Թէլեան և Կարապետ Խաչատուրեան։ Տեսուչ՝ Ռեթէոս Թադէոսեան։

Որբանոցին նպատակն է անոք և անօգնական հայ որբ աղջիկ զաւակներ պատսպարել խնամել և դաստիարակել։ Մինչև հիմայ, 34 տարուան մէջ, Որբանոցը կրցած է 460 անհայր, անմայր, փողոցները թափառող որբուհիներ պատսպարել, որոնցմէ 35ը տակաւին պատսպարեալ կը մնան, 3ը՝ մեռած են, 1ը կուսակրօնութիւն ուխտած է, 17ը՝ անզաւակ հայոց որդեգրութեան տրուած և 407ն ալ ամուսնացած ու ընտանիք կազմած են։ Այս 478ը որբուհիներուն 3ը՝ Եգիպտոսէն, 1ը՝ Ռումանիայէն, 170ը՝ Կ. Պոլսոյ զանազան թաղերէն, իսկ 304ը՝ գաւառացի են։ Առոնցմէ շատերը թէ՛ Կ. Պոլսոյ և թէ՛ գաւառներուն մէջ դաստիարակուհւոյ և ուսուցչուհւոյ պաշտօններ վարած են։

Որբանոցին պատսպարեալները՝ կ'ուսնին Հայերէն և Ֆրանսերէն, Կրօնք, Թուաբանութիւն, Աշխարհագրութիւն, Առանին տնտեսութիւն. առոնցմէ զատ կը սորվին նաև կար, ձև, ձեռագործ։ Նոյնպէս վարժուելու համար, շաբաթական շրջանով, կը կատարեն Որբանոցին տնական ծառայութիւնները՝ ինչպէս կերակուր

երիել, լուացք ընել, տախտակ սրբել, աւել ածել, և այլն։

Որբանոցին մէջ հիմայ կը պաշտօնավարեն 6 պաշտօնեայ։ Տարեկան ծախքն է 750—800 օսմ. ոսկի։ Այսօր փոխարէն իր հաստատուն եկամուտ ունի միմիայն Վեհ. Սուլթան Ա.Պ.Տ-Իլ-Համիտ Բ. Գթառատ Հայեր չնորհած հացի և մսի պարէնն, որ կը տրուի Կայսերական Անձնական Գանձէն և որուն տարեկանը կ'արժէ գրեթէ 20,000 ղրուշ։ Սակէ զատ ունի նաև տարին 6000—7000 ղրշ.ի կալուածական հասոյթ։ Իսկ մնացեալ ծախքը կը հայթայթուի մասամբ բանուած ձեռագործներու արդիւնքով, և գլխաւորաբար Թուրքիոյ և արտասահմանի բարեսէր Հայերու կամաւոր նուէրներով՝ որոնք վերջին տարիները պակասած ըլլալով՝ Որբանոցը այսօր 60,000 ղրշ.ի չափ պարտքի տակ ինկած է։

ՅՈՎՍԷՓ ԻԶՄԻՐԵԱՆՑ ԳՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանց, ընիկ Ղզլարցի, իր 1884 ապրիլ 3 թուականիր կտակագրով 10,000 ռուպլի նուիրած է Հայոց և սահմանած է որ տոկոսը, տարեկան 600 ռուպլի, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի միջոցաւ իր մրցանակ պարգև տրուի ամէն տարի Հայոց գրականութեան, և պատմութեան վերաբերեալ լաւագոյն երկասիրութեանց հեղինակներուն։

Այս կտակին գործադրութեան համար Վերջին անգամ 1897ին Կեդր. Վարչութեան Խառն Ժողովը Մնայուն Յանձնաժողով մը կազմած է «Յովսէփ Իզմիրեանց Գրական Յանձնաժողով» անունով, որուն անդամներն են.

Ամեն. Պատրիարք	Սրբազան,	Նախագահ
Գաբրիել էֆ.	Նորատունկեան,	Ատենապետ
Յովհաննէս Ա. Քհ.	Մկրտեան,	Ատենադպիր
Վահան էֆ.	Էսատեան,	Գանձապետ
Գէորգ Եպիսկոպոս	Երէցեան	
Եղիշէ »	Դուրեան	
Տոքթ. Վահրամ էֆ.	Թորգոմեան	

1900ի Ընդարձակ Օրացոյցին մէջ մանրամասն տեղեկութիւններ տրուած են մրցանակի պայմաններուն վրայ (էջ 217-219)։

Մրցանակի նոր բաշխումը տեղի պիտի ունենայ 1903ին։

Յովսէփ Իզմիրեանց, Գրական մրցանակի մը հաստատութեան համար կտակած 10,000 ռուպլիէն զատ, կտակած է նաև 10,000 ռուպլի ուրիշ դումար մը ալ որուն տոկոսը, 600 ռուպլի, յատկացած է Էրզրումի կամ Մշոյ աղջկանց վարժարանին։ Յանձնաժողովը 1897 սեպտ. 1էն սկսեալ այդ նպաստը յատկացուց Մշոյ աղջկանց վարժարանին՝ որ հիմայ «Յ. Իզմիրեանց աղջկանց վարժարան» անունը կը կրէ։

Գրական Յանձնաժողովոյ յանձնուած է նաև Վանայ Սանդխտեան աղջկանց վարժարանին մատակարարութիւնը՝ հանգուցեալ Սանասարեանի կողմէ թողուած նպաստով, — Շահնազարեան վարժարանի դոյքերուն մատակարարութիւնը՝ յատկացնելու համար զանոնք հանգուցեալ Կարապետ վարդապետի կտակի գործադրութեան, — Աստուածատուր Զունդի կտակի գործադրութեան հսկողութիւնը, — և վերջապէս Ղալաթիոյ Հայոց Մատենադարանին հոգը զոր 1900 սեպտեմբերին Կեդր. Վարչութիւնը յանձնեց անոր։

Ս. ՓՐԿՉԵԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ՀԱՅՈՑ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ. — *Սուրբ Փրկչեան Հիւանդանոցի արդի Հոգաբարձութիւնն որ ընտրուած է 1898 օգոստոս 4ին՝ հետեւեալ կերպով կազմուած է.*

Պատրիկ	էֆ.	Կիւլպէնկեան, *Ատենապետ*
Գրիգոր	»	Ալեանագեան, *Ատենադպիր*
Տէր. Աբրահամ պէյ		Նազարեան
Գրիգոր	էֆ.	Էվրենեան
Գրիգոր	»	Կիւմիւշկերտան
Տոմբ. Միքայէլ	»	Խորասանեան
Յակոբ	»	Սթամպուլեան
Տիգրան	»	Մանուկեան
Պօղոս	»	Էֆսէրեան *(Վախճանեալ)*

ՈՐԲԱՆՈՅՑ. — *Հոգաբարձութիւնը յատուկ Խնամակալութեան մը միջոցաւ կը վարէ Որբանոցի ուսումնական եւ արհեստական վարչութիւնը։ Այս Խնամակալութիւնը կազմուած է հետեւեալ կերպով.*

Գրիգոր	էֆ.	Ալեանաֆեան, *Ատենապետ.*
Զարմայր	»	Ճըմարտախօսեան
Լեւոն	»	Բանիկեան.
Յակոբ	»	Գորեան
Պօղոս	»	Քէրէստէճեան.

ՊԱՇՏՕՆԵԱՑՔ. — **Դրասենեակի պաշտօնեաներ.** — *Մախուռ էֆ. Խիտարէրտեան՝ Տեսուչ դրասենեկի։ Հայրապետ էֆ. Շնորհիկեան՝ Համարակալ։*

Հիւանդանոցի պաշտօնեայք. — *Վարդան Վրդ. Բրոխորոնեան, հոգեւոր պաշտօնեայ։ Տոմբ. Յոհան էֆ. Շիրինեան, անօրէն։ Տոմբ. Մինաս էֆ. Զարդարեան, վիրաբոյժ-բժիշկ։ Տոմբ. Նազարէթ էֆ. Տաղաւարեան, բժիշկ ներքին հիւանդութեանց։ Տոմբ. Լուիճի Մոնճէրի, յիմարաբոյժ բժիշկ։ Տոմբ. Կարապետ էֆ. Իրիֆճեան, Տոմբ. Արշակ էֆ. Գազազեան, Տոմբ. Խաչիկ էֆ. Պողոսեան ներքին բժիշկներ։ Յարութիւն էֆ. Ֆէրհատեան, դեղագործ։*

Որբանոցի պաշտօնեայք. — *Տոմբ. Դաբրիէլ էֆ. Նահապետեան, այցելու բժիշկ։ Յակոբ էֆ. Նիկողոսեան, տեսուչ։ Օր. Փուրուշ Զայեան, ընդհանուր դատարակուսի Աղջկանց Որբանոցին։*

Ա. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՁԱՆԱՁԱՆ ՄԱՍԵՐԸ

Այս Հաստատութիւնն՝ որ ընդհանրապէս Ս.ՓՐԿՉԵԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ անուան տակ ծանօթ է հասարակութեան՝ զանազան անջատ ճիւղեր ունի, որք են Հիւանդանոց, Ծերանոց, Անկեղանոց, Որբանոց, Ուսանողներու յարկ եւ Մամարան։

Ա. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ. — *Հիւանդանոցն երկու ճիւղի բաժնուած է, Բժշկական եւ Վիրաբուժական. առաջինը 140 (100ը այր եւ 40ը կին) եւ երկրորդը 85 (60ը այր եւ 25ը կին) անկողին ունի։ Ուռականութեամբ վարակուածները (Tuberculeux), յիմար հիւանդները, թարախաւորները, եւ աղաք՝ թէ՛ արանց եւ թէ կանանց կողմը՝ յատուկ սրահներ ունին, կան եւ մանուաորներու համար մէկ երկու անկողիններու սենեակներ։*

Հիւանդանոցի երկու ճիւղերն ունին իրենց բժշկապետն եւ իւրաքանչիւրն իր օժանդակ բժիշկը։ Առաջինները չարաթն երեք անգամ՝ իսկ վերջինները ամէն օր կ'այցելեն ու կարգաւ գիշերները կը մնան Հիւանդանոցին մէջ։

Հիւանդանոցն ունի 4 հակող մայրապետներ (2 էրիկ մարդոց եւ 2 կիներուն կողմը), 3 վիրադարման (2 էրիկ մարդոց եւ միւսը կիներու), 13 հիւանդապահ (10 էրիկ մարդոց եւ 3ը կիներու կողմը) եւ 10 ուրիշ պաշտօնեայներ (գիշերապահ, մատակարար, անուշդներու բաշխող, լոգանքի պաշտօնեայ, սափրիչ, գռնապան, հանդերձապահ), ընդ ամէնը 30 պաշտօնեայ, առանց հաշուելու բժիշկները եւ դեղագործները։ Դեղագործները երկու են եւ ունին չորս աշակերտներ։

Հիւանդանոցն ունի Վիրաբուժական ընտիր սրահ մը, Վիրադարմանի երկու խուցեր, Ջրաբուժական կրկին լոգարաններ (մին արանց եւ միւսը կանանց կողմը), բժշկական եւ հիւանդներու ընթերցանութեան կրկին մատենադարաններ եւ երկու հիւրանոց, մէկը արանց եւ միւսը կանանց կողմը։

Տարեկան 1600—1800 հիւանդներ կը դարմանուին հոն, որոնց $^3/_4$ը այր եւ $^1/_4$ը կիներ են։ Այս հիւանդներուն 1000—1100ը ներքին հիւանդութեանց ճիւղին կը վերաբերին, 600ը—700ը վիրաբուժական բաժնին։

Ամէն կարգի հիւանդներ կ'ընդունուին. Ափրոդիտեան հիւանդութեամբ վարակուածներ չէին ընդունուիր մինչեւ վերջին տարիներս, այժմ անոնցմէ միայն անոնք կ'ընդունուին որոնց ոտքի վրայ դարմանումը հնար չէ։

Աչքի, ականջի եւ կոկորդի հիւանդութեանց յատուկ ճիւղեր կային երբեմն, հիմա ջնջուած են. երբ անոնցմէ ընդունուիլ հարկ ըլլայ, քաղաքիս հայ մասնագէտներու կը ղրկուին դարմանելու համար։

Ցեսադայ կրկին ցուցակները, քաղուած 1901 տարւոյ բժշկական կրկին ճիւղերու տեղեկագրէն, յատակ գաղափար մը կուտան Հիւանդանոցի գործունէութեան վրայ։

Ա. Ներքին հիւանդութեանց բաժին

					Գումար
Պատրաստ 1901 Յունր. 1		Այր 69	Կին 38		107
Մուտք	Դրսէն	» 671	» 169		840
	Որբանոց	» 77	» 78		155
	Պաշտօնեայ	» 12	» 6		18
	Ծերանոցէն	» 64	» 26		90
	Ցիմարանոցէն	» 82	» 49		131
	Ուսանողներէն	» 17			17
					1358
Ելք	Բժշկուած	Այր 478	Կին 122		600
	Բարւոքուած	» 257	» 73		330
	Արձանագրուած	» 77	» 23		100
	Մեռած	» 159	» 75		234
					1264
Պատրաստ 31 Դեկտ. 1901		» 67	» 27		94
					1358

Բ. Վիրաբուժական բաժին

Պատրաստ 1901 Յունր. 1		62
Մուտք		631
		693
Ելք	Բժշկուած	364
	Բարւոքուած	125
	Արձակուած	120
	Մեռած	38
		647
Պատրաստ 31 Դեկտ. 1901		46
		693

Այս ցուցակներէն կը տեսնուի որ ներքին հիւանդութեանց 1264 հիւանդները 234 մահ եւ վիրաբուժական բաժնի 647 հիւանդները 38 մահ տուած են, այսինքն 1911 հիւանդներու 272ը մեռած են, որով Հիւանդանոցիս մահականութիւնն է 1901 տարւոյ համար % 14,19 : Եթէ ի հաշիւ առնենք եւ 20 հոգեւարք վիճակաւ Հիւանդանոցս եկողները՝ ունեցած կ'ըլլանք 1931 հիւանդի վրայ 292 մահ կամ 15,12 : Բաղդատութեան դնենք այս միջինը նախորդ քանի մը տարիներուն միջինին հետ :

1897ին %	16,51
1898ին %	19,37
1899ին %	16,97
1900ին %	15,10
1901ին %	15,12

1901 տարւոյ մէջ պատսպարուած հիւանդներէն դանձուած է 33441 ղրուշ :

Բ. ՑԻՄԱՐԱՆՈՑ. — Ցիմարանոցը գրեթէ 300 պատսպարեալներ ունի որոնց 200ը այր եւ 100ը կիներ են : Սոնց թիւը դժբախտաբար աւելնալու վրայ է, որով եւ վերջին տարիներս Ցիմարանոցի արանց եւ կանանց բաժիններուն յաւելուածական շէնքերն արդէն լեցուած են ու ցիմարները սկսած են նեղուիլ :

Ցիմարանոցն ունի ցիմարաբոյժ մը եւ օգնական բժիշկ մը. առաջինը շաբաթն երկու անգամ կ'այցելէ, իսկ իր օժանդակը ամէն օր : Արանց եւ կանանց բաժիններն ունին իրենց ընդհանուր հակոզ պետերէ զատ 15 ցիմարապահ (10 արանց եւ 5ը կիներու բաժնին մէջ) :

Ցիմարները երեք դասի բաժնուած են.

Ա. Տեւական, անդարմանելի եւ հանդարտ ցիմարներ որոնք աշխատաւոր կ'անուանուին եւ Հատատութեանս

աշխատութեանց կը գործածուին : Բ. Ցուզման ենթականեր : Գ. Շռաններները, ապուշներն եւ տղայք : Այս երեք կարգն ալ արանց կողմն ունին իրենց յատուկ յարկերը. կանանց կողմը այս բաժանումները զոնացուցիչ չեն տեղւոյ անձկութեան պատճառաւ :

Ցուզեալ ցիմարները մասնաւոր խուցերու մէջ կը դրուին կամ բռնազգեստ հագցընել կուտան (camisole de force). դանակոծումն ի սպառ արգիլուած է :

Ցուցակ Ցիմարանոցի 1901 տարւոյ

						Գումար
Պատրաստ 1901 Յունր. 1ին .	Այր	194	Կին	97		291
Մուտ.	»	87	»	32		119
						410
Ելք — Բժշկուած	Այր	28	Կին	7		35
Բարւոքած	»	23	»	3		26
Արձակուած	»	0	»	9		9
Մեռած	»	28	»	13		41
						111
Պատրաստ 1901 Յունր. 1ին .	»	202	»	97		299
						410

Այս տարուան չրջանին պատսպարուած ցիմարներէ իբր ամսաթոշակ 55,043 ղրշ. դանձուած է :

Գ. ԾԵՐԱՆՈՑ ԵՒ ԱՆԿԵԼԱՆՈՑ. — Ծերանոցը անոք և ծեր աղգայիններու յատկացուած յարկ մըն է, իսկ Անկելանոցը անկարող և անտէր անձերու, փոքրաներուր աղջկանց ու լքեալ կիներու յատուկ է :

Այս յարկերու մէջ պատսպարեալներն առօրեայ 3 ժամ մնունդէ զատ կ'ընդունին ծխախոտ եւ սուրճ պատրաստելու համար սուրճ ու չաքար :

Ծերունիներն եւ անկեալներն իրենց տրամադրութեան տակ ունին մատենադարան մը, եւ կրնան Հաստատութեան մատուռին ժամերգութիւններուն ներկայ գտնուիլ եւ պարտէզներու մէջ ժուռ գալ։

1901ի Յունր. 1ին ունէինք 146 ծեր եւ անկեալ որոնց 14ը արու են եւ 32ը կին կամ աղջիկ. ասոնցմէ՝ այս տարուան մէջ, իբր ամսական գանձուած է 5796 ղրուշ։

Դ. ՈՐԲԱՆՈՑ. — Որբանոցն ունի Հոգաբարձութիւնէն ընտրուած մատնաւոր Խնամակալութիւն մը որուն ատենապետն է Հոգաբարձութեան անդամներէն մէկը, եւ Տեսուչի մը ձեռքով կը վարէ Որբանոցը։ Հաստատութեանս Որբանոցի սաներու թիւն է գրեթէ 308 որոնց 230ը մանչ եւ 78 աղջիկ են։ Աղջիկները 78 եւ մինչեւ 7 տարեկան պզտիկ մանչերը 36 են եւ Հաստատութեանս մէկ յարկին մէջ կը գտնուին իսկ 7 տարեկանէն վեր մանչերը մօտակայ Ս. Յակոբայ վանուց մէջ կը մնան։

Սանուց չուրջ $^3/_4$ը գաւառացի եւ $^1/_4$ը պոլսեցի են կամ աւելի ճիշդ ըսելու համար 74ը պոլսեցի են եւ 234ը գաւառացի։ Կ. Պոլսեցիներու 7ը ցորեկեայ են ամէնն ալ մանչ, 4ը մնծ եւ 3ը եօթ տարեկանէն վար։

Այս տարուան չրջանին մէջ թոշակաւորներէ գանձուած է 14326$^1/_2$ ղրշ.։

Որբանոցի ծրագիրն է Ուսումնական Խորհրդոյ կազմական կանոնագրի Նախակրթարանի ամբողջ դասընթացքը։

Նախորդ տարուան մէջ աւելցաւ նաեւ երկրագործական դաս մը մանչերու Որբանոցի երկու վերջին տարիներու մէջ աւանդելի։

Աշակերտներն օրը 4 ժամ դաս ունին։

Երեք տարիէ ի վեր հաստատուած են կօշկակարու-

թեան, դերձակութեան, կահագործութեան եւ ատաղձագործութեան արհեստանոցներ որոնց կը հետեւին յատուկ որոշեալ պատանիներ. ասոնց օրական 1—2 ժամ դաս ալ կը տրուի։

Որբանոցը տեսուչէն զատ ունի 13 մնայուն դասատուներ որոնց 7ը մանչերու եւ 5ն աղջիկներու կոչմը. կան նաեւ 6 այցելու ուսուցիչներ եւ 1 այցելու բժիշկ։

Որբանոցի պաշտօնէից եւ դպրոցական պիտոյից տարեկան ծախքն է գրեթէ 750 ոսկի։ 1901 տարուոյն ծախուց գումարն եղած է 78528$^3/_4$ ղրշ.։

Ե. Ուսանողք. — Այս դասակարգը չփոթելու չէ Որբանոցի սաներուն հետ։ «Ուսանող» կ'անուանենք այն ամէն արական տեղ որք եւ անպաշտպան պատանիներն որոնք կա՛մ մայրաքաղաքիս մէջ բարձրագոյն վարժարան մը կը յաճախեն եւ կամ արհեստի մը կը հետեւին քաղաքիս կամ Հաստատութեանս մէջ։

Այս պատանիներն ընդհանրապէս որբանոցիս չրջանաւարտներ են, երբեմն ալ ուսման արհեստաւոր որբեր եւ կամ դրսէն եկողներ։

Վարժարաններ յաճախող ուսանողներն երբ չրջանաւարտ եղին, եւ արհեստաւորներն երբ Դաշքայի աստիճանին հասնին՝ կը հեռանան Հաստատութենէն։ 1902 Յունր. 1ին կային 30 ուսանող որոնց 2ը բժշկական, 3ը դեղագործական, 4ը Կեդրոնական Վարժարանի կը հետեւին. իսկ 5ը մսագործութիւն, 4ը դեղագործութիւն, 4ը թիթեղագործութիւն, 2ը դերձակութիւն, 2ը ատաղձագործութիւն, 1ը մելանավարութիւն կ'ուսանին եւ 3ը Հաստատութեանս Տնօրէնութեան դիւանի օժանդակ գրագիրներ են։

Զ. Մոմարան. — Հաստատութիւնս ի վաղուց անտի ունի իր մէջ Մոմարան մը ուր կը պատրաստուին Մայ-

բաքաղաքիս եկեղեցիներուն եւ հարսանիքներուն մոմերը։ Հաստատութեանս Մոմարանը մայրաքաղաքիս նոյնատեսակ գործարաններու առաջինը կրնայ համարուիլ եւ ամէն կերպով կրնայ գերազանցել զանոնք։

Մոմարանը տարեկան գրեթէ 200—250 ոսկի չահ մը կուտայ Հաստատութեանս։ 1901 տարւոյ Մոմարանի զուտ չահն եղած է 24654 7/8 ղրուշ։

Բ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՍ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍԵՐԸ

Ա. Դեղարան. — Հաստատութիւնս ունի դեղարան մը ուր կան 2 վկայուած վարպետներ եւ 4 աշակերտներ։ Դեղարանի տարեկան ծախքն է 336 30 1/2 ղրշ.։

Բ. Հանդերձատուն. — Հաստատութիւնս ունի հանդերձատուն մը ուր կը պատրաստուին Հաստատութեանս պատասպարեալներուն ճերմակեղէններն ու զգեստները։ եւ ուր մասնաւոր քանակաւ ճերմակեղէն եւ զգեստեղէն պատրաստ կը գտնուին։ Հանդերձատունը լաւ հսկողութեան մը ենթարկուած է եւ ունի մասնաւոր պաշտօնեայ մը։ Հանդերձատան տարեկան սպառումն է 900—1000 ոսկի։

Գ. Լուացարան. — Պետ լուացարարուհւոյ մը լուացարանը յանձնուած է՝ ուր կ'աշխատին ամսականաւոր լուացարարուհիներէ զատ Անկեղանոցէն աշխատելու կարող կիներ։ Ճերմակեղէնները մասնաւոր ջեռոցի մը միջոցաւ կ'եռացուին։ Լուացքը շատ մաքուր է։

Դ. Բաղնիք. — Հաստատութիւնս Հիւանդանոցի յատուկ լոգարաններէ զատ ունի նաեւ ասիական բաղնիք մը ուր կարգաւ կը լուացուին ծերերը, անկեալները, յիմարները, ուսանողները, որբերն եւ պաշտօնեաները։

Ե. Մառան եւ Մթերանոց. — Մասնաւոր պաշտօնեայի մը հսկողութեան յանձնուած է Հաստատութեանս մառանը, եւ փայտի, ածուխի ու քարիւղի մթերանոցները։

Մառանէն եւ Մթերանոցէն որ եւ է պարէն կամ նիւթ դուրս չելլեր առանց Տնօրէնութեան գրաւոր հրամանին։

Մենդեան մասին տարեկան գրեթէ 5000 ոսկի կը ծախսուի։ Լուսաւորութեան, ջեռուցման եւ մաքրութեան համար տարեկան սպառումն է 600—700 ոսկի։

Զ. Խոհանոց. — Խոհանոցը Հաստատութեանս ամէնէն աւելի վայելուչ, մաքուր ու լաւ սկսուած մասերէն մէկը կրնայ համարուիլ։ Խոհանոցը ունի վարպետ խոհարար մը եւ երեք օգնականներ։

Է. Անասնարան. — Անասնարանն երկու ուրոյն մասերէ կը բաղկանայ, 1. Գոմ ուր կը գտնուին Հաստատութեանս կաթ մատակարարող կովերն ու իրենց հորթերը, 2. Ախոռ ուր կը գտնուին Հաստատութեանս պիտոյից տեղափոխութեան յատկացուած ձիերը։

1902ի սկիզբը գոմը ունէր 22 կով, 2 ցուլ, 6 հորթ. իսկ ախոռը 3 ձի։

Տարեկան գրեթէ 17,500 օխա կաթ կ'առնուի գոմէ եւ գրեթէ 7,000 օխա ալ դուրսէն կը գնուի։

Ը. Արհեստաւորներ. — Հաստատութեանս մէջ կը գտնուի արհեստաւորներու խումբ մը, ատաղձագործ, թիթեղագործ, երկաթագործ, դերձակ, հնակարկատ-կօշկակար, մեքենավար, որմնաշէն-հիւսն, որոնք միակ Հաստատութեանս պիտոյից կը ծառայեն։

Այս արհեստաւորներուն ոմանց քով աշակերտներ կը դրուին ուսանողներու դասակարգէն։

Թ. Մատենադարան եւ Դիւան. — Հաստատութիւնս ունի գլխաւոր մատենադարան մը եւ 4 մասնական մատենադարաններ. 1. Բժշկական, 2. Հիւանդանոցի, 3. Ծերանոց Անկեւանոցի, եւ 4. Որբանոցի. ընդամէնը գրեթէ 47800 կտոր գիրք պարունակելով։

Հաստատութիւնս ունի դիւան մը ուր կը պահուին Հաստատութեանս տոմարներն եւ թղթեղէնները։

Ժ. Պարտեզներ. — Արանց եւ կանանց կրկին Ցիմարանոցներն ունին մասնաւոր պարտէզներ, իսկ ապաքինած հիւանդները, ծերունիները ու անկեւները կեդրոնական մեծ պարտէզին մէջ ժուռ կուգան։

ԺԱ. Մատուռ. — Հաստատութեանս մէջ կը գտնուի Ս. Փրկչի մատուռը ուր ամէն օր ժամերգութիւն կ'ըլլայ ու Հոգաբարձութեան կողմէ ընդունուած Հոգւոյ պատարագներ եւ պաշտօններ կը կատարուին։

Մատուռն ունի մէկ հոգեւոր հովիւ, օգնական քահանայ եւ մէկ լուսարար։

Ս. Յակոբայ Վանուց մէջ, ուր կը գտնուի մանչերու Որբանոցը, կայ Ս. Յակոբայ մատուռը։

Գ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՍ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ, ՎԱԳՖՆԵՐԸ ԵՒ ԳՈՅՔԸ

Հաստատութիւնս 178 կտոր վագֆէ գատ ունի նաեւ 100է աւելի մեծ ու փոքր կալուածներ, գրեթէ 14,000 ոսկի արժողութեամբ. ասոնց տարեկան եկամուտն է գրեթէ 750 ոսկի։

Հաստատութիւնս կ'ընդունի տարեկան 15 հաստատուն կտակէ 3518 դրչ. եւ 2 կտակներու արամադրութեան համաձայն կը վճարէ 1650 դրուշ։

Հաստատութիւնս ունի 181 հատ երկաթուղւոյ արժեթուղթ, 7 հատ Ռուսական պարտատոմս, 4 Բրէսի ֆոնսիէ էժիբսիէն, 1 Պուլկարական պարտաթուղթ, 1 Վիլ սը Լիոն, 7 Վիլ սը Պրիքսէլ, 1 Էմվալի լիթամ եւ 300 հատ Օսմ. Բոնոպիա գրեթէ 122,968³/₄ դրչ. արժէքով։

Ցուցակ եկեւմէջ 1901 տարւոյ

Մուտք

1.	Կալուածք	Կալուածք	81,385¹/₂
		Պարտէզի վարձք	2,680
		Ջիթատան	2,160
		Պոստանի միւլքի վարձք .	500
2.	Վագֆի հասոյթ		3,523¹/₄
3.	Նպաստ կառավարութեան հաց եւ միս		376,885
4.	Թոշակ Մալիէի		23,421
5.	Կտակեալ դրամ		19,183
6.	Արհեստական վարժ. խնամ. (600 ոսկի)		64,800
7.	Պահանջներու տոկոս		108,00
8.	Արժեթղթոյ կտրներէ եւ իլթամի տոկ.		2,904
9.	Մոմարանի շահ		24,654⁷/₈
10.	Ցնցոտատան հասոյթ		4,208¹/₂
11.	Սիկառի թուղթի հասոյթ		16,021
12.	Դպրոցական տետրակներու կնքում .		78
13.	Օրացոյցի հասոյթ	Պարզ . 55,874³/₄	
		Ընդ. . 40,362	96,236³/₄
14.	Անցագրատուն		13,356
15.	Նշանաւութենէ		19,176
16.	Եկեղեցիներու եւ Հաստատութեանս դանձանակներէ		18,228¹/₂

17.	Եկեղեցեաց պնակներէ			25,175½
18.	Առանձին զանձանակներէ			13,358
19.	Ս. Փրկչի մատուռի հասոյթ	Բանկայ	2,908	
		Թղթն. նուէր	2,690	5,598
20.	Ննջեցելոց աւանդներէ			1,916½
21.	Տօնական այցելութեանց փոխարէն			9,119
22.	Ծաղկեպսակ յուղարկաւորութեան			50,109½
23.	Ծաղկեփունջ հարսանեաց			20,286½
24.	Տարեկան նուագահանդէս			116,041
25.	Պատսպարելոց թոշակք	Ծեր	5,796	
		Ցիմար	55,043	
		Որբ	14,326½	
		Հիւանդ	33,441	108,606½
26.	Մոմից տուրք հիւանդաց			14,593
27.	Ցկեանս մուտք			1,620
28.	Դրամական նուէրներ	Պարբերական	4,380	
		Միանուագ	133,682¾	
		Տար. հանդ.	23,597	161,659¾
29.	Նիւթական նուէրներ			102,575
30.	Զանազան հասոյթ			4,037
31.	Կահագործ Հիւանդանոցի			1,270
32.	Թիթեղագործ			1,168
33.	Զուլհակ Հիւանդանոցի			563¾
34.	Անասնարանէ			7,251¼
35.	Որբանոցի Արհեստարաններէ			14,362¼
36.	Դրամական չահ			3,229
37.	«Փունջ» գրքի հասոյթ			489
38.	Կանկառանոց			1,747½
				1,542,181⅜

Ելք

1.	Մնունդք			529,046½
2.	Վառելանիւթ, լուսաւորութեան նիւթ եւ օճառ			76,742¾
3.	Հանդերձեղէն	Մաշած	107,091½	
		Նորոգութ.	577¾	107,669¼
4.	Դեղօրայք			33,630½
5.	Որբանոցի պաշտօնէից ամսական եւ գպրոցի պիտոյք			78,528¾
6.	Պաշտօնէութեան ամսական			257,996½
7.	Կարասիք	Հինցած	26,285¼	
		Նորոգութիւն	14,408½	40,693¾
8.	Շինութիւնք եւ նորոգութիւնք	Հիւանդ.	42,666½	
		Ս. Ցակ.	7,586	50,252½
9.	Զանազան ծախք (ողորմութիւն, պարգեւ եւայլն)			56,813½
10.	Տպագրական ծախք			6,135½
11.	Դրասենեկաց ծախք, Հոգաբարձութեան, Տնօրէնութեան			2,176
12.	Վարձք Հոգաբարձութ. գրասենեկի			2,470
13.	Պարտիզի յարդարում			42,598¼
14.	Կալուածական ծախս			46,068½
15.	Կալուածական տուրք			15,195¾
16.	Ապահովագրութիւն			9,995½
17.	Անցագրատան ամսական			6,000
18.	Վճարելի կտակ			2,050
19.	Բժշկական եւ վիրաբուժական պիտոյք			6,858½

20.	Յատկացեալ ամսականաց	10,098
21.	Գանձանակաց համար տասանորդ . .	4,032¹/₄
22.	Վագֆի համար տասանորդ եւ ծախք	3,348¹/₂
23.	Բաժանորդագրութեան հաւաքչին . .	480
24.	Նշանաւութեան ծախք	3,433
25.	Զէն ու չահ	852³/₄
26.	Պարզ օրացոյցներու ծախք	22,954
27.	Ընդ. օրացոյցներու ծախք	18,384³/₄
28.	Հասոյթից առաւելութիւն	107,676¹/₈
		1,542,181³/₈

ԹԱՂՕՐԱՅՔ Կ. ՊՈԼՍՈՅ

1. ԳՈՒՄ–ԳԱԲՈՒ

Մայր եկեղեցի Ս. Աստուածածին

Առաջին շինութեան թուականն անորոշ. վերաշինուած 1645, այրած 1718 և վերաշինուած 1719, վերանորոգուած 1819 և երեք տաճարներու օծումը կատարուած 1820, Փետր. 26։ Նորէն այրած 1826, Օգոստ. 18 Պատրիարքարանն ալ ի միասին։ Նոր հիմնարկութիւն կը կատարուի 1828 Փետր. 10, և կը շինուին երեք մեծ եկեղեցիներ և մատուռներ։ Օծումը տեղի կ'ունենայ 1828 Հոկտ. 14։ Աւագ եկեղեցին՝ Ս. Աստուածածին նորոգուեցաւ 1902. հիւսիսային տաճար՝ Ս. Խաչ, հարաւային տաճար՝ Ս. Որդիք Որոտման։

Գլխ. մատուռներ. — Ս. Յարութիւն և Ս. Ծնունդ։

Քարոզչութիւնը կը վարէ Պատրիարքը։

Ժամօրհնող. — Տ. Եղրաս վրդ. Սաչլեան։

Քանանայք. — Տ. Հարոն Ա. քհնյ. Խարշահեան (ձեռն. 1849) Աւագերեց, Տ. Միքայէլ Աշճեան (1882) Փոխ-աւագերեց, Տ. Խաչատուր Դերձակեան (1879) Լուսարարապետ, Տ. Եղիշէ Սէրէնեան (1859), Տ. Արիստակէս Ճիզմէճեան (1866), Տ. Գարեգին Ղազարոսեան (1873), Տ. Ոսկի Օհանեան (1873), Տ. Պօղոս Պէյազեան (1882), Տ. Կարապետ Ստեփանեան (1888), Տ. Գէորգ Պագալեան (1895), Տ. Եղիազար Պօղոսեան (1895)։

Թաղ. Խորհուրդ. — Յակոբ Ամատեան՝ Ատենապետ, Մկրտիչ Մելիքեան՝ Դեր-ատենապետ, Գրիգոր Մեհտէրեան՝ Ատենադպիր, Յարութիւն Իւթիւճեան՝ Գան-

ձապես, Խաչիկ Խանճեան, Դաւնիկ Գալաֆեան, Յակոբ Նշանեան, Մկրտիչ Պեզազեան, Գրիգոր Բարազեան, Կարապետ Հալաճեան։

Դպրաց դաս. — Մինրան Տէր Անարոնեան՝ Դպրապետ, Խաչիկ Խանճեան՝ Փոխ-դպրապետ, Գրիգոր Մեհտէրեան՝ Դասապետ-ուսուցիչ, Ներսէս Բէօշէեան՝ Ստեւնապետ, Յարութիւն Շիշմանեան՝ Ստեւնադպիր, Խորէն Մկրտիչեան՝ Դանձապետ։

Զորից-բաղից Աղքատաց խնամակալութիւն. — Մինրան Գարագաշեան՝ Ստեւնապետ, Հայկ Խոճասարեան՝ Ստեւնադպիր, Կարապետ Սրապճեան՝ Դանձապետ, Անդրէաս Տէր Անդրէասեան՝ Մատակարար, Ղազարոս Ճերահեան, Տիգրան Օհանեան, Արտաշէս Թաշճեան, Գրիգոր Պարոն-Վարդանեան։

Վարժարանք. — Պեզճեան և Լուսաւորչեան։ Աշակերտ 450, Աշակերտուհի 250։ — Տեսուչ՝ Հայկ Խոճասարեան։

—

2. ԴՈՒՄ-ԳԱԲՈՒԻ ԴՈՒՐՍ

Ս. Յարութիւն

Այս եկեղեցւոյն վերջին շինութիւնն եղած է 1855ին։

Քարոզիչ. — Տ. Եղնիկ եպ. Ապահունի։

Քահանայք. — Տ. Խորէն Նորատունկեան (1894) Փոխ-աւագերէց, Տ. Իգնատիոս Խաչատուրեան (1859), Տ. Գարեգին Տ. Գէորգեան (1885), Տ. Սուքիաս Սրիստակէսեան (1895)։

Թաղ. Խորհուրդ. — Յովհ. Աղնաւուրեան՝ Ստեւնապետ, Ստեփան Բարազեան՝ Ստեւնադպիր, Անդրանիկ Կարապետեան՝ Դանձապետ, Եղիա Մինասեան, Լեւոն

Եղիսէեան, Մագսուտ Պասմաճեան, Տաքէս Բենիրճեան։

Դպրաց դաս. — Գրիգոր Զուհաճեան՝ Դպրապետ և Դասապետ-ուսուցիչ։

Վարժարանք. — Պօղոսեան և Վառվառեան։ Հսկող՝ Մկրտիչ Կարապետեան։ — Աշակերտ 126, Աշակերտուհի, 89։

—

3. ԿԵՏԻՔ-ԲԱՇ

Ս. Յովհաննէս Աւետարանիչ

Այս եկեղեցին առաջին անգամ կառուցուած է 1849ին և Կետիք-Բաշայի հրդեհէն այրելով վերաշինուած է 1876ին։

Քարոզիչ. —

Քահանայք. — Տ. Յովհ. Մերկերեան (1877) Աւագերէց, Տ. Յակոբ Բարազեան (1874), Տ. Եղիա Կարապետեան (1888), Տ. Տրդատ Պոյաճեան (1895), Տ. Պետրոս Զարզաւաթճեան (1895), Տ. Մարտիրոս Գալֆայեան (1899)։

Թաղ. Խորհուրդ. — Մարտիրոս Էնքսերճեան՝ Ստեւնապետ, Կարապետ Բարազեան՝ Ստեւնադպիր, Գալուստ Եէկէնեան՝ Դանձապետ, Կարապետ Մագուլեան, Նիքոթ Պարոնեան։

Դպրաց դաս. — Գրիգոր Մեհտէրեան՝ Դպրապետ, Յովհ. Մեհտէրեան՝ Դասապետ ուսուցիչ, Յովհ. Բարազեան՝ Ստեւնապետ, Երուանդ Բէօսէեան՝ Ստեւնադպիր, Վահան Երէցեան՝ Դանձապետ։

Վարժարան. — Ս. Մեսրոպեան։ Աշակերտ 134, Աշակերտուհի 125։ — Տեսուչ՝ Կարապետ Տէմիրեան։

—

4. ԵԷՆԻ-ԳԱԲՈՒ

Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքեալք

1846 Ապրիլ 6ին կատարուած է այս եկեղեցւոյ հիմնարկութիւնը, շինութիւնը Յունիս 9ին կ'աւարտի և Յունիս 18ին կ'օծուի։

Քահանայք. — Տ. Բարթողիմէոս Պօղոսեան (1859) Փոխ-Աւագերեց, Տ. Արիստակէս Վարժապետեան (1889), Տ. Յուսիկ Քաջունի (1886)։

Թաղ. Խորհուրդ. — Մարուքէ Ցրէնկեան՝ Ատենապետ, Գառնիկ Վանլեան, Նշան Ազարեան, Մկրտիչ Բարմաքսիզեան, Պետրոս Անդրանիկեան։

Վարժարանք. — Ս. Առաքելոց և Հայկանուշեան։ Աշակերտ 115, Աշակերտուհի 49։ — Տեսուչ Գրիգոր Գուլումճեան։

—

5. ՍՍՄԹԻՍ

Ս. Գէորգ

Ս. Գէորգ որ վաղեմի եկեղեցի մըն է ԺԶ. դարուն եղած է Հայոց Ազգ. Պատրիարքարանի աթոռ, մինչեւ 1640։ 1722ին Յովհաննէս Կոլոտ Պատրիարք նորոգեց այս եկեղեցին, և անոր կից տաճար մըն ալ կառոյց յանուն Ս. Երրորդութեան։ Կար նաև ասոնց կից ուրիշ տաճար մըն ալ յանուն Ս. Աստուածածնի։ 1782ի մեծ հրդեհին այրեցան այս երեք եկեղեցիները։ 1804ին դարձեալ վերաշինուեցաւ Ս. Գէորգ, և 1832ին նորոգուելէ ետք, 1866ին Սամաթիոյ մեծ հրդեհին կրկին այրեցաւ այս եկեղեցին, որ և հիմէն կառուցաւ 1886-1887։ Օծումը կատարուեցաւ 1887 Փետր. 8։

Քարոզիչ. —

Քահանայք. — Տ. Յովհաննէս Շահպազեան (1867) Աւագերեց, Տ. Թադէոս Սիմոնեան (1869) Փոխ-Աւագերեց, Տ. Ներսէս Տ. Եղիշէեան (1869), Տ. Փիլիպոս Տ. Յակոբեան (1869), Տ. Կարապետ Յակոբեան (1878), Տ. Աբգար Արապեան (1884), Տ. Անանիա Յակոբեան (1887), Տ. Արիստակէս Հիսարլեան (1896), Տ. Եղիշէ Մանուկեան (1899), Տ. Սերովբէ Ներշապուհեան (1899)։

Թաղ. Խորհուրդ. — Մինրան Կարապետեան՝ Ատենապետ, Ոսկիան Յակոբեան՝ Ատենադպիր, Մանուկ Վարդանեան, Թորոս Մկրտիչեան, Տիգրան Նշանթաճեան։

Աղքատախնամ. — Յարութիւն Մինչարեան՝ Ատենապետ, Ենովք Թէյեան՝ Ատենադպիր, Մինրան Զանայեան՝ Դանձապետ, Ոսկիան Յակոբեան, Սեփոն Թոփուզեան, Լեւոն Թերզեան, Մկրտիչ Զարմայրեան։

Դպրաց դաս. — Կարապետ Տէր-Անդրէասեան՝ Դպրապետ և Դասապետ-ուսուցիչ։

Վարժարանք. — Ս. Սահակեան, Նունեան-Վարդուհեան։ Աշակերտ 189, Աշակերտուհի 168։ — Տեսուչ Իսրայէլ Հայկազն։

—

6. ԱԼԹԸ ՄԵՐՄԷՐ

Գլխաւոր Ս. Յակոբ

Այս եկեղեցին շինուած է Ս. անգամ 1858ին։ Օծումը տեղի ունեցաւ նոյն տարին Յուլիս 13ին, Յակոբ Պատրիարքի օրով։ Կրկին կառուցուեցաւ 1892ին և օծուեցաւ Տ. Խորէն Աշրգեան Պատրիարքէն։

Առաջնայ Քարոզիչ. — Տ. Կորիւն վրդ. Եսայեան։

Քահանայք. — Սամաթիոյ։

Թաղ. Խորհուրդ. — Գէորգ Ճիվանեան՝ Ատենապետ, Ար-

չակ Բիրբէճեան՝ Ատենադպիր, Գրիգոր Ադամեան՝ Գանձապետ, Սիմեոն Նիկողոսեան, Մարտիրոս Յակոբեան, Տիրան Լոգմաեան։

Վարժարան. — Ներսէսեան։ — Աշակերտ 22, Աշակերտուհի 7։

—

7. ՆԱՐԼԸ ԳԱԲՈՒ

Ս. Յովհաննէս Առաքելոյ

Այժմեան եկեղեցին կառուցուած է 1807ին, հոս կը գտնուէր Ս. Փրկչեան Հիւանդանոցը՝ անցեալ դարուն սկիզբը։

Քարոզիչ. — Տ. Տաճատ Ծ. վրդ. Ոսկանեան։

Քահանայք. — Սամաթիոյ։

Թաղ. Խորհուրդ. — Յակոբ Գրիգորեան՝ Ատենապետ, Իսրայէլ Հայկազն՝ Ատենադպիր, Լեւոն Սարաֆեան՝ Գանձապետ, Աթանիկ Գալֆայեան, Յարութիւն Ֆերհատեան, Կարապետ Բաբաղեան։

Վարժարան. — Խորենեան և Վարվառեան։ — Աշակերտ 67, Աշակերտուհի 39։

—

8. ԹՈՓ ԳԱԲՈՒ

Ս. Նիկողայոս

Այժմեան եկեղեցին հիմնուած է 1832ին։

Քարոզիչ. —

Քահանայ. — Տ. Ատոմ Խաչատուրեան (1899)։

Թաղ. Խորհուրդ. — Սիմոն Ալթունեան՝ Ատենապետ, Արտաշէս Վարդանեան՝ Ատենադպիր, Պետրոս Զիմենեան՝ Գանձապետ, Լեւոն Մխիթարեան, Գրիգոր Ալեքսանդրեան։

Վարժարան. — Լեւոնեան և Վարդուհեան։ — Աշակերտ 66, Աշակերտուհի 28։

—

9. ՊԱԼԱԹ

Ս. Հրեշտակապետ

Այս եկեղեցին որ Պոլսոյ նշանաւոր հայ եկեղեցիներէն է, յունական եկեղեցի մըն էր և հայոց յանձնուեցաւ 1631ին՝ ըստ Երուսաղէմի Գրիգոր Պարոն-Տէր Պատրիարքի յիշատակարանին և 1636ին՝ ըստ Երեմիա Չելեպիի ժամանակագրութեան։ Եկեղեցին Հայոց յանձնուելէն ետքը, նորոգուեցաւ Նորին Երուսաղէմի յիշեալ Գրիգոր Պատրիարքին, Արիստակէս վարդապետի և Պոլսոյ Ատուածատուրին։ 1729ին Ս. Հրեշտակապետ եկեղեցին այրելով՝ Յովհաննէս Կոլոս Պատրիարք վերաշինեց զայն անմիջապէս, Սեղբոս ամիրայի ձեռնտուութեամբ։ 1835ին, Ստեփաննոս Աղաւնի Պատրիարքին օրով, վերջին անգամ նորոգուեցաւ այս եկեղեցին։

Քարոզիչ. — Տ. Թաթուլ Ծ. Վրդ. Դուրեան։

Քահանայք. — Տ. Միքայէլ Ա. Քհնյ. Վարժապետեան (1859) Աւագերեց, Տ. Վահան Գրիգորեան (1876) Փոխ-աւագերեց, Տ. Արել Երեցեան (1886) Լուսարարապետ, Տ. Գրիգոր Աբրահամեան (1894)։

Թաղ. Խորհուրդ. — Համբարձում Եէմէնիճեան, Գրիգոր Զորաեան, Միսաք Յովնանեան, Հայկասէր Սրբիկեան, Մանուկ Ճեվահիրճեան, Սահակ Գրլճեան, Յարութիւն Ճաֆճաֆեան, Հայկ Ճանիկեան, Մարտիրոս Էօքսիւզեան։

Դպրաց դաս. — Կարապետ Առաքել Պաղտասարեան՝ Դրպրապետ՝ Մինրան Ճերահեան՝ Դասապետ-ուսուցիչ, Սրչակ Տողրամաճեան՝ Ատենապետ։

Աղքատախնամ. — Տ. Արել քհնյ.՝ Ատենապետ, Յարու-

Թիւն Սահաթճեան՝ Ստեւանպիր, Տ. Վահան քնյ. Գանձապետ, Գարեգին Բամպագճեան, Գէորգ Գաբիպեան, Պօղոս Իւթիւճեան, Սահակ Գլճեան։

Վարժարան. — Խորենեան։ — Աշակերտ 84, Աշակերտուհի 70։ — Տեսուչ՝ Գէորգ Սիմքէշեան։

---

10. ԷՑՈՒՊ-ՏԵՊԹԵՐՏԱՐ

Ս. Եղիա

Այս եկեղեցին կը յիշուի ԺԸ. դարէն սկսելով։ Ժողովրդային հանգանակութեամբ նորոգուած է 1800ին և Դանիէլ Պատրիարքի օրով օծումը կատարուած Մարտ 26ին։ 1832ին հիմէն նորոգուած է Պեզճեան Յարութիւն ամիրայի քրոջ՝ Մերկերեան Գէորգ աղայի կողակից Տիկին Համասիւռի ծախքով։

Քահանայ. — Տ. Գրիգոր Թեվեքելեան։

Թաղ. Խորհուրդ. — Սեպուհ Ալեքսանդրեան՝ Ստեւանպեկ, Մկրտիչ Նարլեան՝ Ստեւանպիր. Գէորգ Յովակիմեան՝ Գանձապետ. Մկրտիչ Սերովբեան։

Վարժարան. — Պեզճեան։ — Աշակերտ 29, Աշակերտուհի, 10։

---

11. ԷՑՈՒՊ

Ս. Աստուածածին

Այս եկեղեցին ալ կը յիշուի ԺԸ. դարէն. 1855ին հիմէն նորոգուած է հանգանակութեամբ։

Քահանայ. — Տ. Յարութիւն Դերձակեան (1880)։

Առժամ. Թաղ. Խորհուրդ. — Գէորգ Վարժապետեան՝ Ստեւանպեկ, Կարապետ Լալիկեան՝ Ստեւանպիր, Գառնիկ Մամասեան։

Վարժարան. —

---

12. ԽԱՍԿԷՕՑ

Ս. Ստեփանոս

Խասքէօյի հայերը նախ կը վերաբերէին Պալաթու Թաղին, բայց յետոյ 1729ին ունեցան փայտաշէն եկեղեցի մը։ 1804ին վերաշինուեցաւ և 1831ին այժմեան եկեղեցին կառուցուեցաւ։

Քարոզիչ. — Տ. Տիրայր վրդ. Մարգարեան։

Քահանայք. — Տ. Մինաս աւագ քնյ. Պեզազեան (1862) Աւագերեց, Տ. Աբրահամ Տ. Կիւրեղեան (1878) Փոխ աւագերեց, Տ. Համբարձում Դերձակեան (1884)։

Թաղ. Խորհուրդ. — Եղիա Շահպազ՝ Ստեւանպեկ, Գրիգոր Ադամեան՝ Ստեւանպիր, Կարապետ Թիրեաքեան՝ Գանձապետ, Տոքթ. Յակոբ Քեմհաճեան, Յովսէփ Մերտումեան, Գրիգոր Պալըգճեան և Յակոբ Կիւրճեան։

Աղքատախնամ. — Տ. Աբրահամ քնյ. Տ. Կիւրեղեան՝ Ստեւանպեկ, Թագւոր Քերեստեճեան՝ Ստեւանպիր, Մաքսուտ Սիւնկիւճեան՝ Գանձապետ, Մինրան Ճիզմեճեան, Գրիգոր Տէօվլէթեան, Միքայէլ Գայլոնճեան, Կարապետ Ճիվանեան։

Վարժարան. — Ս. Ներսէսեան։ — Աշակերտ 99, Աշակերտուհի 80։

---

13. ԳԱՍՄՄԱՇԱ

Ս. Յակոբ Մծբնայ

Գասմ բաչայի մէջ մատուռ մը կառուցուած է 1811ին և օծուած նոյն տարուան սեպտեմբեր 29ին։ Արդի եկեղեցւոյն հողը գնած ու նուիրած է Տօնիկ ամիրա։ 1854ին Միսաք ամիրա ձեռնարկած է հանգանակութեամբ կառուցանել զայն և հաղիւ հիմերը շինելով

կիսաւարտ թողած է։ Էքմէքճիպաշի Յակոբ Նորատունկեան ժողովրդէն դրամ հանգանակելով և ինքն ալ նպաստելով շարունակած և ամբողջացուցած է եկեղեցոյն շինութիւնը 1857ին։

Քահանայ. — Կարապետ Քէնյ.։

Թաղ. Խորհուրդ. — Զենոբ Եէմենիճեան, Մանուկ Ալթըբարմադեան, Նաղարէթ Դարագաշեան, Սարգիս Կիւլերեան, Սրապ Պայթարեան։

Վարժարան. — Ս. Մեսրոպեան։ — Աշակերտ 14, Աշակերտուհի 29։

—

14. ՂԱԼԱԹԻԱ

Ս. Լուսաւորիչ

Կ. Պոլսոյ արդի հայ եկեղեցիներուն հնագոյնն է ասիկա։ Այս եկեղեցոյն շինութեան բուն թուականը հին ձեռագրի մը մէջ գրուած է սապէս. «Ի թուին «Փրկչի 1391, ի Հայրապետութեան Տեառն Թէոդորոսի «ոմն վաճառական Կոմս անուն Կաֆայէ եկեալ ի Կ. «պոլիս, հրաման առեալ շինելոյ զԵկեղեցի մի ի Ղա«լաթիա, կոչելով զանուն Ս. Լուսաւորիչ, և զմա«տուռ Ս. Խաչին Աւետ ոմն դարբին շինեաց»։ 1731ի Ղալաթիոյ մեծ հրդեհին այս եկեղեցին այրեցաւ։ Յովհաննէս Կոլոտ Պատրիարք փութաց իսկոյն վերաշինութեան արտօնագիրը ձեռք բերել, և 1732 Դեկտ. 13ին հիմնադրութիւնը տեղի ունեցաւ։ Եկեղեցին հիմէն շինուեցաւ Սարգիս Խալֆայի ձեռքով, կամարակապ և փառաւոր։ Եկեղեցոյն ներքին որմերը զարդարուեցան պատկերներով զոր նկարեց Կեսարացի Եսայի ծաղկարար, եղբայր ԺԸ դարու նշանաւոր Հայ նկարիչ Բարսեղի։ Միջին տաճարին երկու քովերը շինուեցան նաեւ երկու փայտակերտ եկեղեցիներ։ Այս

եկեղեցւոյն բակը թաղուեցաւ Յովհաննէս Կոլոտ Պատրիարք 1741ին, իսկ 1771 Փետր 7ի մեծ հրդեհին եկեղեցին նորէն այրեցաւ և միայն միջին քարաշէն տաճարը մնաց։ 1799ի վերջերը եկեղեցին նորոգուեցաւ նորէն Դանիէլ Պատրիարքի օրով։ Իսկ Ստեփանոս Ազաւնի Պատրիարքի օրով, 1834ին նորոգուած և օծուած հինգ եկեղեցիներէն մէկն էր նաեւ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչը, որուն վերջին նորոգութիւնը տեղի ունեցաւ 1888ին, երեք տաճարներու մէջ իրարու հաղորդակցութիւններ բանալով։

Քարոզիչ. — Տ. Բարդէն Ծ. Վրդ. Կիւլեսերեան։

Քահանայք. — Տ. Մեսրոպ Տ. Մեսրոպեան (1886) Փոխ-Ազգերեց, Տ. Գարեգին Յովակիմեան (1884), Տ. Թադէոս Տ. Մեսրոպեան (1900)։

Խնամակալութիւն. — Տես առանձին։

Վարժարան. — Կեդրոնական։ (Տես առանձին)։ Նախակրթարան Լուսաւորչեան։ — Աշակերտ 121, Աշակերտուհի 20։

—

15. ԲԵՐԱ

Ս. Երրորդութիւն, Ս. Յարութիւն եւ Ս. Լուսաւորիչ

Անցեալ դարուն սկիզբներէն կը յիշուի Բերայի մէջ Ս. Աստուածածին անուն եկեղեցի մը որ հաւանօրէն Ս. Երրորդութեան եկեղեցւոյն տեղը կը բարձրանար։ 1814ին Բերայի հայերը կը դիմեն Աբրահամ Պատրիարքին եկեղեցւոյն նորոգութեան ձեռնարկելու համար, որովհետեւ շատ ատենէ ի վեր եկեղեցին այրելով, աւեր և անչէն մնացած էր։ Վերջապէս 1838ին եկեղեցին կը կառուցուի ժամանակին ամիրաներուն ջանքով և Ստեփանոս Պատրիարք կ՚օծէ զայն նոյն տարւոյն Յունիս 18ին։ Ս. Յարութիւն յառաջ Հիւանդանոցի մատուռ

էր, փայտաշէն և խարխուլ լինելուն, նորէն չինուեցաւ 1895ին արդեամբ Էսահան Յ. և Մ. Եղբարց։ Իսկ Ս. Լուսաւորիչ Բանկալթիի գերեզմանատան մէջ չինուեցաւ 1865ին և փայտաշէն։

Քարոզիչ. — Տ. Հմայեակ Եպիսկ. Դիմաքսեան։

Քահանայք. — Տ. Յովհաննէս Ս. Քնյ. Մկրեան (1866) Աւագերէց, Տ. Թադէոս Թաթարեան (1857) Փոխ-Աւագերէց, Տ. Գէորգ Անդրանիկեան (1869), Տ. Ներսէս Նաղիկեան (1885), Տ. Կոմիտաս Սպեան (1887), Տ. Խորէն Յարութիւնեան (1889), Տ. Յակոբոս Տէլեճեքեան (1893), Տ. Գրիգոր Ճեպեճեան (1898), Տ. Սահակ Բաբաղեան (1898), Տ. Մեսրոպ Տ. Մեսրոպեան (1892), Տ. Արիստակէս Թաշճեան (1893)։

Թաղ. Խորհուրդ. — Միքայէլ Մամիկոնեան՝ Ատենապետ, Տոքթ. Եդուարդ Մասիս՝ Ատենադպիր, Տիրան Կիւմիւշկերտան՝ Գանձապետ, Յարութիւն Ինճիճեան, Տոքթ. Յակոբ Պէկեան, Գրիգոր Սէլիմիէճեան, Վահան Էսահան, Խաչիկ Ղազարոսեան։

Պարտուց Բարձեան եւ Կալուածոց Յանձնաժողով. — Տիգրան Թոգատեան՝ Ատենապետ, Արտաշէս Մկրեան՝ Ատենադպիր, Միհրան Մուրատեան՝ Գանձապետ, Միհրան Թնկրեան, Յակոբ Սթամպուլեան։

Շիշլիի Գերեզմանատան Յանձնաժողով. — Տ. Յովհաննէս Ս. Քնյ. Մկրեան՝ Նախագահ, Տիգրան Թոգատեան՝ Ատենապետ, Տ. Խորէն Յարութիւնեան՝ Ատենադպիր, Խաչիկ Ղազարոսեան՝ Գանձապետ, Միհրան Մուրատեան, Օննիկ Տէրունեան, Տոքթ. Մագսուտ Շերպէթճեան։

Աղքատախնամ. — Տոքթ. Տիգրան Պէյ Ամէրեան՝ Ատենապետ, Տոքթ. Տիրան Գաբամաճեան՝ Ատենադպիր, Տոքթ. Սեղբոսեան, Մագսուտ Նարկիլեճեան, Տկն.

Տիրուհի Մամիկոնեան, Տկն. Զարուհի Խաչերեան։

Վարժարանք. — Էսահան, Նարեկեան, Լուսաւորչեան Արշակունեան։ Աշակերտ 478, Աշակերտուհի 263։ — Տեսուչ՝ Գրիգոր Մարգարեան։

—

16. ՖԵՐԻՔԷՕՅ

Ս. Վարդան

Այս եկեղեցւոյն հողը 1858ին Ֆէյթուլլահ անուն Ասորիէ մը նուիրուելով, եկեղեցին չինուած է 1860-61ին։ Օծումը կատարուած է 1866 Ապրիլ 30ին։

Քարոզիչ. — Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Սարգեան։

Քահանայք. — Տ. Գէորգ Անանեան (1894), Տ. Ղեւոնդ Սուքիասեան (1894)։

Թաղ. Խորհուրդ. — Աղնիւ Տէր Ահարոնեան՝ Ատենապետ, Տոքթ. Սարգիս Արզուեան, Պիմէն Տ. Գասպարեան։

Վարժարան. — Ս. Մեսրոպեան։ — Աշակերտ 13, Աշակերտուհի 16։

—

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԵԼԱՆՈՑ

Ս. Աստուածածին

Խասքէօյի և Բերայի բարձունքին վրայ Կայսերական հրամանով կառուցուած համազգային անկելանոցին մէջ Հայոց և Յունաց յատուկ երկու եկեղեցիներ ալ չինուած են։ Հայոց եկեղեցին օծուած է յանուն Ս. Աստուածածնի 1898, Մայիս 17ին։

Քարոզիչ. — Տ. Վրթանէս Վրդ. Գալբաճեան։

Խնամակալ. — Յովհաննէս Պոյաճեան։

—

17. ՊԵՇԻԿԹԱՇ

Ս. Աստուածածին

Պեշիկթաշի եկեղեցին կը յիշուի ԺԸ. դարէն։ Դարուս սկիզբները փայտաշէն շինուած է, և 1838ին քարուկիր կառուցուած Պալեան Կարապետ Ամիրայի ձեռամբ և արդեամբ։

Քարոզիչ. — Տ. Գնել Վրդ. Գալէմքեարեան։

Քահանայք. — Տ. Յովհան. Ս. Քհնյ. Սրսէնեան (1866)՝ Աւագերէց, Տ. Սահակ Պետրոսեան (1870), Տ. Պարգև Ամատունի (1898)։

Թաղ. Խորհուրդ. — Տրդատ Տատեան՝ Ատենապետ, Յովհաննէս Ալալեմեան՝ Ատենադպիր, Բարսեղ Կիւլպենկեան՝ Գանձապետ, Տոքթ. Ճանիկ Քրիսեան, Զենոբ Հիսարլեան, Յակոբ Սարաֆեան, Խաչիկ Խորասանճեան, Դանիէլ Հանէսեան, Զգօն Խորասանճեան։

Վարժարան. — Մաքրուհեան։ — Աշակերտ 101, Աշակերտուհի 79։

---

18. ՕՐԹԱՔԷՕՅ

Խնդրակատար Ս. Աստուածածին

Այս եկեղեցին նախ կառուցուած էր յանուն Ս. Կիրակոսի, սակայն Յովհաննէս Կոլոտ Պատրիարք 1726-27ին նորոգ կառուցած է զայն և օծումը տեղի ունեցած է Կարապետ Կաթողիկոսի ներկայութեամբ, ինչպէս կը պատմէ Ինճիճեան։ Կարապետ Պատրիարքի օրով այս եկեղեցին կը նորոգուի և օծումը փառաւոր հանդէսով տեղի կ'ունենայ 1824 Դեկտ. 15ին։

Քարոզիչ. — Տ. Վահրամ Եպ. Մանկունի։

Քահանայք. — Տ. Սահակ Ա. Քհնյ. Տ. Սարգսեան (1854)

Աւագերէց, Տ. Վրդանէս Պալեան (1863), Տ. Ղեւոնդ Մուրատեան (1898)։

Թաղ. Խորհուրդ. — Սոսաքել Համամճեան, Լեւոն Յակոբեան, Մկրտիչ Գաղանճեան, Մկրտիչ Նիկողոսեան, Միհրան Խանճեան, Յակոբ Գուրդէն, Յարութիւն Զէյքի Մանուկեան։

Վարժարանք. — Ս. Թարգմանչաց և Հռիփսիմեանց Նեկտարիտեան։ Աշակերտ 85, Աշակերտուհի 75։ — Տեսուչ՝ Արիստակէս Պոյաճեան։

---

19. ԴՈՒՐՈՒ ՁԵՇՄԷ

Ս. Խաչ

Կաղզուանցի Զաքարիա Պատրիարք 1797ին ձեռնարկած է նորոգել, մեծ մասամբ իր ծախքով, Դուրու Զեշմէի Ս. Նշան եկեղեցին։ Եկեղեցւոյն օծումը տեղի ունեցած է 1798 Փետր. 28ին յանուն Ս. Խաչի։ Այս եկեղեցին նորոգուած է 1834ին և օծումը կատարուած է նոյն տարւոյն Նոյեմբեր 16ին։

Քարոզիչ. — Տ. Գրիգորիս Սրբեպ. Յովհաննիսեան։

Քահանայ. — Տ. Սուքիաս Պալրդճեան (1892)։

Թաղ. Խորհուրդ. — Սարգիս Սրապեան՝ Ատենապետ, Սեպուհ Նաւասարդեան՝ Ատենադպիր, Խաչիկ Գէորգեան, Անտոն Բերտեճեան, Եղիա Կիւմիւշճեան։

Վարժարան. — Ս. Թարգմանչաց։ — Աշակերտ 38, Աշակերտուհի 19։

---

20. ՌՈՒՄԵԼԻ ՀԻՍԱՐ

Ս. Սանդուխտ

Անցեալ դարուն վերջերը շինուած էր արդէն Ռումելի Հիսարի եկեղեցին՝ յանուն Սրբուհի Սանդուխտի։

1856ին Յակոբոս Պատրիարքի օրով նորէն կառուցուած է ճանիկ Ամիրայի կտակին համաձայն՝ Մուպահեաճեան Յակոբ աղայի ձեռքով։ Օծումը տեղի ունեցած է նոյն տարուան Յուլիս 29ին։

Քարոզիչ. —

Քահանայ. — Տ. Մկրտիչ Նախնիքեան (1882)։

Թաղ. Խորհուրդ. — Միքայէլ Շիշմանեան՝ Ատենապետ, Երուանդ Զավուշեան՝ Ատենադպիր, Եղնա Պէօրէկեան, Կարապետ Տ. Աբրահամեան, Պարթև Յակոբեան։

Վարժարան. — Ս. Թադէոսեան։ — Աշակերտ 16, Աշակերտուհի 18։

—

21. ՊՈՅԱՃԸՔԷՕՅ

Ս. Երեք Մանկունք

Այս եկեղեցին կառուցած է Միսաք Ամիրա, իբր 60 տարի առաջ, փայտաշէն։ Նորէն շինուած է քարուկիր 15 տարիի չափ առաջ և օծուած է 1885 Սեպտ. 8ին։

Քարոզիչ. —

Քահանայ. — Տ. Պետրոս Յակոբեան (1882)։

Թաղ. Խորհուրդ. — Գէորգ Աբրահամեան՝ Ատենապետ, Գասպար Ֆենէրճեան՝ Ատենադպիր, Մինրան Աբամաղանեան՝ Գանձապետ, Պետրոս Յովակիմեան, Կոստանդ Գալչինեան։

Վարժարան. — Ս. Երից Մանկանց։ — Աշակերտ 10, Աշակերտուհի 9։

—

22. ՍԹԵՆԻԱ

Ս. Յովհաննէս Կարապետ

Այս փոքրիկ եկեղեցին ալ կառուցած է Միսաք Ամիրան 1857ին։

Քահանայ. —

Առժամ. Թաղ. Խորհուրդ. — Քերովբէ Մարգարեան՝ Ատենապետ, Ստեփան Գաբրիէլեան՝ Ատենադպիր, Ալիքսան Յարութիւնեան՝ Գանձապետ, Աւետիս Պողաճեան, Պապիկ Պապիկեան, Յովհաննէս Գէորգեան, Մկրտիչ Սարգսեան։

—

23. ԵԷՆԻՔԷՕՅ

Ս. Աստուածածին

Հ. Ինճիճեան 1796ին կը գրէ թէ Եէնիքէօյի մէջ Հայերն ունին Ս. Աստուածածին անունով եկեղեցի մը։ 1834ին այս եկեղեցին կը նորոգուի Նէվրուզեանց արդեամբ և Ստեփանոս Պատրիարք կ'օծէ զայն Յունիս 27ին։

Քարոզիչ. — Տ. Յակոբոս Ծ. Վրդ. Շահպաղլեան։

Քահանայ. — Տ. Բարսեղ Կարմրուկեան (1886)։

Թաղ. Խորհուրդ. — Տիգրան Եուսուֆեան՝ Ատենապետ, Սեղուհ Տեմիրճիպաշեան՝ Ատենադպիր, Պետրոս Պերպերեան՝ Գանձապետ, Յակոբ Թոմաեան, Գալուստ Ծերունեան։

Վարժարան. — Մամիկոնեան։ — Աշակերտ 11, Աշակերտուհի 13։

—

24. ՊԷՕՅԻԻՔՏԷՐԷ

Ս. Հռիփսիմէ

Այս եկեղեցւոյն հիմնադիրներն են Գէորգ պէյ և

Կարապետ պէյ Երամեան, թէև չինութեան տեղը, եկեղեցւոյն մօտ գտնուած աղօրիքին Հայ գործաւորներն ալ մասնակցած են չինութեան ծախքերուն։
Քարոզիչ. — Յակոբոս Ծ. Վրդ. Շահպաղեան։
Քահանայ. — Տ. Գրիգոր Երէցեան (1886)։
Թաղ. Խորհուրդ. —
Վարժարանք. — Ս. Հռիփսիմեանց և Ս. Մեսրոպեան։ — Աշակերտ 12, Աշակերտուհի 15։

—

25. ՊԷՅԳՈՂ

Ս. Նիկողայոս

Պէյգողի Ս. Նիկողայոս եկեղեցին կը յիշէ Ինճիճեան որ 1796էն առաջ այցելած է Պէյգող։ 1334ին Ստեփանոս Աղաւնի Պատրիարքի օրով նորոգուած և օծուած է նոյն տարուան Սեպտ. 16ին։
Քահանայ. — Տ. Համազասպ Պասմաճեան (1886)։
Թաղ. Խորհուրդ. — Սլիքսան Նշանեան՝ Աստենապետ, Եղիա Կարապետեան՝ Աստենադպիր, Գաբրիէլ Կարապետեան՝ Դանձապետ, Կարապետ Գրիգորեան, Աւետիս Գէորգեան։
Վարժարան. — Ս. Նիկողայոսեան։ — Աշակերտ 13, Աշակերտուհի 4։

—

26. ԳԱՆՏԻԼԻ

Երկոտասան Առաքեալք

Այս եկեղեցին կառուցուած է 1846ին, և Մատթէոս Պատրիարք օծած է զայն նոյն տարին, Սեպտ. 22ին։ Վերջերս հիմէն նորոգուեցաւ 1894ին։
Քահանայ. —

Թաղ. Խորհուրդ. — Եղիազար Մելիքեան՝ Աստենապետ, Միհրան Միրիճանեան, Առաքել Աբիկեան, Յարութիւն Բէիզեան, Մարգար Խանճեան։
Վարժարան. — Ս. Առաքելոց։ — Աշակերտ 3, Աշակերտուհի 1։

—

27. ԳՈՒՉԿՈՒՆՃՈՒԳ ԵՒ ԻՃԱՏԻՔ

Ս. Լուսաւորիչ

Այս եկեղեցին հիմնած է 1835ին Յովհաննէս ամիրա Սերվերեան, Սկիւտարի Ճեմարանին բարերարը։ Ստեփանոս Աղաւնի Պատրիարք նոյն տարին օծած է Մայիս 11ին։ Յետոյ նորոգուած է 1861ին։
Քարոզիչ. —
Քահանայք. — Տ. Կարապետ Ա. Քհնյ. Սէթեան (1857) Աւագերէց, Տ. Գրիգորիս Յակոբեան (1899)։
Թաղ. Խորհուրդ. — Տիգրան Տ. Ներսէսեան՝ Ա. Աստենապետ, Յարութիւն Մուրատեան՝ Բ. Աստենապետ, Յակոբ Գորեան՝ Աստենադպիր, Համբարձում Գազազեան՝ Դանձապետ, Տիրան Նազարեան, Կարապետ Պասմաճեան, Գրիգոր Էրմէնեան, Կիրակոս Մալխասեան, Յարութիւն Բաչիկեան։
Վարժարանք. — Ներսէսեան և Երմոնեան։ Աշակերտ 143, Աշակերտուհի 130։ — Տեսուչ՝ Գալուստ Մալթեան։

—

28. ՍԿԻՒՏԱՐ—ՍԵԼԱՄԻՔ

Ս. Խաչ

Ս. Խաչ եկեղեցին 1697ին հիմնած է Տ. Աբրահամ Քհնյ. որուն գերեզմանը կը գտնուի եկեղեցւոյ աջակողմեան բակի պարտէզին մէջ։ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքը 1727ին նորոգած է այս եկեղեցին որ նորէն

կառուցուած է 1830ին, ժողովրդային հանգանակութեամբ, Կարապետ Պատրիարքի օրով։

Քարոզիչ. — Տ. Մկրտիչ Եպ. Վեհապետեան։

Քահանայ. — Տ. Գաբրիէլ Ա. Քհնյ. Խանճեան (1868) Աւագերէց, Տ. Արսէն Պապաեան (1873), Տ. Խորէն Բաբաղեան (1873), Տ. Հմայեակ Եքսէրճեան (1893), Տ. Վահրամ Յակոբեան (1893), Տ. Տաճատ Բաչայեան (1898), Տ. Աբրահամ Էպէեան (1900)։

Թաղ. Խորհուրդ. — Գէորգ Թորգոմեան՝ Ատենապետ, Գարեգին Տեմիրճիպաշեան՝ Ատենադպիր, Բարթող Թէլեան, Մագսուտ Նարլեան, Սարգիս Տանճիկեան, Յարութիւն Ալթըբարմագեան, Գրիգոր Աբրապեան, Մկրտիչ Եաղմաճեան, Սիմոն Մաղլմեան։

Աղքատախնամ. — Գրիգոր Ֆերհատեան, Աւետիս Տէր Միքայէլեան, Բարթամ Լոգմակէօղեան, Միհրան Զիթճեան։

Վարժարան. — Ս. Խաչ։ Աշակերտ 146, Աշակերտուհի 166։ — Տեսուչ՝ Գարեգին Գալաֆեան։

—

29. ՍԿԻՒՏԱՐ—ԵԷՆԻ ՄԱՀԱԼԼԷ

Ս. Կարապետ

Վանեցի Զաքարիա Վարդապետ շինած է այս եկեղեցին ԺԷ. դարուն և Յովհաննէս Կոլոտ Պատրիարք նորոգած է զայն 1727ին։ Ս. Կարապետի դիմացը կառուցուած է նոյն ատենները Ս. Երուսաղէմի Պոլիս գտնուող միաբաններու համար վանք մը։ Երուսաղէմի Պատրիարք Գրիգոր Շղթայակիր երբ Պոլիս եկաւ 1736ին, այս վանքին մէջ նոր սենեակներ շինել տուաւ։ Այս վանքին տեղին վրայ շինուեցաւ յետոյ Ճեմարանը։ 1844ին նորոգուած, 1887ին այրած և

1888ին վերստին նորոգուած է Ս. Կարապետ եկեղեցին Մ. և Ս. Ունճեան եղբարց արդեամբ և նորոգ օծուած Նոյեմբեր 20ին։

Քարոզիչ. — Տ. Ներսէս Ծ. Վրդ. Դանիէլեան։

Քահանայ. — Տ. Խորէն Ս. Քհնյ. Փէշլիվանեան (1868) Աւագերէց, Տ. Բարթողիմէոս Թադէոսեան (1888), Տ. Վարդան Պաղտատլեան (1890), Տ. Եղիշէ Գալշընեան (1899)։

Թաղ. Խորհուրդ. — Տիգրան Եղեկիէլեան՝ Ատենապետ, Թումիկ Սուրէնեան՝ Ատենադպիր, Սթանիկ Իւթիւճեան՝ Գանձապետ, Ալիքսան Սագաեան, Անիկտոս Ահարոնեան, Մագսուտ Մարտիկեան, Միհրան Աբծիւեան, Միհրան Ուղուրիկեան, Յովհաննէս Ունճեան։

Վարժարան. — Ճեմարան։ — Աշակերտ 84, Աշակերտուհի 65։

—

30. ԳԱՏՐԻՕՑ

Ս. Թագաւոր

Առաջին անգամ 1814ին կը գտնենք այս եկեղեցւոյն յիշատակութիւնը։ Այդ տարին նորոգ կը շինուի այս եկեղեցին և փառաւոր հանդէսով կ'օծուի Յուլիս 4ին, Աբրահամ Պատրիարքի օրով։ Յետոյ 1858ին հիմէն կը կառուցուի նորէն։

Քարոզիչ. — Տ. Աղան Ծ. Վրդ. Համամեան։

Քահանայ. — Տ. Կարապետ Ա. քհնյ. Սանտալճան (1872) Աւագերէց, Տ. Խոսրով Գալբաքճեան (1887), Տ. Վարդան Դերձակեան (1894)։

Թաղ. Խորհուրդ. — Տոքթ. Յակոբ Սահաթճեան՝ Ատենապետ, Ռուբէն Քեմհաճեան՝ Ատենադպիր, Գառնիկ Համբարձումեան, Գրիգոր Գառնակերեան, Գա-

րեգին Զերքէզեան, Գրիգոր Նազաշեան, Աստուածատուր Հարենց։

Վարժարան. — Աշակերտ 123, Աշակերտուհի 80։ Տեսուչ՝ Նշան Թորոսեան։

—

31. ԳԱՐԹԱԼ

Ս. Նշան

Գարթալի Ս. Նշան եկեղեցին դարուս սկիզբները խարխուլ վիճակի մէջ ըլլալով, Պէղճեան ամիրա կառուցած է իր ծախքով։ 1857ին նորէն կը կառուցուի այս տաճարը։

Քահանայ. — Տ. Մուշեղ Նաւարարեան (1896)։

Թաղ. Խորհուրդ. — Լեւոն Նշանեան՝ Աստեղապետ, Մագսուտ Իսրայէլեան՝ Աստեղապիր, Մնտ. Բիւզանդ Մկրեան՝ Գանձապետ, Կարապետ Քերիմեան, Նշան Մարտիրոսեան։

Վարժարան. — Պէղճեան։ — Աշակերտ 32, աշակերտուհի 36։

—

32. ԱԼԷՄ ՏԱՂԻ

Ս. Նշան

Այս եկեղեցին չինուած է 1835ին։

Քահանայ. — Տ. Մուշեղ Մարտիրոսեան (1898)։

Թաղ. Խորհուրդ. —

Վարժարան. — Ս. Նշան։ — Աշակերտ 10, Աշակերտուհի 8։

—

33. ԳԸՆԱԼԸ ԿՂՋԻ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ

1855 Յուլիս 8ին տեղի ունեցաւ այս եկեղեցւոյն հիմերուն օծման հանդէսը, և 1858 Սեպտ. 22ին ալ եկեղեցւոյն օծումը զոր կատարեց Յակոբ Պատրիարք։

Քահանայք. — Տ. Դիոնեսիոս Ս. Քհնյ. Ճիզմէճեան (1857) Աւագերէց, Տ. Վահան Խոյեան (1882)։

Թաղ. Խորհուրդ. — Մինրան Սէթեան՝ Աստեղապետ, Արսէն Արսէնեան, Տոքթ. Տիրան Բաբաղեան, Նշան Անդրէասեան, Նազարէթ Եաղըճեան, Լեւոն Հաճեան։

Վարժարան. — Ս. Ներսէսեան։ — Աշակերտ 27, Աշակերտուհի 13։

—

34. ՄՍԳՐԻՔԷՕՑ

Ս. Աստուածածին

«Կառուցուեցաւ յանուն ծնունդ Ս. Աստուածածնայ եկեղեցիս արդեամբ Տատեան Աղնուազարմ Յովհ. պէյի, յամի Տեառն 1844 Ապրիլ 7։»

Քարոզիչ. — Տ. Վահրիճ Վրդ. Շահլամեան։

Քահանայք. — Տ. Սարգիս Զոհրապեան (1888) Փոխ-Աւագերէց, Տ. Միքայէլ Ոսկերիչեան (1878), Տ. Պետրոս Տ. Պետրոսեան 1894)։

Թաղ. Խորհուրդ. — Յակոբ Դաղաղեան, Հայկ Անտոնեան։ (Մեռ անդամ՝ Գէորգ յաելուածին մէջ)։

Դպրաց Դաս. — Գրիգոր Մեհտէրեան՝ Դպրապետ, Միքայէլ Քեռբատէճեան՝ Դասապետ ուսուցիչ, Սրմենակ Թելլալեան՝ Աստեղապետ։

Վարժարան. — Տատեան։ Աշակերտ 180, Աշակերտուհի 100։ — Տեսուչ՝ Պօղոս Պեղաղեան։

—

35. ԱՅՍԹԷՖԱՆՈՅ

Ս. Ստեփանոս

Այս եկեղեցին կառուցած է վառօդապետ Սիմոն ամիրա Տատեան 1826ին, յետոյ իր որդին Տատեան Պօղոս պէյ նորէն շինած է զայն 1845ին։ Օծումը տեղի ունեցած է 1846 Յուն. 13ին, Աստուածատուր Պատրիարքի օրով։

Քահանայ. — Տ. Խորէն Քիւրքճեան։

Թաղ. Խորհուրդ. — Գէորգ Ասլանեան՝ Ատենապետ։

Վարժարան. — Գաբամաճեան։ — Աշակերտ 16, Աշակերտուհի 8։

—

36. ԱՂԱՏԼՐ

Ս. Աստուածածին

Այս եկեղեցւոյն հիմնարկութիւնը տեղի ունեցած է 1835 Յուլ. 28ին Ստեփանոս Աղաւնի Պատրիարքին օրով։ Յովհաննէս ամիրա Տատեան ի յիշատակ իր հօրը՝ Տատեան Առաքել Ամիրայի, տուաւ շինութեան բոլոր ծախքերը։ Օծումը կատարուած է 1837 Ապրիլ 25ին։

Քահանայք. — Տ. Դաւիթ Ճանիկեան (1869), Տ. Յովհաննէս Տ. Ստեփանեան (1900)։

Թաղ. Խորհուրդ. — Կարապետ Քիւրքճիխանլեան։

—

ԳԱՂԼԸ ՉԵՇՄԷ, ԵԷՏԻ ԴՈՒԼԷԷ ԴՈՒՐՍ

Ս. Փրկիչ

Աղգ. Հիւանդանոցին հետ շինուեցաւ այս փայտաշէն մատուռն ալ 1832-33ին։

Քարոզիչ. — Տ. Վահան Ծ. Վրդ. Բրոխորոնեան։

Խնամակալութիւն. — Աղգ. Հիւանդանոցի։

Վարժարան. — Ս. Փրկչեան Որբանոց աղջկանց և մանկանց։

—

ՉԷՅԹԻՆ ՊՈՒՐՆՈՒ, ԵԷՏԻ ԴՈՒԼԷԷ ԴՈՒՐՍ

Ս. Յակոբ

Այս մատուռը շինուած է Ս. Յակոբայ վանքին մէջ, 1832ին, Ս. Փրկչեան Հիւանդանոցէն 5 վայրկեան հեռու։ Հիւանդանոցի 1848-52ի Հոգաբարձութեան միջոցին այս մատուռը ընդարձակեց Տատեան Պօղոս պէյ, իր անձնագրին՝ Գաբամաճեան Անտոն աղայի ձեռքով։ Պալեան Կարապետ ամիրա նորոգեց և զարդարեց զայն 1859ին։

Խնամակալութիւն. — Ս. Փ. Հիւանդանոցի։

Վարժարան. — Ս. Փրկչեան Որբանոցի նախակրթարան։

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐ

1. ԷՏԻՐՆԷ

Առաջն. Տեղապահ. — Տ. Արսէն Քհնյ. Դերձակեան։

Կրօն. Ժողով. — Տ. Արսէն Դերձակեան, Տ. Մկրտիչ Պասմաճեան, Տ. Մարտիրոս Թոլայեան։

Քաղ. Ժողով. — Գրիգոր Ստեփանեան, Գրիգոր Զաքրեան, Յակոբ Աւետիսեան, Յակոբ Բիլիճեան, Մկրտիչ Սահակեան, Յարութիւն Ջիլճեան, Սարգիս Սարգիսեան։

Եկեղեցիք. — Էսքիշեհիր՝ Ս. Թորոս, Ս. Կարապետ. — Տիմոթեոքա՝ Ս. Գէորգ. — Կիւմիւլճինա՝ Ս. Լուսաւորիչ. — Տեռէ-աղաճ՝ Ս. Կարապետ։ Ընդամէնը 5 եկեղեցի։

—

2. ԹԵՐԻՐՏԱՂ

Առաջնորդ. — Տ. Ներսէս Եպիսկ. Աւանեան։
Փոխանորդ. — Տ. Մամբրէ Քհնյ. Քիրազեան։
Կրօն. Ժողով. —
Քաղ. Ժողով. — Աստուածատուր Փափազեան, Գրիգոր Շուշանեան, Մհտ. Յակոբ Գալուստեան, Մհտ. Յակոբ Բոստանճեան, Յարութիւն Թէէմինեան, Յարութիւն Մեհտէրեան, Սեդրակ Փափազեան,
Եկեղեցիք. — Թէքիրտաղ՝ Ս. Թադաւոր, Ս. Խաչ. — Մալկարա. — Զորլու. — Սիլիվրի. — Կելիպոլու. — Չանադգալէ. — Եզինէ. — Պիղա։ Ընդամէնը 8 եկեղեցի։

—

3. ԻԶՄԻՏ

Առաջնորդ. — Տ. Սահակ Եպիսկ. Յովակիմեան։
Փոխանորդ. — Տ. Վահան Քհնյ Նաւասարդեան։
Կրօն. Ժողով. — Կարապետ Վրդ. Մաղլիմեան, Ներսէս Ա. Քհնյ. Տոպրաշեան, Վահան Քհնյ. Նաւասարդեան, Ոսկի Քհնյ. Պիպիեան, Կարապետ Ա. Քհնյ. Մխալեան, Մկրտիչ Քհնյ. Աղարեան, Գաբրիէլ Քհնյ. Երամեան։
Քաղ. Ժողով. Յովհաննէս Աբրահամեան, Յարութիւն Պէյազեան, Գէորգ Ղազարոսեան, Յակոբ Պիպիեան Գրիգոր Կուաճեան, Մելգոն Գասպարեան, Գրիգոր Հելվաճեան։

Եկեղեցիք. — Իզմիտ՝ Ս. Աստուածածին. — Պահճէճիկ՝ Ս. Յակոբ. — Տէօնկէլ Ս. Սարգիս. — Օվաճրգ՝ Ս. Լուսաւորիչ. — Արվանպէկ՝ Ս. Աստուածածին. Տաղքէօյ՝ Ս. Նշան. — Սապանճա՝ Ս. Աստուածածին. — Ատաբազար Ս. Կարապետ, Ս. Հրեշտակապետ, Ս. Լուսաւորիչ, Ս. Սահակոս. — Կէյվէ Օրթաքէօյ՝ Ս. Աստուածածին. — Էջմէ (Կէյվէ). — Գուրտպէլէն՝ Ս. Աստուածածին. — Գընճրլար՝ Ս. Աստուածածին. — Ագիսար՝ Ս. Երրորդութիւն, Ս. Աստուածածին. — Թամլրգ Ս. Ստեփանոս. — Եէնիքէօյ (Թամլրգ). — Ֆընտրգլը՝ Ս. Գէորգ. — Ալմալը՝ Ս. Լուսաւորիչ. — Գըզըլճրգ. — Գովուգ բէլիտ. — Սէօքքէօյ՝ Ս. Աստուածածին. — Զոսան եաթագ. — Մենէմէն՝ Ս. Աստուածածին. — Պրչկը. — Պոլու՝ Ս. Աստուածածին, Ս. Կարապետ. — Մերտէկէօղ՝ Ս. Կարապետ. — Եալագտերէ՝ Ս. Հրեշտակապետ — Բէրբէմէթ՝ Ս. Աստուածածին. — Բազար Մեծ Նոր գիւղ՝ Ս. Կարապետ. — Բազար Օրթաքէօյ՝ Ս. Աստուածածին, Զենկիլէր՝ Ս. Մինաս. — Քարցի՝ Ս. Աստուածածին. — Զուգուրքէօյ՝ Ս. Աստուածածին. — Շագշագ՝ Ս. Նիկողոս. — Գրլըճ՝ Ս. Սարգիս։ Ընդամէնը 40 եկեղեցի։

—

4. ՊՐՈՒՍԱ

Առաջնորդ. — Տ. Յովհաննէս Եպիսկ. Սրշարունի։
Փոխանորդ. — Տ. Եփրեմ Ս. Քհնյ։
Կրօն. Ժողով. —
Քաղ. Ժողով. — Գէորգ Պէքմէզեան, Գրիգոր Թութիւնճեան, Թովմաս Տ. Յովակիմեան, Թորոս Փի-

լիպպոսեան, Համբարձում Ամէմեան, Մկրտիչ Հաճըլարեան, Յակոբ Ալթըբարմադեան։

Եկեղեցիք. — Պրուսա՝ Ս. Աստուածածին. — Պէնկի՝ Ս. Յակոբ Մծբնայ. — Սէօլէօզ՝ Ս. Հրեշտակապետ. — Կէմլէյիկ՝ Ս. Թադէոս Բարթողիմէոս. — Եէնիշէհիր. — Եէնիճէ. — Ճերան. — Իզնիք. — Իզնիքի Նոր գիւղ։ Ընդամէնը 11 եկեղեցի։

—

5. ՊԱԼԸԲԷՍԻՐ–ՊԱՆՏՐՄԱ

Տեղապահ. — Տ. Թաթուլ Ծ. Վ. Դուրեան։

Փոխանորդ. — Պալըքէսիր՝ Տ. Ղեւոնդ Քհնյ. Աչճեան. — Պանտրմա՝ Տ. Պետրոս Քհնյ. Վարդանեան։

Կրօն. Ժողով. — Մուշեղ Քհնյ. Տապանեան, Մարտիրոս Քհնյ. Պողոսեան, Նշան Քհնյ. Բարունակեան.

Քաղ. Ժողով. — Գէորգ Գուշեան, Համբարձում Սրապեան, Թադէոս Տատուրեան, Աբրահամ Պահարեան, Յակոբ Պագըրճեան, Մելգոն Վարդանեան, Կարապետ Արեւեան։

Եկեղեցիք. — Պալըքէսիր՝ Ս. Աստուածածին. — Պանտրմա՝ Ս. Աստուածածին, Ս. Մինաս. — Քիրմասդը՝ Ս. Լուսաւորիչ. — Միխալըճ՝ Ս. Սարգիս. — Էմինճիկ՝ Ս. Յարութիւն.— Հայ գիւղ՝ Ս. Սարգիս. — Պիղա՝ Ս. Գէորգ։ Ընդամէնը 8 եկեղեցի։

—

6. ՊԻԼԷՃԻԿ

Առաջնորդ. — Տ. Մովսէս Եպ. Կէօմրիւքճեան։

Փոխանորդ. — Տ. Գրիգորիս Վրդ. Պալաքեան։

Կրօն. Ժողով. — Խորէն Քհնյ. Աւագեան, Յովհաննէս

Քհնյ. Աւետիսեան, Սիմոն Քհնյ. Մատթէոսեան, Թորոս Քհնյ. Պողոսեան։

Քաղ. Ժողով. — Գրիգոր Աբգարեան, Գրիգոր Կիրակոսեան, Թորոս Համբարձումեան, Յակոբ Գոճա-Յակոբեան, Սարգիս Ալթըբարմադեան, Տիգրան Հէքիմեան, Օհանիկ Պարսամեան։

Եկեղեցիք. — Պիլէճիկ. — Կէօլտաղ. — Նոր գիւղ. — Թիւրքմէն. — Ասարլըգ. — Եէնի Բազար. — Մուրատչայ. — Զալկարա. — Սլընճա։ Ընդամէնը 10 եկեղեցի։

—

7. ԹԵՕԹԱՀԵԱ

Առաջ. Տեղապահ. — Մկրտիչ Վրդ. Աղաւնունի։

Փոխանորդ. —

Կրօն. Ժողով. —

Քաղ. Ժողով. —

Եկեղեցիք. — Թեօթահեա՝ Ս. Աստուածածին. — Աֆիոն Գարահիսար՝ Ս. Աստուածածին. — Էսկիշէհիր՝ Ս. Երրորդութիւն. — Ուշակ՝ Ս. Աստուածածին. — Թաւշանլու՝ Ս. Ստեփանոս. — Արսլանպէյ՝ Ս. Յարութիւն. — Եէնիճէ՝ Ս. Խաչ. — Զիֆթլիկ։ Ընդամէնը 11 եկեղեցի։

—

8. ԻԶՄԻՐ

Առաջնորդ. — Տ. Մելքիսեդեկ Արքեպիսկ. Մուրատեան։

Փոխանորդ. —

Կրօն. Ժողով. —

Քաղ. Ժողով. — Աւետիս Աւետիքեան, Զարեհ Թագ-թագեան, Կարապետ Արապեան, Կիւլպէնկ Կիւ-

ղեղեան, Ղուկաս Եսայեան, Յակոբ Հարենց, Ստեփան Սպարթալեան։

Եկեղեցիք. — Իզմիր՝ Ս. Ստեփանոս, Ս. Յարութիւն. Մանիսա (վարի)՝ Ս. Սիոն. — Մանիսա (վերի)՝ Ս. Լուսաւորիչ. — Գասապա՝ Ս. Աստուածածին. — Ադ-Հիսար՝ Ս. Աստուածածին. — Գըրգաղաճ. — Ս. Աստուածածին. — Տենիզլի՝ Ս. Աստուածածին. — Նազիլլի՝ Ս. Աստուածածին. — Պայընտըր՝ Ս. Աստուածածին. — Էօտեմիշ՝ Ս. Հռիփսիմէ. — Այտըն՝ Ս. Աստուածածին. — Սէօքէ՝ Ս. Աստուածածին. — Գընըգ՝ Ս. Աստուածածին. — Պերկամա՝ Ս. Աստուածածին. — Մենեմէն՝ Ս. Սարգիս. — Ադչէհիր՝ Ս. Պօղոս, Ս. Երրորդութիւն. — Գարաթաշ՝ Ս. Կարապետ. — Գորտիլլիոյ՝ Ս. Աստուածածին. — Կէօղթեփէ՝ Ս. Երրորդութիւն. — Պրնովա՝ Ս. Խաչ. — Գուշատա՝ Ս. Աստուածածին։ Ընդամէնը 24 եկեղեցի։

Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Հաստատեալ 1801ին։

Եկեղեցի. — Ս. Լուսաւորիչ։

Հոգաբարձութիւն. — Նշան Յ. Հարենց՝ Ատենապետ, Յովհաննէս Գ. Բաբազեան՝ Ատենադպիր, Վաղարշակ Ոսկանեան՝ Գանձապետ, Յովհաննէս Գազուազեան՝ Մատակարար, Տոքթ. Տիգրան Սպարթալի՝ Բժշկապետ, Մագուտ Գալատեան։

Խնամակալութիւն. — Տիկնայք՝ Վառվառէ Ս. Իփլիքճեան, Թագուհի Յ. Պալըգճեան, Շողակաթ Մ. Գալուստեան։ Օրիորդք՝ Զապէլ Սվազլեան, Մարի Սիմոնեան։

Բժշկ. Մարմին. — Տոքթ. Տիգրան Սպարթալի, Տոքթ. Ռ. Ունճեան, Տոքթ. Էմիլ Մաճար, Տոքթ. Է. Բեթիսիս, Տոքթ. Շ. Զանէլի, Տոքթ. Մալուքաթի, Տոքթ. Արոնի։

Պաշտօնեայք. — Տեսուչ՝ Սարգիս Մերճանեան, չորս այր հիւանդապահ, չորս կին հիւանդապահ, մէկ դեղագործ, մէկ վիրաբոյժի օգնական, մէկ խոհարար և մէկ դռնապան։

—

9. ԷՆԿԻԻՐԻԻ

Առաջնորդ. — Եղիշէ Ծ. Վրդ. Գալֆեան։

Փոխանորդ. — Խորէն Բ. Ն. Գղիրեան։

Կրօն. Ժողով. —

Քաղ. Ժողով. —

Եկեղեցիք. — Էնկիւրիւ՝ Ս. Նշան, Ս. Կղեմէս, Ս. Սարգիս, Ս. Լուսաւորիչ, Ս. Հոգի, Ս. Քառասունք. — Սթանոզ՝ Ս. Փրկիչ. — Նալը խան՝ Ս. Կարապետ. — Գալէճիկ. — Տենէք Մատէն. — Գոնիա՝ Ս. Յակոբ. — Գարաման. — Պուրսուր. — Էլմալու. — Սպարդա. — Ատալիա. — Տէվրէկ. — Հայմանա։ Ընդամէնը 23 եկեղեցի։

Վանք. — Էնկիւրիի Ս. Աստուածածին։

—

10. ԳԱՅՍԵՐԻ

Առաջնորդ. — Տ. Տրդատ Եպ. Պալեան։

Փոխանորդ. —

Կրօն. Ժողով. —

Քաղ. Ժողով. — Թադէոս Մնտիկեան, Միքայէլ Շիմշիրեան, Ճիվան Գալբաղճեան, Յովհաննէս Քեահեաեան, Կարապետ Ճամճեան, Կարապետ Գուլումճեան։

Եկեղեցիք. — Կեսարիա՝ Ս. Աստուածածին, Ս. Սարգիս, Ս. Լուսաւորիչ. — Թալաս՝ Ս. Աստուածածին, Ս. Երրորդութիւն.—Բիւշիւք-քէօյ՝ Ս. Ստեփանոս. — Տէրէվանք՝ Ս. Թորոս. — Նիրզէ՝ Ս. Թորոս. — Սարմբսագլը՝ Ս. Աստուածածին. — Էֆքէրէ՝ Ս. Ստեփանոս. — Մանճբսրն՝ Ս. Խաչ. — Էվէրէկ՝ Ս. Թորոս.— Ֆենեսէ՝ Ս. Աստուածածին. — Էրքիլէթ՝ Ս. Գէորգ. — Զոմագլը՝ Ս. Թորոս, Ս. Յակոբ. — Ճիւճիւն՝ Ս. Աստուածածին. — Ինճէսու՝ Ս. Թորոս. — Թոմարզա՝ Ս. Պօղոս Պետրոս. — Գաբաճավերէն՝ Ս. Աստուածածին. — Նիյտէ՝ Ս. Աստուածածին. — Պոր՝ Ս. Աստուածածին. —Էրէյլի՝ Ս. Աստուածածին. — Ագսերայ՝ Ս. Աստուածածին. — Նէվշէհիր՝ Ս. Լուսաւորիչ. — Գըրշէհիր՝ Ս. Գէորգ. — Եէնիճէ. — Սէօյիւտլիւ. — Կէօմէտ. — Թաշխան. — Սաչագ. — Իլիպէ. — Եաղտը պրուն։ Ընդամէնը 28 եկեղեցի։

Վանք. — Կեսարիոյ՝ Ս. Կարապետ. — Թոմարզայի՝ Ս. Աստուածածին. — Տէրէվանքի՝ Ս. Սարգիս. — Նիրզէի՝ Ս. Գրիգոր։

—

11. ՍՎԱՋ

Առաջնորդ. — Տ. Պետրոս Արքեպիսկ. Թանմիզեան։
Փոխանորդ. — Տ. Սահակ Վրդ. Օտապաշեան։
Կրօն. ժողով. — Եսայի Քհնյ. Կարապետեան, Սահակ Քհնյ. Տ. Մարկոսեան, Գրիգոր Քհնյ. Մեծատուրեան, Փառներսեհ Քհնյ. Պէյլէրեան, Կրօնիդէս Քհնյ. Նալպանտեան, Մարտիրոս Քհնյ. Կէտիկեան։
Քաղ. ժողով. — Նշան Անդրէասեան, Սրապիոն Պագդալեան, Խաչատուր Թանտրճեան, Գէորգ Մեծատուրեան, Յակոբ Մեսիկեան, Կարապետ Շահինեան, Աւետիս Շահինեան։

Եկեղեցիք. — Սվազ՝ Մայր եկեղեցի, Ս. Սարգիս, Ս. Մինաս, Ս. Փրկիչ, Ս. Յակոբ, Ս. Գէորգ. — Դաւրա՝ Ս. Աստուածածին. — Եէնի խան՝ Ս. Խաչ. — Զարա՝ Ս. Լուսաւորիչ. — Ալաքիլիսէ՝ Ս. Մինաս. — Քարահատ՝ Ս. Աստուածածին, Գարապողազ՝ Ս. Խաչ. — Թէքելի՝ Ս. Գէորգ. — Քոթնի՝ Ս. Սարգիս. — Տէվէքլի՝ Ս. Գէորգ. — Իշխանի՝ Ս. Նիկողոս. — Եէնիճէ (Քէօթէ)՝ Ս. Գէորգ. — Խորսանա՝ Ս. Սարգիս. — Կովտուն՝ Ս. Աստուածածին. — Խանկաս՝ Ս. Սարգիս. — Գոչասար՝ Ս. Յակոբ. — Կամիս՝ Ս. Աստուածածին. — Եարասար՝ Ս. Սարգիս.—Ճանճին՝ Ս. Խաչ. — Թոսորակ Ս. Յակոբ. — Դաւշանլու՝ Ս. Թորոս. — Աղտ (Թուզլասար)՝ Ս. Կարապետ. — Զայքէօյ՝ Ս. Աստուածածին. — Պաղչէճիկ՝ Ս. Գէորգ. — Խորոխան՝ Ս. Հրեշտակապետ. — Ղաւրաղ՝ Ս. Փրկիչ. — Կաւրա՝ Ս. Սարգիս. — Ղալդի՝ Ս. Սարգիս. — Դղմաճ՝ Ս. Սարգիս. — Սարը Հասան՝ Ս. Գէորգ. Շնքուրակ՝ Ս. Սարգիս. — Պինկէօլ՝ Ս. Մինաս. — Պետրոսի՝ Ս. Յակոբ. — Ստանոզ՝ Ս. Թորոս. — Տէոցա՝ Ս. Կարապետ. — Բրաբերդ՝ Ս. Թորոս. — Ողնողիա՝ Ս. Յակոբ. — Թոզորակ՝ Ս. Յակոբ, եւն.։ Ընդամէնը 46 եկեղեցի։

Վանքորայք. — Ս. Նշան, Ս. Հրեշտակապետ, Ս. Անապատ, Ս. Խնդրակատար, եւն.։ Ընդամէնը 6 վանք

—

12. ԹՈԴԱԹ

Առաջնորդ. — Տ. Պետրոս արքեպ. Թանմիզեան։
Առաջն. փոխանորդ. — Տ. Ներսէս վրդ. Մկրտիչեան։

Կրօն. Ժողով. — Գէորգ Վրդ. Իպրանոսեան, Գաբրիէլ Քհնյ. Տէրտէրեան, Մարտիրոս Քհնյ. Կիւմիւշեան Պետրոս Քհնյ. Եղեկիէլեան։

Քաղ. Ժողով. — Աւետիս Զրաստունեան, Մհտ. Գէորգ Տ. Պօղոսեան, Կարապետ Շիրինեան, Մարտիրոս Ապտալեան, Պօղոս Եաղմայեան, Սուքիաս Սուքիասեան։

Եկեղեցիք. — Թոգաթ՝ Ս. Աստուածածին, Ս. Երրորդութիւն, Ս. Մինաս, Ս. Լուսաւորիչ. Ս. Ստեփանոս, Ս. Գէորգ, Ս. Քառասուն Մանուկ. — Զիլէ՝ Ս. Յակոբ. — Նիկսար՝ Ս. Աստուածածին. — Հերէք՝ Ս. Աստուածածին. — Զիթթիկ՝ Ս. Յակոբ. — Պոլիս՝ Ս. Լուսաւորիչ. — Գրիգորիա՝ Ս. Աստուածածին. — Պիսկինճիկ՝ Ս. Յակոբ. — Բերվանտէրայ՝ Ս. Աստուածածին. — Վարաղ՝ Ս. Սարգիս. — Էնտիզ՝ Ս. Փրկիչ։ Ընդամէնը 17 եկեղեցի։

Վանօրայք. — Ս. Յովակիմ Անա. — Ս. Յովհան Ոսկերերան։

—

13. ԱՄԱՍԻԱ - ՄԱՐԶՈՒԱՆ

Առաջնորդ. — Տ. Արիստակէս Եպիսկ. Վանքեան։

Փոխանորդ. — Տ. Ամասիա Քհնյ. Սաատէթեան։

Կրօն. Ժողով. — Ամասիա Քհնյ. Սաատէթեան, Ղեւոնդ Քհնյ. Տիլիկեան, Յովհաննէս Բահանայ Սարաճեան, Ուխտանէս Քհնյ. Աճէմեան, Մամբրէ Քհնյ. Ֆախրբեան։

Քաղ. Ժողով. — Գէորգ Թուլումպաճեան, Թադէոս Սրապեան, Յովհաննէս Եաղբճեան, Յովհաննէս Միւսպահեաճեան, Մարուքէ Պէկտեմիրեան։

Եկեղեցիք. — Ամասիա՝ Ս. Նիկողայոս, Ս. Յակոբ, Ս.

Աստուածածին. — Մարզուան՝ Ս. Աստուածածին. — Սիմ-Հաճի քէօյ՝ Ս. Յակոբ. — Վեղիր Քէօրրիւ՝ Ս. Գէորգ. — Ախլատ-Հաճիքէօյ՝ Ս. Գէորգ. — Լատիկ՝ Ս. Լուսաւորիչ. — Եէնիճէ՝ Ս. Սարգիս։ Ընդամէնը 25 եկեղեցի։

Վանք. — Մարզուանու Զարխափան Ս. Աստուածածին

—

14, 15. ՇԱՊԻՆ ԳԱՐԱ ՀԻՍԱՐ ԵՒ ԱԾՊՏԵՐ

Առաջնորդ. — Տ. Սմբատ Ծ. Վրդ. Սաատէթեան.

Փոխանորդ. — Տ. Մկրտիչ Քհնյ. Գալեոնճեան։

Կրօն. Ժողով. — Մկրտիչ Քհնյ. Գալեոնճեան, Ռեթէոս Քհնյ. Տ. Գէորգեան, Վարդան Քհնյ. Տէրտէրեան Նաթան Քհնյ. Տատեան, Սոփոնիա Քհնյ. Կարինեան։

Քաղ. Ժողով. — Գէորգ Քեմալեան, Թադէոս Պաունասեան, Նշան Մերճինեան, Երեմիա Ղուկասեան, Առաքել Գարակէօզեան, Յարութիւն Օզանեան, Նահապետ Կուլասեան։

Եկեղեցիք. — Շ. Գարահիսար՝ Ս. Աստուածածին, Ս. Փրկիչ. — Թամզարա՝ Ս. Թադաւոր. — Անեղրի՝ Ս. Աստուածածին. — Ծիպերի՝ Ս. Յակոբ. — Պուսէյիտ՝ Ս. Գէորգ. — Զրտաղ՝ Ս. Գէորգ. — Սիս՝ Ս. Երկոտասան Առաքեալք. — Անդրէաս՝ Ս. Աստուածածին, Ս. Սարգիս. — Եէնի-Քէօյ՝ Ս. Կարապետ Մկրտիչ. — Բիւրք՝ Ս. Աստուածածին, Ս. Յակոբ. — Իսկիշէհիր՝ Ս. Մինաս. — Համամ՝ Ս. Լուսաւորիչ. — Մշակնոց՝ Ս. Սարգիս, Ս. Յակոբ. — Կթանոց՝ Ս. Գէորգ. — Գոմէշտուն՝ Ս. Աստուածածին. — Աղրաբիս՝ Ս. Աստուածածին. — Ալամունիկ՝ Ս. Լուսաւորիչ. — Վարի Ածպտեր՝ Ս. Կարապետ. — Վերի Ածպտեր՝ . Աստուածածին. — Ղըրաճ՝ Ս

Համբարձում. — Սէվինտիկ՝ Ս. Ոսկերերան. — Սասունդու — Դմլուճ՝ Ս. Լուսաւորիչ. — Ապանա՝ Ս. Պօղոս Պետրոս. — Աղուանիս՝ Ս. Գէորգ. — Մանմէտ՝ Ս. Աստուածածին. — Քէչէյիւրտ՝ Ս. Աստուածածին։ Ընդամէնը 32 եկեղեցի։

Վանօրայք. — Վարի Ամպատեր՝ Ս. Նշան. — Թամզարա՝ Ս. Գէորգ. — Սիս՝ ԺԲ. Առաքեալք։

Նպաստընկալ Վարժարանք. — Ամպատեր, Ալամոնիկ, Ծիպեր, Պուսէյիտ։

—

16. ՃԱՆԻԿ

Առաջնորդ. — Տ. Յակոբ Եպ. Աշոտ Փափազեան։

Փոխանորդ. — Տ. Խորէն Քհնյ. Տիրատուրեան։

Կրօն. Ժողով. — Արիստակէս Քհյ. Թիւրեան, Եղիշէ քհյ. Ամատունի, Խորէն Քհյ. Տիրատուրեան։

Քաղ. Ժողով. — Կարապետ Թիւրապեան, Մնտ. Յաբեթ Գարագաշեան, Յարութիւն Տիլսիզեան, Յովհաննէս Կէօվշէնեան, Մնտ. Սիմոն Զաֆրազեան, Օհան Ասլանեան, Յարութիւն Գամպերեան, Նազարէթ Ղազարոսեան։

Եկեղեցիք. — Սամսոն՝ Ս. Նիկողայոս. — Պաֆրա՝ Ս. Կարապետ. — Զարշամպա՝ Ս. Աստուածածին. — Ալազամ. — Իւնիէ՝ Ս. Մինաս. — Ֆաթսա՝ Զարխափան Ս. Աստուածածին. — Զաթագ՝ Ս. Մինաս. — Օրթաօյմագ՝ Ս. Կարապետ. — Մարթիլ՝ Ս. Յակոբ Մծբնայ. — Թէքիւր՝ Ս. Աստուածածին. — Էօրէյիպէլ՝ Ս. Աստուածածին. — Գոնուգլուգ՝ Ս. Լուսաւորիչ. — Գապալագ՝ Ս. Էջմիածին. — Գուրշունլու՝ Ս. Գէորգ. — Գարաճալը կամ Գոճանամ պաշը՝ Ս. Յակոբ Մծբնայ. — Է-

քինճիք՝ Ս. Կարապետ. — Սուլուճա՝ Ս. Նշան. — Էլէմտաղի՝ Ս. Գէորգ. — Ֆիլիաս՝ Ս. Գէորգ. — Էօքիւզքէօյ՝ Ս. Լուսաւորիչ. — Աղուլուճ՝ Ս. Յակոբ Մծբնայ. — Գապաճէվիզ՝ Ս. Կարապետ.— Էյրի տէրէ՝ Ս. Լուսաւորիչ. — Կէօվճէքէօյ՝ Ս. Աստուածածին. — Աղճակիւնէ՝ Ս. Լուսաւորիչ. — Սթմասու՝ Ս. Խաչ. — Իւչքունար՝ Ս. Աստուածածին, Ս. Լուսաւորիչ. — Քէօքլիւկ՝ Ս. Կարապետ. — Պալչըգ՝ Ս. Աստուածածին. — Զըպըգլըգ՝ Ս. Յակոբ Գլխաղիր. — Եաղպասան՝ Ս. Յակոբ Մծբնայ։ Ընդամէնը 22 եկեղեցի։

—

17. ԹՐԱՊՈՒԶԱՆ

Առաջնորդ. — Տ. Եղնիկ Վրդ. Պապեան։

Փոխանորդ. — Տ. Բարթողիմէոս Քհնյ. Սարաճեան։

Կրօն. Ժողով. —

Քաղ. Ժողով. — Կարապետ Պոյաճեան, Մեսրոպ Ելմանեան, Միսաք Կիւրճեան, Մկրտիչ Գարակէօզեան, Մկրտիչ Մինասեան, Յակոբ Գրիգորեան, Օննիկ Մախոխեան։

Եկեղեցիք. — Թրապուզան՝ Ս. Օգսենտիոս, Ս. Յովհաննէս. — Զեֆանոս՝ Ս. Թորոս. — Կոմոկլա՝ Ս. Լուսաւորիչ. — Ս. Փրկիչ.—Վերանա՝ Ս. Սարգիս, Ս. Աստուածածին.—Շանա՝ Ս. Գէորգ, Ս. Թորոս, Ս. Սարգիս.— Ղալինոս՝ Ս. Աստուածածին, Ս. Յովհան, Ս. Կարապետ. — Երեմոնաս՝ Ս. Լուսաւորիչ, Նորաշէն. — Կալաֆկա՝ Ս. Գէորգ, Ս. Լուսաւորիչ. — Ասպին՝ Ս. Լուսաւորիչ. — Սնիֆա՝ Ս. Գէորգ, Ս. Լուսաւորիչ, Ս. Յարութիւն. — Մալա՝ Ս. Լուսաւորիչ, Ս. Սարգիս. — Կիւ-

միւշխանէ՝ Ս. Աստուածածին. — Էլէվլու՝ Ս. Լուսաւորիչ. — Դրիպոլի՝ Ս. Աստուածածին. — Կիրասոն՝ Ս. Սարգիս, Ս. Լուսաւորիչ. — Դէլգիտ՝ Ս. Աստուածածին. — Շէյրան՝ Ս. Զարխափան. — Օրտու՝ Ս. Աստուածածին. — Զամաշ՝ Ս. Լուսաւորիչ. — Մուսագրբդ՝ Ս. Կիրակոս. — Քելթեփէ՝ Ս. Անտոն. — Խոճօղլու՝ Ս. Լուսաւորիչ. — Սալլար՝ Ս. Լուսաւորիչ ու Ս. Սարգիս. — Խոչկէլիր՝ Ս. Յովհաննէս. — Պաղարսու՝ Ս. Յակոբ. — Գուշճի էօրէն՝ Ս. Թորոս. — Ալաճատաս՝ Ս. Սարգիս. — Սայաճա՝ Ս. Աստուածածին. — Գրմա՝ Ս. Յակոբ. — Պուլթան՝ Ս. Անտոն. — Գադըր՝ Ս. Լուսաւորիչ. — Զաթաղ՝ Ս. Յակոբ. — Ֆոտանա՝ Ս. Աստուածածին. — Թեքէքէօյ Ս. Թորոս։ Ընդամէնը 36 եկեղեցի։

Վանորայք. — Թրապուզան՝ Ս. Փրկիչ. — Կիւմիւշխանէ՝ Ս. Փրկիչ. — Դէլգիտ՝ Ս. Սարգիս։

—

18. 19. 20. ԷՐԶՐՈՒՄ—ԲԱՍԵՆ—ԴԵՐՋԱՆ

Առաջնորդ. — Զաւէն Ծ. Վրդ. Տէր-Եղիսեան։

Փոխանորդ. — Տ. Ներսէս Քհնյ. Վահանեան։

Կրօն. Ժողով. — Գաբրիէլ Քհնյ. Զմոյեան, Եղնիկ Քհնյ. Գէորգեան, Ներսէս Քհնյ. Վահանեան, Վահրամ Քհնյ. Պոտոսեան, Զարեհ Քհնյ. Շիշէեան, Հմայեակ Քհնյ. Մուրատեան։

Քաղ. Ժողով. — Առաքել Աւետիսեան, Բարսեղ Տ. Ազարեան, Խաչատուր Ինճիճեան, Մարտիրոս Գավաֆեան, Մկրտիչ Տ. Աստուածատուրեան, Յակոբ Էպէկեան, Սարգիս Հանէսեան։

Եկեղեցիք. — Էրզրում՝ Ս. Աստուածածին. — Կան՝

Ս. Ամենափրկիչ. — Զիֆթլիկ՝ Ս. Հրեշտակապետ. — Շինոց՝ Ս. Յովհաննէս. — Սօուգ-Ջերմուկ՝ Ս. Հրեշտակապետ. — Կէզ՝ Ս. Մինաս. — Արչունի՝ Ս. Մինաս. — Պատիշէն՝ Ս. Գէորգ. — Օձնի՝ Ս. Երրորդութիւն. — Գոմք՝ Ս. Յակոբ. — Ըղտաճոր՝ Ս. Յակոբ. — Երկնիսա՝ Ս. Հրեշտակապետ. — Ուսմուտում՝ Ս. Յակոբ. — Դըլնիկ՝ Ս. Աստուածածին. — Արծաթի՝ Ս. Նշան. — Դինարիգոմ՝ Ս. Մինաս. — Հինճք՝ Ս. Խաչ. — Գրդրլքիլիսէ՝ Ս. Նշան. — Շիփէկ՝ Ս. Մինաս. — Զիթող՝ Ս. Աստուածածին. — Խարարդ՝ Ս. Աստուածածին. — Մուսուրկա՝ Ս. Յակոբ. — Իլիճէ՝ Ս. Աստուածածին. — Գարահասան՝ Ս. Աստուածածին. — Թուանջք՝ Ս. Ամենափրկիչ. — Գեղախոռ՝ Ս. Սարգիս. — Ճինխ՝ Ս. Գէորգ. — Ապըլհինտի՝ Ս. Աստուածածին. — Կրիճք՝ Ս. Խաչ. — Բլուր՝ Ս. Գէորգ. — Նորչէն՝ Ս. Յակոբ. — Սէօյիւտլի՝ Ս. Յարութիւն. — Մնկառիճ՝ Ս. Մինաս. — Սալաճոր՝ Ս. Սարգիս. — Էօզպէկ՝ Ս. Թադէոս Բարթուղիմէոս. — Թոփալ չաւուշ՝ Ս. Յովհաննէս. — Վերին գեղ՝ Ս. Աստուածածին։

Վանորայք. — Մուսուրկա՝ Ս. Լուսաւորիչ. — Հինճք՝ Կարմիր վանք. — Խաչկայ վանք՝ Ս. Խաչ։

Դերջան. Բաղառիճ՝ Ս. Յակոբ. — Խաչիկեան գոմ՝ Ս. Նշան. — Փիրիզ՝ Ս. Ստեփանոս. — Հողէք՝ Ս. Փրկիչ. — Վարդուկ՝ Ս. Գէորգ. — Ղուլար՝ Ս. Նշան. — Կոթեր՝ Ս. Գէորգ. — Սարբգայա՝ Ս. Աստուածածին. — Ապրանք՝ Ս. Փրկիչ. — Ղուրուղղ՝ Ս. Գէորգ. — Զինրս՝ Ս. Յովհաննէս. — Զանաքճի՝ Ս. Մինաս. — Ազադեր՝ Ս. Կարապետ. — Ծաղկարի՝ Ս. Աստուածածին. — Վժան՝ Ս. Աստուածածին. — Խազախ վերի՝ Ս. Յակոբ. — Խազախ վարի՝ Ս. Աստուածածին. — Խարխին՝ Ս.

Աստուածածին. — Դըլնիկ՝ Ս. Սարգիս. — Սառնբերդակ՝ Ս. Լուսաւորիչ. — Մանց՝ Ս. Սարգիս. — Ագրակ՝ Ս. Թէոդորոս. — Բիւլբ՝ Ս. Գէորգ. — Գարա դուլաք՝ Ս. Վարդանանք. — Խնձրի՝ Ս. Թադէոս. — Զամուրտերէ՝ Ս. Աստուածածին. — Աստոյիդոմ՝ Ս. Սարգիս. — Խաչգեղ՝ Ս. Յովհաննէս։

Վանորայք. — Ապրանք՝ Ս. Դաւիթ, Սրբգլը Ս. Թորոս կամ Սորոր Սեղեմուտ վանք։

Բասեն. Հասան գալէ՝ Ս. Փրկիչ. — Թորդան՝ Ս. Սարգիս. — Հերթև՝ Ս. Աստուածածին. — Կուտապաղ՝ Ս. Սարգիս. — Հրատոն՝ Ս. Աստուածածին. — Տոտի՝ Մայր-Աստուածածին. — Ալիճեքրէկ՝ Մայր-Աստուածածին. — Խոսրովերան՝ Ս. Աստուածածին. — Թոսեվերէն՝ Ս. Աստուածածին. — Իշխու՝ Ս. Յարութիւն. — Եկուեր՝ Ս. Աստուածածին։ Ընդամէնը 133 եկեղեցի։

Վանք. — Բասենի Ս. Աստուածածին։

—

21. ԵՐԶԻՆԿԵԱՆ

Առաջնորդ. — Տ. Դանիէլ Ծ. Վրդ. Յակոբեան։

Փոխանորդ. — Տ. Վարդան Քհնյ. Զաքարեան։

Կրօն. Ժողով. — Եղեկիէլ Ա. Քհնյ. Տ. Կարապետեան, Թովմաս Քհնյ Թովմասեան, Վարդան Քհնյ. Զաքարեան, Ղեւոնդ Քհնյ. Աւետիսեան, Ղեւոնդ Քհնյ. Ժամակոչեան։

Քաղ. Ժողով. — Աւագ Զէօկիւրեան, Մարուքէ Կապուտիկեան, Միքայէլ Դանիէլեան, Յովհաննէս Լեփեան, Նշան Քաջեան։

Եկեղեցիք. — Երզինկեան՝ Ս. Նշան, Ս. Երրորդութիւն, Ս. Փրկիչ, Ս. Սարգիս, Ս. Աստուածածին. — Ղարաթուչ՝ Ս. Աստուածամայր. — Մեղուցիք՝ Ս. Նշան, Ս. Կարապետ. — Մեծ-Ագրակ՝ Ս. Գէորգ. — Հոռոմ-Ագրակ՝ Ս. Կիրակոս. — Ծաթեր՝ Ս. Աստուածածին. — Մոլլաքէօյ՝ Եղնաբեր Ս. Աստուածածին. — Երկան՝ Ս. Աստուածածին. — Կէօլէնցիք՝ Ս. Թադէոս. — Տաճրակ՝ Ս. Աստուածածին. — Խնձորիկ՝ Ս. Գէորգ. — Վերի Զիգիթլիկ՝ Ս. Աստուածածին. — Վարի Զիգիթլիկ՝ Մայր-Աստուածածին. — Գարատիկին՝ Ս. Հրեշտակապետ. — Մահմուտիյէ՝ Ս. Ստեփանոս. — Կիւլիճէ՝ Ս. Գէորգ. — Մթնի Ս. Յակոբ. — Գոլչէքէն՝ Ս. Հռիփսիմէ. — Սրպիհան՝ Ս. Օհան. — Հայրապետ՝ Ս. Լուսաւորիչ։

Գուզիջան. Տանձիկ՝ Ս. Սարգիս. — Բերկրի՝ Ս. Մինաս. — Կերանուտ՝ Ս. Սարգիս։

Կերճանիս = Բիգահիյէ. Մելիքչերիք՝ Ս. Աստուածածին. — Հոռոփուլ՝ Ս. Աստուածածին։

Գուրուչայ. Մեծ-Արմտան՝ Ս. Աստուածածին. — Փոքր-Արմտան՝ Ս. Աստուածածին. — Թեղուտ՝ Ս. Գէորգ. — Հասանովա՝ Ս. Աստուածածին. — Սպուչտա՝ Ս. Թորոս. — Տանձի։ Ընդամէնը 33 եկեղեցի։

Վանորայք. — Երզինկեան՝ Զարչարանաց Ս. Լուսաւորիչ. — Թիլայ Ս. Հայրապետ, Շողակաթ Ս. Աստուածածին, Տիրաշէն Ս. Ներսէս, Ս. Նիկողայոս, Ս. Գէորգ, Միաւոր Ս. Կարապետ, Ս. Կիրակոս, Կայիփոսի Ս. Յակոբ։ Ղարաթուչ՝ Ս. Թադէոս-Բարթողիմէոս. — Գուզիջան՝ Ս. Թադէոս առաքեալ, Ս. Աստուածածին, Քառասուն մանկունք։ Ընդամէնը 11 վանք։

Նպաստընկալ Վարժարանք. — Մելիքչերիք, Խնձորիկ։

—

22. ՊԱՑՊՈՒՐԴ

Առաջնորդ. Տեղապահ. — Տ. Աբրահամիէս Վրդ. Խաչատուրեան։

Փոխանորդ.

Կրօն. Ժողով. — Գրիգոր Բհնյ. Յակոբեան, Դաւիթ Բհնյ. Կիւրեղեան, Ղեւոնդ Բհնյ. Խաչատուրեան, Միքայէլ Բհնյ. Մարտիրոսեան, Յովհաննէս Բհնյ. Տ. Յովհաննէսեան, Նազարէթ Բհնյ. Յակոբեան, Վահրիճ Բհնյ. Տ. Բենիամինեան։

Քաղ. Ժողով. — Դաւիթ Մինասեան, Առաքել Մարգարեան, Եփրեմ Ներսէսեան, Խաչատուր Փիլիպոսեան, Յարութիւն Սիմոնեան, Սիմոն Կարապետեան։

Եկեղեցիք. — Պայպուրդ՝ Ս. Աստուածածին, Ս. Հրեշտակապետ, Ս. Յակոբոս, Ս. Նշան, Ճիկրաշէնի Ս. Աստուածածին. — Վարդահան՝ Ս. Աստուածածին, Ս. Համբարձում. — Թոմնա՝ Ս. Համբարձում. — — Փնչրկա՝ Ս. Աստուածածին. — Խնձաւերակ՝ Ս. Գէորգ. — Երկ՝ Ս. Լուսաւորիչ. — Պալախոր՝ Ս. Կարապետ, Ս. Լուսաւորիչ. — Օձաեղ՝ Ս. Յակոբ, Ս. Թորոս, Ս. Աստուածածին. — Բուռմէլ՝ Ս. Աստուածածին. — Ալմկա՝ Ս. Աստուածածին. — Ղոփուզ՝ Ս. Փրկիչ. — Բուչտի՝ Ս. Յովհաննէս Մկրտիչ. — Բլրակ՝ Ս. Աստուածածին. — Քանդա՝ Ս, Աստուածածին. — Բլուր՝ Ս. Գէորգ. — Կիւ՝ Ս. Աստուածածին. — Խայէք՝ Ս. Աստուածածին. — Ջարմանց՝ Ս. Աթանագինէ. — Մալասա՝ Ս. Յովհաննէս. — Աւերակ՝ Ս. Աստուածածին. — Քարավրաք՝ Ս. Աստուածածին, Ս. Գէորգ. — Հոտէ՝ Ս. Աստուածածին. — Սարաճուզ՝ Ս. Սարգիս. — Առիւծկայ՝ Ս. Աստուածա-

ծին. — Գրչի՝ Ս. Պօղոս. — Լուսահոնք՝ Ս. Աստուածածին. — Սըղբրճի՝ Ս. Խաչ. — Նիւ՝ Ս. Աստուածածին։ Ընդամէնը 30 եկեղեցի։

Վանորայք. — Ս. Քրիստափոր, Ս. Լուսաւորիչ։

Նպաստընկալ վարժարանք. — Պայպուրդ, Քանդա, Լուսահոնք։

—

23. ՔՂԻ

Առաջնորդ ընտրեալ. — Տ. Գնել Վրդ. Գալէմքեարեան։

Առաջն. Փոխանորդ. — Բարսեղ Բհյ. Օհանեան։

Կրօն. Ժողով. —

Քաղ. Ժողով. — Թովմաս Մ. Խարբուրդլեան. — Յակոբ Ե. Սամուէլեան, Յովհաննէս Հ. Աճէմեան, Աւետիս Քաջբերունի, Թորոս Տ. Խաչատուրեան, Մարտիրոս Ալէմեան, Մկրտիչ Խաչմաթեան։

Եկեղեցիք. — Քղի-Գասապա՝ Ս. Յակոբ, Ս. Սարգիս. — Ճրպր՝ Ս. Աստուածամայր. — Ղաղի՝ Ս. Եղիա. — Ալփըզուտ՝ Ս. Սարգիս. — Առէք՝ Ս. Յովհաննէս, Ս. Գէորգ. — Ծերմակ՝ Ս. Գէորգ. — Դարման՝ Ս. Սարգիս. — Ապոզնակ՝ Ս. Յակոբ. — Յոռնակ՝ Ս. Մինաս. — Աստիսերդ՝ Ս. Սարգիս. — Օրոր՝ Ս. Աստուածածին. — Զարիոլաշ՝ Ս. Յովհաննէս. — Զանագճի՝ Ս. Կիրակոս. — Զան՝ Ս. Մինաս. — Քերբոս՝ Ս. Սարգիս. — Աւրանիկ՝ Ս. Երրորդութիւն. — Զեւլէպի՝ Ս. Թորոս. — Հոզաս՝ Ս. Աստուածամայր. — Խուփա՝ Ս. Կարապետ. — Սերկեւիլ՝ Ս. Աստուածածին. — Սեղանք՝ Ս. Մինաս. — Ալթուն-Հիւսէյնիկ՝ Ս. Սարգիս. — Հերտիճ՝ Ս. Գէորգ. — Սագաճոր՝ Ս. Սարգիս. — Հագստուն՝ Ս. Խաչ. — Տինէկ՝ Ս. Աստուածածին. — Սաինճ՝ Ս. Փրկիչ. — Գարապէյ՝ Ս. Մինաս. — Մելիքան՝ Ս. Աստուա-

ծածին. — Զերման՝ Ս. Գէորգ. — Ամառիճ՝ Ս. Վարդան. — Խուպէկ՝ Ս. Աստուածածին. — Ագրակ՝ Ս. Մինաս. Խոչքար՝ Ս. Նիկողոս. — Շէն՝ Ս. Յակոբ. — Գլըչպուդ՝ Ս. Սարգիս. — Լճիկ՝ Ս. Սարգիս. — Զիֆթլիք՝ Ս. Աստուածածին. Ընդամէնը 47 եկեղեցի։

Վանորայք. — Յոսնակ՝ Ս. Կիրակոս, Առէք՝ Գեղանայեաց Ս. Աստուածածին, Հաղբատուն՝ Ս. Կարապետ, Սերկեւիլ՝ Ս. Փրկիչ։

Նպաստընկալ վարժարանք. Բղի-Գասապա, Սոլնճ, Մելիքան, Քերբոս, Զելէպի։

—

24. ԲԵՄԱԽ

Առաջնորդ. — Տ. Դանիէլ Ծ. Վրդ. Յակոբեան։

Առաջ. Փոխանորդ. — Տ. Մարկոս Քհնյ. Ուզունեան։

Կրօն. Ժողով. —

Քաղ. Բողով. —

Եկեղեցիք. — Բեմախ՝ Ս. Աստուածածին. — Վերի Բաղարիճ՝ Ս. Աստուածածին։ — Յուսի՝ Ս. Աստուածածին. — Հաղարք՝ Ս. Աստուածածին. — Գոմեր՝ Ս. Աստուածամայր. — Թաւկներ՝ Ս. Աստուածածին. — Կառնի՝ Ս. Թորոս. — Թորդան՝ Ս. Յարութիւն։ Ընդամէնը 11 եկեղեցի։

Վանորայք. — Ս. Թադէոս, Ս. Լուսաւորիչ, Ս. Փրկիչ, Սերովբէ-Քերովբէ, Արեգակ Ս. Նշան։

—

25. ՊԱՅԱԶԻՏ - ԱԼԱՇԿԵՐՏ

Առաջ. Տեղապահ. — Տ. Էմմանուէլ վրդ. Պալեան։

Փոխանորդ. — Տ. Ներսէս Քհնյ. Քաջբերունի։

Կրօն. Ժողով. —

Քաղ. Ժողով. —

Եկեղեցիք. — Պայազիտ՝ Ս. Կարապետ, Ս. Ծիրանաւոր. — Ալաշկերտ. Թոփրագ գալէ՝ Ս. Աստուածածին. — Մէյրամանէ՝ Ս. Աստուածածին. — Սրծաք՝ Ս. Աստուածածին. — Գորուն՝ Ս. Սարգիս. — Մուսուն՝ Ս. Ստեփանոս. — Շուշան՝ Ս. Աստուածածին. — Գումլու պուլաղ՝ Ս. Կարապետ. — Զիրոյ՝ Ս. Յարութիւն. — Բիւփրան՝ Ս. Ստեփանոս. — Մանկասար՝ Ս. Յարութիւն. — Համատ՝ Երեք խորան Ս. Աստուածածին. — Խաչլու՝ Ս. Աստուածածին. — Մոլլա Սիւլէյման՝ Ս. Յակոբ. — Զեռական՝ Ս. Գէորգ. — Խաստուբ՝ Ս. Աստուածածին. — Եահնիթեբէ՝ Ս. Ստեփանոս. — Գայապէկ՝ Ս. Աստուածածին. — Բաղնոց՝ Ս. Ստեփանոս. — Գըզըլգայա. — Խըտրբ. — Սչխալի. — Երանոս՝ Ս. Յակոբ. — Խոչեան՝ Ս. Յակոբ. — Սարբպէղ՝ Ս. Մինաս։ Ընդամէնը 32 եկեղեցի։

Վանորայք. — Ս. Յովհաննէս Բագրեւանդայ։

Նպաստընկալ Վարժարանք. — Թոփրագ գալէ, Խաստուբ գիւղ։

—

26. ՎԱՆ

Առաջնորդ. — Տ. Սահակ եպ. Բագրեւանդեան։

Փոխանորդ. —

Կրօն. Ժողով. —

Քաղ. Ժողով. — Գալուստ Ճիտեճեան. — Վահան Մուրքեան, Մկրտիչ Մաքսապետեան, Կարապետ Իսահանեան, Աւետիս Թէրզիպաշեան, Համբարձում Հիւսեան, Սահակ Գալճեան։

Եկեղեցիք. — Վան՝ Ս. Էջմիածին, Ս. Պօղոս, Ս. Առաք-

եալ , Ս. Տիրատայր , Ս. Վարդան , Ս. Սահակ , Ս. Ծիրանաւոր , Ս. Աստուածածին , Ս. Յակոբ . — Արտամէտ՝ Ս. Աստուածածին . — Ծովքստան՝ Ս. Գէորգ . — Բերդակ՝ Ս. Յովհաննէս . — Կենդանանց՝ Ս. Աստուածածին . — Դուրու պաշ՝ Ս. Ստեփանոս . — Շուշանց՝ Ս. Գէորգ . Սիսակ՝ Ս. Աստուածածին . — Լամզկերտ՝ Ս. Յովհաննէս . — Կողպանց՝ Ս. Գէորգ. — Դարման՝ Ս. Սարգիս . — Ոսկերակ՝ Ս. Աստուածածին . — Սեւան՝ Ս. Ստեփանոս . — Կարդալան՝ Ս. Աստուածածին . — Ղասպիտան՝ Ս. Աստուածածին . — Պողազքեսան՝ Ս. Աստուածածին . — Շաւշատէն՝ Ս. Ստեփանոս . — Զագմագ՝ Ս. Աստուածածին . — Խարակոնիս՝ Ս. Թորոս . — Արջուկ՝ Ս. Գէորգ . — Մինկեր՝ Ս. Յարութիւն . — Զոպանօղլու՝ Ս. Յովհաննէս . — Գուանինց՝ Ս. Ստեփանոս. — Շահպաղի՝ Ս. Ստեփանոս. — Լեզք՝ Ս. Ամենափրկիչ. — Աւանց՝ Ս. Աստուածածին . — Ճուաշէն՝ Ս. Աստուածածին ։

Նորsուզ . Մաքօշք՝ Ս. Սարգիս . — Շէֆրալ՝ Ս. Գէորգ. — Բիրպատեղէն՝ Ս. Սարգիս . — Հոստեան՝ Ս. Ստեփանոս , Կողա՝ Ս. Խաչ. — Կանկուտ՝ Ս. Թադէոս ։

Աsիլեւվազ՝ Ս. Աստուածածին , Ս. Սարգիս . — Նորշէն՝ Ս. Ամենափրկիչ . — Ներքին Սիսիան՝ Ս. Յարութիւն . — Վերին Սիսիան՝ Ս. Յարութիւն . — Յաղէն՝ Ս. Լուսաւորիչ . — Անդկուս՝ Ս. Գէորգ , Ս. Յարութիւն . — Աւգրայ՝ Ս. Աստուածածին . — Գարաքէշիշ՝ Ս. Գողգոթա . — Գազուխ՝ Ս. Աստուածածին ։

Բերկրի՝ Ս. Աստուածածին . — Յաւեղ՝ Ս. Աստուածածին . — Անձաւ՝ Ս. Աստուածածին ։

Արեհ . Ականց՝ Ս. Գէորգ , Ս. Թադէոս . — Իրիշատ՝ Ս. Աստուածածին . — Յաստիանակ՝ Ս. Ստեփանոս .

— Բերթազ՝ Ս. Աստուածածին . — Թոնտրակ՝ Ս. Յովհաննէս . — Ծագծագ՝ Ս. Յովհաննէս ։ Ընդամէնը 114 եկեղեցի ։

Վանօրայք. — Վարագայ Ս. Նշան , Կարմրուոր Ս. Աստուածածին , Սալնապատու Ս. Գրիգոր, Ս. Աստուածածին , Ս. Ամենափրկիչ , Ս. Սահակ , Ս. Էջմիածին , Ստիլճիվազի Սքանչելագործ Ս. Յարութիւն , Ս. Յովհաննէս եւն. ։ Ընդամէնը 25 վանք ։

—

27. ԼԻՄ-ԿՏՈՒՑ

Վանահայր Լիմայ . — Տ. Սահակ Եպ. Բագրեւանդեան ։

Վանահայր Կտուցայ . — Տ. Ստեփան Վրդ. Աղազատեան ։

Եկեղեցիք . — Կտուց Անապատ . — Ալիւր՝ Ս. Լուսաւորիչ . — Խաւենց՝ Ս. Աստուածածին . — Անանավանք՝ Ս. Աստուածածին . — Ամենաչատ՝ Ս. Աստուածածին . — Եիմազ . — Մարմէտ՝ Ս. Գէորգ . — Ճիկրաչէն ։ Ընդամէնը 24 եկեղեցի ։

Վանօրայք . — Լիմայ Ս. Գէորգ . — Կտուցայ Ս. Կարապետ . — Ալիւրի Ս. Աստուածածին , եւն. ։ Վանք 8 ։

—

28. ՊԻԹԼԻՍ

Առաջնորդ ընտրեալ.—Տ. Եղնիկ Ծ. Վրդ. Գալիազեան ։

Փոխանորդ . — Տ. Պետրոս Վրդ. Շահինեան ։

Կրօն. Ժողով . — Բարսեղ Քհնյ. Սարգիսեան , Գէորգ Քհնյ. Գէորգեան , Գէորգ Քհնյ. Տուրնեան , Մեսրոպ Քհնյ. Տ. Սարգիսեան , Ղազարոս Քհնյ. Յովհաննէսեան ։

Քաղ. Ժողով . — Խաչմանուկ Պասմաճեան , Ճերճիզ

Գրիգոեան, Մովսէս Բոպիկեան, Մուշեղ Մխեան, Սարգիս Քենտէրեան, Կարապետ Խաչմանուկեան, Սերովբէ Շողիկեան, Աղաճան Պաղդալեան, Մովսէս Բարիկեան։

Եկեղեցիք. — Պիթլիս՝ Կարմրակ Ս. Կիրակոս, Ս. Սարգիս, Հինգիսրան Ս. Աստուածածին. — Պոռ՝ Ս. Աստուածածին. — Բարչէն՝ Ս. Ամենափրկիչ. — Կամախ՝ Ս. Քառասուն Մանուկ. — Կորվու՝ Մայր Աստուածածին, Ս. Յովհաննէս. — Խարտկոզ՝ Ս. Գէորգ. — Սմպ՝ Ս. Գէորգ. — Խմելջուր՝ Ս. Անտոն. — Մարգորդ՝ Ս. Գէորգ. — Փարխանդ՝ Ս. Աստոմ. — Հէօրմիւզ՝ Ս. Քրիստափոր. — Դատուան՝ Ս. Թէոդորոս. — Շամիրամ՝ Ս. Սարգիս. — Զրնոր՝ Ս. Աստուածածին. — Ուրտափ՝ Ս. Գէորգ, Ս. Աստուածածին. — Սլամէք՝ Ս Կարապետ. Թուխ՝ Ս. Աստուածածին. — Աղքձոր՝ Ս. Սարգիս. — Ծուար՝ Ս. Աստուածածին. — Խախու՝ Ս. Յակոբ. — Տատիկ՝ Ս. Աստուածածին. — Վանրկ՝ Ս. Գէորգ. — Ծղկամ՝ Ս. Թէոդորոս. — Կեխոր՝ Ս. Եղիշէ. Կալհոկ՝ Ս. Գէորգ. — Պաս՝ Ս. Գէորգ, Ս. Աստուածածին. — Ոսոին՝ Ս. Գէորգ. — Մոճկոնք՝ Ս. Աստուածածին, Ս. Յովհաննէս. — Խուլթիկ՝ Ս. Գէորգ.—Ծղակ՝ Ս. Յովհաննէս. — Կծուակ՝ Ս. Գէորգ. — Կոչտեան՝ Ս. Նիկողայոս. — Մեծք՝ Ս. Ստեփանոս. — Թեղուտ՝ Ս. Ստեփանոս, Ս. Գէորգ.— Սոխորդ՝ Ս. Աստուածածին. — Խարապաչէկիր՝ Ս. Աստուածածին. — Սգրակ՝ Երեք խորան. — Յերսունք՝ Ս. Թէոդորոս. — Սփռաձոր՝ Ս. Ստեփանոս. — Ծաղկէ՝ Ս. Դանիէլ. — Կամուրջ՝ Ս. Աստուածածին, Ս. Դանիէլ. — Խուլիկ՝ Ս. Սարգիս. — Զղիրէ՝ Ս. Մինաս. — Մատնավանք՝ Ս. Գէորգ. — Փրխուս՝ Ս. Ստեփանոս. — Խարթ՝ Ս.

Գէորգ. — Յորձուկ՝ Ս. Խաչ. — Կարբ՝ Ս. Սիմէոն. — Տոփ՝ Ս. Սարգիս. — Սագ՝ Ս. Գէորգ. — Կատոմ՝ Ս. Սարգիս. — Տաչտոփ՝ Ս. Յովհաննէս. — Ցանդ՝ Ս. Ստեփանոս. — Մուշաղչէն՝ Ս. Գէորգ.— Քրսխամ՝ Ս. Աստուածածին. — Վանրկ՝ Ս. Քառասուն մանուկ.—Խնձորգին՝ Ս. Սարգիս. — Ծապոր՝ Ս. Գէորգ. — Տափավանք՝ Ս. Աստուածածին։ Ընդամէնը 100 եկեղեցի։

Վանորայք. — Պիթլիս՝ Խնդրակատար Ս. Աստուածածին. —Սէլերդոյ Ս. Յովհաննէս. — Գոմոց Ս. Աստուածածին. — Սեւեխի Ս. Թադէոս առաքեալ. — Ծապրիկորի Ս. Կարապետ. — Տաթիկի Ս. Աթանագինէ. — Սխլաթ-Թեղուտի Ս. Յովհաննէս. — Մատնավանքի Ս. Աստուածածին. — Պորի Ս. Նարեկ, եւն.։ Ընդամէնը 11 Վանք։

Նպաստընկալ վարժարանք. Խուլթիկ, Թեղուտ, Դատուան ու Փարխանդ։

—

29. ՄՈՒՇ

Ընդհ. վանահայր և Պատր. փոխանորդ. — Տ. Խոսրով Ծ. Վրդ. Պէհրիկեան։

Կրօն. Ժողով. — Վահան Վրդ. Երէցեան, Եղիշէ Քնդ. Ալամշարեան, Մուշեղ Քնդ. Տօնապետեան, Յովհաննէս Քնդ. Յովհաննէսեան, Յովհաննէս Քնդ. Տ. Աստուածատուրեան, Սահակ Քնդ. Բոստանեան, Քերովբէ Քնդ. Տ. Սերովբեան։

Քաղ. Ժողով. Արմենակ Խանաղայեան, Դասապար Զոլիկեան, Մնա. Կարապետ Բալեան, Մարտիրոս Սահակեան, Յովհաննէս Սէրունի, Նազարէթ Քէշիշեան, Պողոս Մովսէսեան։

Եկեղեցիք. — Մուշ՝ Ս. Մարինէ, Ս. Յարութիւն, Ս.

Աստուածածին, Ս. Սարգիս, Ս. Գէորգ, Ս. Կիրակոս. — Մոկունք՝ Ս. Աստուածածին. — Տերկևանք՝ Ս. Թորոս. — Խոբեր՝ Ս. Աստուածածին. — Բքլից՝ Ս. Գէորգ. — Ալիճան՝ Ս. Աստուածածին. — Ցրոնք՝ Ս. Սարգիս, Ս. Յակոբ. — Դըմնիկ՝ Ս. Դաւիթ. — Ուշտամ՝ Ս. Աստուածածին. — Սրտոնք՝ Ս. Աստուածածին. — Ղարձ՝ Ս. Աստուածածին. — Սրքավանք՝ Ս. Թովմաս, Ս. Լուսաւորիչ. — Սուլուք՝ Ս. Պօղոս Պետրոս. — Կուրավու՝ Ս. Աստուածածին. — Տէրըք՝ Ս. Սահակ Հայրապետ. — Զիարէթ՝ Ս. Աստուածածին, Ս. Ստեփանոս. — Ղէյպեան՝ Ս. Թուխմանուկ. — Գոմ՝ Ս. Յակոբ. — Շէյխլան՝ Ս. Աստուածածին. — Գըզլլ աղաճ՝ Ս. Գէորգ. — Շէնըք՝ Ս. Յակոբ. — Գոմեր՝ Ս. Քառասուն Մանուկ. — Բիթմէյտան՝ Ս. Մինաս. — Մեղտի՝ Ս. Միանձունք. — Սալըքան՝ Ս. Յակոբ. — Այիբունան՝ Ս. Յակոբ. — Սոխգոմ՝ Ս. Սահակ. — Արաղ՝ Ս. Սահակ. — Մկրադոմ՝ Ս. Կիրակոս. — Խասքէօ Ս. Ստեփանոս, Ս. Երրորդութիւն, Ս. Թալիա. — Վարդենիս՝ Ս. Աստուածածին. — Թիլն՝ Ս. Աստուածածին. — Խորոնք՝ Ս. Աստուածածին։

Վանորայք. — Մշոյ Ս. Կարապետ, Ս. Յովհաննէս, Ս. Առաքելք, Մանավանք, Կոփայ, Ս. Դանիէլ, Ս. Աղբերիկ, Ս. Մատին Առաքեալ։

Պուլանըգ. Եռնճալու՝ Ս. Աստուածածին. — Թեղուտ՝ Ս. Յակոբ. — Համզաշէյխ՝ Ս. Թուխմանուկ. — Խարագլը՝ Ս. Յակոբ. — Լաթար՝ Ս. Թադէոս. — Լիզ՝ Ս. Աստուածածին. — Խոշկերտ՝ Ս. Աստուածածին. — Մոլլաքար՝ Ս. Յակոբ. — Մալազկերտ՝ Ս. Աստուածածին. — Ռոտամգիրուկ՝ Ս. Կարապետ. — Նորաշէն՝ Ս. Ստեփանոս. — Սրտանուտ՝ Ս. Աստուածածին. — Ռանջուր՝ Ս. Յովհաննէս.

— Գեղանք՝ Ս. Աստուածածին — Թաղաւան Ս. Յակոբ։ Ընդամէնը 102 եկեղեցի եւ 9 վանք։

Նպաստընկալ վարժարան. — Հաղզոյ գիւղ։

—

30. ՍԱՂԵՐԴ

Առաջնորդ. — Տ. Փառէն Վրդ. Մելգոնեան։

Կրօն. ժողով. — Եղիշէ Բ.ինդ. Մուրատեան, Զաքարիա Բ.ինդ. Յովհաննէսեան, Յարութիւն Բ.ինդ. Մալխասեան։

Քաղ. ժողով. — Յակոբ Փանոսեան, Յովսէփ Գէորգեան, Յակոբ Ամսէեան, Յակոբ Պասմաճեան, Մելգոն Նազիկանեան, Մուսա Զերաէլեան, Օհան Ղարիպճանեան։

Եկեղեցիք. — Սղերդ՝ Ս. Աստուածածին. — Պէքէնդ՝ Ս. Քառասուն Մանուկ. — Պերուարի՝ Ս. Աստուածածին. — Հէշէդ՝ Ս. Գէորգ. — Դաշտրգ՝ Ս. Ստեփանոս. — Հաքուք՝ Ս. Գէորգ. — Ռապանոքա՝ Ս. Աստուածածին. — Հաբիլանս՝ Ս. Աստուածածին. — Մալրգ՝ Ս. Գէորգ. — Սանս՝ Ս. Վարդան. Ուզիմ՝ Ս. Աստուածածին. — Տէհ՝ Ս. Աստուածածին, Ս. Յովհաննէս. — Միլիանս՝ Ս. Աստուածածին. — Բլվեկա՝ Ս. Գէորգ. — Քիւֆրէ՝ Ս. Յովհաննէս. — Քիքան՝ Ս. Աստուածածին. — Տէրզէն՝ Ս. Յովհաննէս. — Շմիլան՝ Ս. Աստուածածին. — Պէյթհարուն՝ Ս. Յարութիւն. — Տէրբապան՝ Ս. Աստուածածին — Սեմատար՝ Ս. Աստուածածին. — Տէրըք՝ Ս. Վարդավառ ու Ս. Էջմիածին. — Պըրք՝ Ս. Սարգիս. — Կէլին՝ Ս. Սարգիս. — Կիւրէնա՝ Ս. Գէորգ. — Սեռէրս՝ Ս. Յովհաննէս — Ճուտ՝ Ս. Կարապետ. — Նալին՝ Ս. Սարգիս. — Սէին՝ Ս.

Աստուածածին. — Զոգ՝ Ս. Աստուածածին. — Պերա՝ Ս. Կիրակոս. — Ճուվէզ՝ Ս. Աստուածածին. — Ճիմարիպ՝ Ս. Աստուածածին. — Տիւսէտիկ՝ Ս. Աստուածածին. — Ռնատուան՝ Ս. Գէորգ. Վանսըդ՝ Ս. Յակոբ. — Խենտուք՝ Ս. Գէորգ. — Պիմէր՝ Ս. Կարապետ. — Ճիֆֆան Ս. Եղիա. — Նորչէն՝ Ս. Կոնստանդին վանք։ Ընդ ամէնը 32 եկեղեցի։

Նպաստընկալ Վարժարանք. — Սղերդ, Ռնատուան, Պիմեր, Գուպին։

—

31. ՏԻԱՐՊԵՔԻՐ

Առաջնորդ. — Տ. Եղեկիել Ծ. Վրդ. Արշակունի։

Փոխանորդ. — Տ. Յովհաննէս Քհյ. Շահինեան։

Կրօն. Ժողով. —

Քաղ. Ժողով. —

Եկեղեցիք. — Տիարպէքիր՝ Ս. Կիրակոս, Ս. Սարգիս. — Հայնի՝ Ս. Աստուածածին. — Գարապաշ՝ Ս. Սիմէոն Սիւնակեաց. — Լրճէ՝ Ս. Աստուածածին. — Յոբաւ. — Ղարպ. — Ալիբունար՝ Ս. Աստուածածին. — Քեապի՝ Ս. Քրիստափոր. — Հայեղիկ՝ Ս. Եղիա. — Շամ՝ Ս. Յովկան. — Մուֆարղին՝ Ս. Սարգիս. — Հաղրոյ՝ Ս. Աստուածածին եւն։ Ընդ ամէնը 25 եկեղեցի։

Վանքեր. — Մակաբայեցիք, Ս. Թովմաս։ Ընդամէնը 5 վանք։

Նպաստընկալ վարժարանք. — Հաղրոյ, Սադի, Մուֆարղին։

—

32. 33. 34. ԲԱԼՈՒ - ԱՐՂՆԻ - ՉՆԲՈՒՇ

Առաջ. ընտրեալ. — Տ. Աղան Ծ. Վրդ. Համամեան։

Առաջն. Փոխանորդ. — Տ. Սուրէն Քհյ. Տիրոյեան։

Կրօն. Ժողով. —

Քաղ. Ժողով. —

